Արաս Միրզա
Կամանց



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

Арта Вираф намак

Юшти Фриан

Перевод с пехлевийского языка и комментарии
проф. Р. Ф. АБРАМЯНА

Издательство АН Армянской ССР
Ереван — 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.55
Ա-94

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

32779

Արտա Վիրազ Նամակ

Յոյշտի Ֆրիան

Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց
պրոֆ. Ռ. Թ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն
Երևան — 1958

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ․

A II/5767

Խմբագիր Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Թարգմանությունը տպագրության պատրաստեց
Բ. ՉՈՒԳԱՍԶՅԱՆԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Սասանյան հարստության տիրապետության ժամանակ (224/6—651 թ. մ. թ.) Իրանում փարթամորեն զարգացավ պահլավ գրականությունը: Այդ դարաշրջանում թափով աճեցին ոչ միայն ինքնուրույն գրական ստեղծագործությունները, այլև զանազան լեզուներից (հնդկերեն, ասորերեն և հունարեն) կատարված պատմական, փիլիսոփայական, մաթեմատիկական, բժշկական և այլ բովանդակության գրական հուշարձանների թարգմանությունները: Պահլավերեն թարգմանություններն էլ իրենց հերթին թարգմանվեցին արաբերեն և սրա միջոցով հետագայում հունարեն ու լատիներեն և տարածվեցին ամբողջ Եվրոպայում: Այսպես, օրինակ, Բիդհապատին վերագրվող «Կալիլա և Դիմնա» առակների ժողովածուն՝ թարգմանվելով հնդկերենից պահլավերեն, ապա թարգմանվեց արաբերեն, ապա լատիներեն և տարածվեց ամբողջ կուլտուրական աշխարհում:

Մահմեդականության տիրապետության դարաշրջանում պահլավ գրականությունը՝ ոչնչացման ենթարկվելով, կարողացավ իր երբեմնի հարստությունից միայն մի փոքր մաս հասցնել իր անմիջական օրինական ժառանգներին՝ զրադաշտական պարսիկներին Իրանում և Հնդկաստանում:

Մեզ հասած պահլավ գրականությունը կարելի է ըստ բովանդակության բաժանել երեք մասի. ա. «Ավեստա» — պահլավ թարգմանություն, վերծանություն և կոմենտարներ, բ. Կրոնա-բարոյախոսական երկեր («Բունդահիշն», «Դենկարտ» և այլն) և գ. Պատմակենցաղային և այլ աշխարհիկ բնույթի գրական հուշարձաններ («Կարնամակ-ի Արտաշիր-ի Բաբական», «Յադկար-ի Զարիրան», «Յուշտի Ֆրիան» և այլն):

Պահլավ գրական հուշարձանները ըստ մեծի մասին, հրատարակված, թարգմանված և ուսումնասիրված են եվրոպացի արևելագետների կողմից:

Պահլավագիտության մեջ իր լուման է մտցրել նաև հայ բանասիրական միտքը: Բացի մի շարք գիտահետազոտական աշխատություններից, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են պահլավ գրական հուշարձաններին՝ կապված հայկական պատմական-գրական խնդրադրությունների հետ, հայ պահլավագետները հատկապես զբաղվել են պահլավ գրական հուշարձանների թարգմանությամբ: Վերջինների մեջ առանձնահատուկ տեղ են

գրավում դոկտ. Հարություն Թիրյաքյանն ու պրոֆ. դոկտ. Ռուբեն Աբրահամյանը:

Հ. Թիրյաքյանի բեղմնավոր գրչին են պատկանում՝ բացի պահլավերենի ուսումնասիրությանը նվիրված հետաքրքրական աշխատություններից[1], նաև հետևյալ հուշարձանների թարգմանությունը, գիտական առաջաբաններն ու ծանոթագրությունները.

1. Կարնամակ Արտաշիր Բաբական, Փարիզ, 1906:

2. Ատրպատ Մարասպանդա անդարձ, Նյու-Յորք, 1909:

Գ. Գանձ Շայեկան, «Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1955:

Հ. Թիրյաքյանը թարգմանել է, բայց առանձին հնարավորություն չի եղել հրատարակելու նաև 1. «Խոսրով Կավատ», 2. «Փարսից Պերոզ», 3. «Մատյան ճատրակի»: Նա թարգմանել է նաև «Արտա Վիրազ նամակից» որոշ հատվածներ, որոնք հրատարակված են նրա «Հայ-իրանական ուսումնասիրությունք» աշխատության մեջ (էջ 134—162):

Պրոֆ. Ռ. Աբրահամյանն էլ իր հերթին պակաս եռանդ ու ջանք չի թափել պահլավերենի ուսումնասիրության բնագավառում: Բացի բազմամյա գիտա-մանկավարժական գործունեությու-

[1] Արիահայ բառարան, Վիեննա, 1914 և Հայ-իրանական ուսումնասիրությունք, Վիեննա, 1922:

նից, նա զբաղվել է նաև թարգմանությամբ. պահլավերենից թարգմանել է երկու գրական հուշարձան՝ «Արտա Վիրապը» և «Յոշտի Ֆրիանը», որոնք հետմահու այսօր հրապարակ են հանվում:

Հ. Թիրյաքյանի և Ռ. Աբրահամյանի թարգմանած պահլավերեն գրական հուշարձանները մեծ արժեք են ներկայացնում թե՛ պահլավ հոգևոր կուլտուրայի, մասնավորապես պահլավ գրականության կրոնա-բարոյական սկզբունքների ճանաչման, և թե՛ հայ հին գրականության, հեթանոսական կրոնի՝ հավատալիքների ու սնոտիապաշտությունների հետազոտության համար: Դրանք հարստացնում են մեր գիտելիքները, հնարավորություն են տալիս մեզ ավելի բազմակողմանի ճանաչելու պատմական Իրանի ու Հայաստանի, մասնավորապես նախաքրիստոնեական շրջանի կուլտուրաները:

Աշխարհիկ բնույթի պահլավ գրական հուշարձաններից «Կարնամակի» և «Յադկար-ի Զարիրանի» առնչությունը Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու «Հայոց պատմությունների», ինչպես նաև մեր հին ու նոր վեպերի հետ բավականաչափ լուսաբանված է հայկական բանասիրության մեջ[1]: Յավոք, «Յադկար-ի

[1] *Г. Халатьянц*, Армянские Аршакиды. Москва, 1903. Կ. Մելիք-Օհանջանյան, «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահ-Նամե»-ում ու հայ մատենագրության մեջ»: Տե՛ս «Ֆիրդուսի» ժողովածու, Երևան, 1934:

Զարիրանը» ամբողջին հայերեն չի թարգմանված:

Կրոնա-բարոյական բնույթի են «Ատրպատը» (Atūrpāt-ī Māraspandān), «Գանձ Շայեկանը», (Mātīgān-ī Ganj-ī šayegan), «Արտա Վիրապը» (Artā Vîrâf Nāmak): Կրոնա-բարոյական բնույթից ու բովանդակությունից զատ՝ այդ հուշարձանները պատկանում են նաև որոշ գրական ժանրերի, որոնց զուգահեռները գոյություն ունեն նաև հայ և օտար գրականություններում, և որոնց մանրամասն հետազոտությունը հետաքրքրական է և ճանաչողական մեծ նշանակություն ունի մասնավորապես մեր հին և միջնադարյան գրականության ուսումնասիրության համար:

Այսպես, այդ հուշարձաններից «Ատրպատն» ու «Գանձ շայեկանը» առնչություն ունեն մեր և այլ գրականությունների մեջ բավականաչափ ակնառու տեղ գրավող «Խրատք», «Խրատականք», «Խրատք հոգեշահ», «Բանք շահավետ», «Բանք շահեկանք», «Խրատք և հարցմունք», «Խրատք փիլիսոփայականք» վերտառություն կրող, ընդհանրապես անանուն հեղինակության համարվող հուշարձանների հետ: «Ատրպատում» ամփոփված «Հոր հոգեշահ խրատներից» շատերը կրկնվում են նաև մեր խրատականների մեջ, օրինակ՝

1. «Ինչ որ քեզ համար անբարի է, դու այլ ուրիշի մի անիր»[1]:

[1] Բոլոր օրինակները քաղել ենք Հ. Թիրյաքյանի վերոհիշյալ թարգմանությունից:

2. «Շատ ընչավետ մարդու հետ համխոր (ընկեր) մի՛ լինիր»:

3. «Արբեցող մարդու հետ համխոր մի՛ լինիր»:

4. «Որչափ որ կրնաս, խոսքով մարդ մի՛ վիրավորեր»:

5. «Եթե որդի ունենաս, մատաղ հասակեն դպրատան (դպրոց) տուր, քանզի դպրությունը աչաց ռոշնություն (լույս) է»:

6. «Հին բարեկամը նոր բարեկամ ըրե, քանզի հին բարեկամը այնպույն համայնակ է, գինույն հին գինի որ որչափ հնանա, այնչափ ախորժահամ և արքայավայել կլինի»:

7. «Ով որ իր թշնամվույն հոր կփորե, ինքը մեջը կիյնա»:

8. «Երբ որ հաջողություն ունենաս, շատ մի ուրախանար. եթե ձախողություն պատահի՝ շատ ավելի մի՛ վշտանար. վասնզի հաջողվածը ձախողվածի ժամանակ (ալ ունի), ձախողվածը՝ հաջողվածի. և բնավ վերելք չկա, որ շեպ չունենա յուրմե առաջ, և շեպ, որ վերելք չունենա իրմե ետքը»:

9. «Չորս բան կա, որով մարդ դժախտությամբ յուր անձին կհասնի. 1. բռնություն ընել. 2. մեծամիտ աղքատ (լինելով) ուրիշի հետ նավարդի (պայքար) ելնել. 3. չարահամ (չարաբարո) ծերը մանկամարդ կնոջ հետ ամուսնանալ. 4. երիտասարդը պառավի հետ ամուսնանալ»:

Այս և նման խրատականների գոյությունը մեր խրատական գրականության մեջ, հարկավ, երբեք

չի կարող դիտվել որպես փոխառություն պահլավերենից: Սրանք ամեն մի գրականության մեջ տվյալ ժողովրդի դարավոր կենսափորձի՝ հասարակական կյանքից բխող բարոյագիտական հակացությունների և նորմաների արտացոլքներն են աֆորիստիկ ձևով արտահայտված:

Ռ. Աբրահամյանի թարգմանած և այստեղ հրապարակվող հուշարձաններից մեկը՝ «Յուշտի Ֆրիանը» պատկանում է հին ու միջին դարերում խիստ տարածված հանելուկային գրական ժանրին: Այս ժանրի հուշարձաններում գործողությունը զարգանում է հանելուկներ առաջադրելու և լուծելու միջոցով, ընդ որում ստեղծվում են վերին աստիճանի սուր դրություններ, և դրանք դրվում են մասնակիցներին և ունկնդիրներին: Հանելուկների լուծման միջոցով գործողության զարգացումը շատ սիրված եղանակ (прием) է նաև մեր և օտար ժողովրդական բանահյուսության և մանավանդ հեքիաթների մեջ: Դրական հերոսը հաղթում է իր հակառակորդին՝ լուծելով նրա առաջարկած բոլոր հանելուկները, մինչդեռ չարը, բացասական հերոսը չի կարողանում բավարար լուծում տալ դրական հերոսի հանելուկներին: Մըրցման այս եղանակը մեծ չափով զարգացած է նաև աշուղական մրցահանդեսներում — բասերում:

Ռ. Աբրահամյանի թարգմանած և մանրամասն ծանոթագրած մյուս պահլավ գրական հուշարձանը «Արտա Վիրապն» (Artā Vîrâf) է:

Հուշարձանի բովանդակությունը, ինչպես նաև ծագման ժամանակաշրջանին վերաբերող հարցերը անհրաժեշտության սահմաններում լուսաբանված են թարգմանչի ներածության մեջ:

Արևելագիտության մեջ վաղուց գրված է «Արտա Վիրազի» և Դանթեի «Աստվածային կատակերգության» սյուժետային նմանությունը: Արևելագետ Մոդին անգամ մանրամասն զուգահեռ է անցկացնում Դանթեի «Աստվածային կատակերգության» և «Արտա Վիրազի» միջև („Dante and Virâf and Gârdis. Բոմբեյ, 1892)[1]:

Թարգմանչի նշած ժանրային զուգահեռների թիվը կարելի է էլ ավելի բազմացնել, նշելով նաև ասուրա-բաբելական, եգիպտական և այլ հնագույն ժողովուրդների հոգևոր կուլտուրայի բնագավառում առկա այլ զուգահեռներ, բայց բավականանանք դրանցով և միայն թռուցիկ հիշատակենք մեր հին գրականության մեջ առկա գրական զուգահեռները:

Նշելով «Արտա Վիրազի» սյուժեի լայն տարածումը հին և միջին դարերում, Ռ. Աբրահամյանը նաև մեջ է բերում Պլատոնի հաղորդած Էր Հայկազնի սյուժետային զուգահեռը, հիշատակում է, որ նույն այդ դրույցը հարատևած է Կղեմես Աղեքսանդրացու մոտ և վերագրված է Զորոաստրին (Զրադաշտին), որը Էր անունով մի հայի

[1] Տե՛ս «Արտա Վիրազի» թարգմ. Ռ. Աբրահամյանի ներածությունը:

գավակն էր, այսինքն՝ Հայկազն էր։ Հանգուցյալ գիտնականի աչքից վրիպել էր էր Հայկազնի ու Արա Գեղեցիկի առասպելների համեմատությունը, որոնք միևնույն առասպելի երկու իրարից տարբերվող պատումներն են, ըստ որում մեկը՝ հունականը, կապակցվելով Պլատոնի փիլիսոփայական ուսմունքի հետ, շարադրված է մինչև տվյալ սյուժեի տրամաբանական վերջը, իսկ հայկականը պատմված է «կարճառոտ», քանի որ դա հակասում է քրիստոնեական իմացաբանությանը, ուստի Մովսես Խորենացին գլացել է մանրամասնել, զի «այնչափ շատ լիցի կշտամբել»[1]։ Սակայն էր Հայկազնի ու Արա Գեղեցիկի առասպելի նույնությունը չի վրիպել մեր բանասերների և օտար հայագետների ուշադրությունից, որոնք (ոմանք բացորոշ, մյուսներն սքողված) այդ առասպելը դասել են «մեռնող և հարություն առնող աստվածների» մասին հին կրոնների մեջ լայնորեն տարածված առասպելների շարքը[2]։ Այս շարքին են պատկանում նաև քրիստոնեական իմացաբանությամբ վերծանված հայկական առասպելախառն զրույցները Մուշեղ Մամիկոնյանի, Գրիգոր Լուսավորչի և այլոց մասին։

«Արտա Վիրազ նամակն» իր գրական զու-

---

[1] Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 50։

[2] Մ. Էմին, Հ. Գելցեր, Մ. Աբեղյան, Ն. Ադոնց, Ա. Մաթիկյան. Գ. Ղափանցյան և այլք։

գաճեաններն է ունեցել նաև ընդհանուր քրիստոնեական գրականության մեջ, ինչպես, օրինակ՝ «Տեսիլ կամ Յայտնութիւն Աստուածածնի», «Տեսիլ կամ Յայտնութիւն Պօղոսի առաքելոյն», որոնք հնում թարգմանվել են նաև հայերեն։ Ընդհանուր քրիստոնեական այս և նման ապոկրիֆիկ գրականության ազդեցության ներքո մեզ մոտ էլ զարգացել է տեսիլքային ժանրը։ Մեր ձեռքն են հասել հայ ճգնավորներին, «սրբերին» և եկեղեցական հայրերին վերագրվող մի շարք գրական հուշարձաններ, որոնց մեջ վառ երևակայությամբ նկարագրված են անդրշիրիմյան, հատկապես «դըրախտի» ու «դժոխքի» տեսարանները։ Այս տեսակետից վերին աստիճանի հետաքրքրական է Գրիգոր Լուսավորչին վերագրվող «Հարցմունք Լուսաւորչի» կամ «Հարցումն Լուսաւորչի և պատասխանի հրեշտակին» երկը, որի մեջ Լուսավորիչը «հարցումներ» է ուղղում Միքայել (կամ Գաբրիել) հրեշտակապետին հոգիների անդրշիրիմյան կյանքի մասին, և վերջինից պատասխաններ ստանում յուրաքանչյուր հոգու երկրային կյանքի և սրա երկնային հատուցման մասին։ Գրական հուշարձանների այս շարքին է պատկանում նաև Վարդան Այգեկցու «Վասն դժոխոցն և անքուն որդանցըն» վառ քարոզը և Առաքել Սյունեցու «Ադամգիրք» ու «Դրախտագիրք» պոեմները և այլն։

Բացի թվարկված զուգահեռներից և նմանություններից՝ «Արտա Վիրազ նամակը» մեծ ար-

ժեք է ներկայացնում ինչպես զրադաշտական Իրանի ժողովուրդների կրոնա-բարոյական հայացքների ու սոցիալ-տնտեսական հարաբերությունների ճանաչողության համար, այնպես էլ հեթանոս հայերի, հետագայում հայ ժողովրդական հավատալիքների և սնոտիապաշտության մեջ առկա մութ, ցարդ անբացատրելի մնացած հասկացությունների լուսաբանության գծով: Այդ տեսակետից ուսանելի են մեղքի ու պատժի պատկերացումները ըստ «Արտա Վիրազի» և մեր ժողովրդական հավատալիքների, Չինվատ կամուրջի և մեր «Մազե կամուրջի» նկարագրությունը[1], չարի ու բարու ընկալումները, ապաշխարանություն, քավարություն, հարության ըմբռնումները և այլն, և այլն:

Որոշ հասկացություններ, բարոյական նորմաներ համարյա նույնությամբ պահպանվել են նաև մեր «Սասնա ծռեր» անզուգական վեպի մեջ, օրինակ՝ «յառաջ հաց, յետև հարց»[2] առածանման ասույթը, որը համապատասխանում է զրադաշտական հյուրընկալական պատգամին՝ «Նախ և առաջ սովածներին ու ծարավներին ուտելիք տուր, ապա հաջողությամբ հարց ու փորձ արա» («Արտա Վիրազ», գլ. 3, 15—17):

---

1 «Մազե կամուրջի» նկարագրություններից մեկը պահպանված է Գ. Սրվանձտյանցի «Մանանայի» մեջ, էջ 9:

2 «Սասունա ծռեր», ասացող Մանուկ Թորոյան, գրի առնող Կ. Մելիք-Օհանջանյան, տե՛ս «Սասնա ծռեր» հ. Բ., առաջին մաս, էջ 340, 341 և այլն:

«Արտա Վիրազը» զրադաշտական պարսիկնե-րի կրոնա-բարոյական իմացությունների, նիստ ու կացի մի հարուստ շտեմարան է, որը գալիս է լրացնելու Եզնիկ Կողբացու, Եղիշեի և մեր մյուս մատենագիրների տեղեկությունները Իրանի մա-սին: Եզնիկն ու Եղիշեն՝ «եղծանելով» պարսից քեշը, հատուկ քննություն չեն տանում իրանցինե-րի սոցիալ-տնտեսական հարցերը, նիստ ու կացը զրադաշտականության տեսադծով, մինչդեռ «Ար-տա Վիրազը»՝ ելնելով զրադաշտական բարոյագի-տության հիմնական պատվիրաններից, որոնց հա-մեմատ «փոշի է դառնալու եղը, և փոշի է դառ-նալու ձին, և փոշի է դառնալու ոսկին ու արծա-թը, և փոշի է դառնալու մարմինը», առաջարկում է իր հետևորդներին՝ «Կիրառեք բարեմտություն, բարեխոսություն և բարեգործություն» (գլ. 101, 17—20):

Ելնելով այս հիմնական սկզբունքներից, հու-շարձանի մեջ քննության են առնված զանա-զան սոցիալ-տնտեսական հարցեր, բարոյագիտա-կան նորմաներ: Այսպես, օրինակ, այստեղ դատա-պարտվում է մշակների օրավարձը կտրելը (գլ. 39), անազնիվ ճանապարհով հարստություն դիզելը (գլ. 46), խարդախ վաճառականությունը (գլ. 80), սահ-մանագծի նշանաքարեր փոխելը, տեղահանելը (գլ. 50), կեղծ պայմանագիր կնքելը (գլ. 51), կա-շառակերությունն ու անիրավ դատավարությունը (գլ. 79, 91), դիակ-մեռելոտի ուտելը (գլ. 98),

տերերին անհնազանդ լինելը (գլ. 99), պոռնկությունը (գլ. 88), պճնամոլությունը (գլ. 73), երեխաներին մոր կաթից զրկելը(գլ. 87, 94, 95), արվամոլությունն ու սոդոմականությունը (գլ. 19), անբնական սեռային հարաբերություն ունենալը (գլ. 88), դաշտանիկներին մերձենալը (գլ. 20, 22), մեռելների հետևից լաց ու կոծ անելը (գլ. 16), ապերախտ զավակներին պատապարտելն ու պախարակելը և այլն, և այլն:

Բարոյական-իրավական այս նորմաներն օրենսգրված տեսան նաև Հայաստանում՝ իրավաբանորեն ձևակերպվելով քրիստոնեական անդրանիկ ժողովում Աշտիշատում, «զի նա էր... տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին»: Բերենք այդ ժողովի կանոններից մի հատված, որից պարզ կերևա, որ Աշտիշատի ժողովի կանոնների մեծ մասը համապատասխանում է «Սրտա Վիրապում» արտացոլված բարոյագիտական-օրենսդրական նորմաներին:

«...Բայց սա կարգս կանոնաց հայրենիս կարգէր... զի մի զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ ի վերայ գնացելոցն ոճիրս գործիցեն լալեացն կոծոյն, զանհաւատութիւնս աշխարին զնելոյ... Եւ զի լինիցին յամուսնութեան օրինաւորք. մի՛ առնել և մի՛ զաւ բերել իւրեանց ամուսնութիւն-ընկալ կողմանց. և փախչել աւելի ի մերձաւոր և

յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն[1]. և մանաւանդ ի մերձաւորական ի նուաց... Եւ կանոն՝ հրամայել ամենեցին ի մեռելոյ և յարինէ ուտելոյ, և ի պաշտանեյն մերձենալոյ. զայս ամենայն պիղծ համարէր առաջի ահեան:

Եւ զհեթանոսութիւնն և զբռնութիւնն և զագահութիւնս և զչարակնութիւնս, զցանկութիւնս և զգրկութիւնս, զարուագիտութիւնս և զկռւութիւնս և զբամբասութիւնս, և զանառակ արբեցութիւնս և զորկորստութիւնս և զյափշտակութիւնս և զպոռնկութիւնս և զվրէժս ի թշնամեաց, և զատութիւնս և զթշնամութիւնս և զանողորմածութիւնս և զատա-[illegible]ութիւնս, և զարիւնհեղութեան սպանութիւնս և զանասնագիտութեան պղծութիւնս, որ ոչ ակն ունէին յարութեան և որ անյուսութեամբն լան զմեռեալս, ընդ մի օրինակ զամենեսեան ի միում խորխորատ կորստեան համարէր»[2]:

Այդ կանոնների հոդվածներից մի քանիսը կրկնվում են նաև այլուր՝ Բուզանդի «Հայոց պատ-

---

[1] Մերձավոր և տոհմակից ամուսնությունը՝ «խեթուկ-դասի» արգելումը քրիստոնեական բարոյագիտության արգասիքն է, մինչդեռ հեթանոսական Հայաստանում, ինչպես և զրադաշտական Իրանում և այլուր, դա միանգամայն օրինական, ապա ուղին և բարոյական էր համարվում: Տե՛ս «Արտա Վիրազ», գլ. 2. «Եւ այն Վիրազը յոթ քույր ունէր, և նրանք՝ յոթ քույրերն էլ Վիրազին որպես կին էին»:

[2] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 85—86:

մուլթյան» և մեր մյուս հեղինակների երկե-րում ու եկեղեցական ժողովների կանոններում:

* * *

Մի երկու խոսք էլ պրոֆ. Ռ. Աբրահամյանի թարգմանչական արվեստի մասին:

Դժբախտաբար մենք չկարողացանք ձեռք բերել «Արտա Վիրազ նամակի» պահլավերեն տեքստը և անգլերեն թարգմանությունը, որպեսզի ստուգեինք մեր հանգուցյալ պահլավագետի թարգ-մանության ճշտությունը և տեղ-տեղ սպրդած մութ, դժվարըմբռնելի դարձվածքներն ու ոճերը: Այնուամենայնիվ կատարելով համեմատության մի փորձ, միանգամայն համոզվեցինք, որ հանգու-ցյալ գիտնականը մեծ բարեխղճությամբ է կատա-րել հանձն առած բարդ և դժվարին գործը՝ հարա-զատությամբ վերարտադրելով պահլավ բնագիրը:

Բանն այն է, որ պահլավագետ Հ. Թիրյաքյա-նը «Արտա Վիրազից» որոշ հատվածներ թարգ-մանել և հրապարակել է իր «Հայ-իրանական ուսումնասիրությունք» գրքի մեջ (էջ 134—162): Այդ հատվածները նա մեջ է բերում լատին տա-ռադարձությամբ պահլավերեն, տալիս է դրանց տողացի-բառացի գրաբար թարգմանությունը, ապա գնում է «քիչ շատ կանոնավոր հայերենով» տվյալ հատվածի համառոտ իմաստը:

Մենք համեմատեցինք «Արտա Վիրազի» այդ հատվածի Հ. Թիրյաքյանի և Ռ. Աբրահամյա-նի թարգմանությունները և եկանք այն եզրակա-

ցության, որ երկուսն էլ կիրառում են թարգմանչական միևնույն սկզբունքը, թարգմանում են տողացի և բառացի՝ պահպանելով պահլավական կրոնա-բարոյական և ծիսական տերմինաբանությունը նաև հայ տեքստի մեջ: Բառացի թարգմանությունը երկուսի մոտ էլ երբեմն խանգարում է պահլով բնագրի ճիշտ ու լրիվ ըմբռնումը: Դա առավել ևս աչքի է ծակում Հ. Թիրյաքյանի մոտ, որը հաճախ պահպանում է իր գրաբար թարգմանության մեջ նույնիսկ հայահունչ պահլավերեն բառեր («ուրու» — հոգի, «վիզանդ» — որպես թե, «շատ» — գոհ, «աստառ» — հաստատուն, «խորակ» — կերակուր, «դենի դատաստավորք», «կամ» — քայլ և այլն):

Հ. Թիրյաքյանի և Ռ. Աբրահամյանի թարգմանչական սկզբունքները որոշ չափով բացասաբար են ազդել նրանց ոճի վրա՝ առաջացնելով լեզվական անհարթություններ և քերականական անկանոնություններ:

Հետմահու լույս ընծայելով պրոֆ. Ռ. Աբրահամյանի այս պատասխանատու թարգմանությունը, մենք ձգտել ենք հնարավորինս անաղարտ պահպանել Ռ. Աբրահամյանի թարգմանության լեզուն և միայն տեղ-տեղ ուղղել ենք խիստ աչքի ծակող անկանոնությունները կամ միտքն ավելի պարզ դարձնելու համար ուղղանկյուն փակագծերի մեջ ավելացրել ենք մեկ կամ երկու բառ:

28 հունիսի 1956 թ.

Երևան

Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Մեր գրականության մեջ որքան շատ են տեղեկություններ Իրանի արտաքին կյանքի մասին, այնքան հազվագյուտ են նրա ներքին կյանքի վերաբերյալ։ Մինչդեռ այդ տեղեկություններն են, որ գծում, ամբողջացնում են մեր դարավոր հարևանների հոգեկան պատկերը։ Պահլավերեն գրականության մեջ այդպիսի բովանդակությամբ գրքեր բազմաթիվ են. «Արտա Վիրազը» և «Յուշտի Ֆրիանը» այն գրքերից են, որոնք լի են կենցաղագրական տեղեկություններով Իրանի ժողովրդի մասին, որոնց հետ մոտիկից ծանոթությունը այնքան անհրաժեշտ է մեզ համար։

Ուստի մենք ավելորդ չհամարեցինք թարգմանել այդ գրքերը կարևոր ծանոթություններով ոչ միայն որպես պահլավական գրական երկեր, այլ հատկապես իրենց մեջ պարունակած տեղեկությանց համար, որոնց գիտությունը անհրաժեշտ

է ինչպես հայ գիտնականին, այնպես էլ հայ ընթերցողին։

Թարգմանության համար ձեռքի տակ ունեցել ենք երկու գրքերի մի քանի ձեռագրերի համեմատությամբ գիտական հրատարակությունը, որ կատարել են Մարտին Հաուգ և Է. Ու. Ուեստ նշանավոր գիտնականները 1872 թվականին. բնագրերին կից են թարգմանությունները անգլերեն լեզվով։ Ունեցել ենք ձեռքի տակ նաև Բարթելեմիի ֆրանսերեն թարգմանությունը, կատարված 1887 թ.։ Վերջինս իր թարգմանության անհրաժեշտությունը ցույց տալու համար ասում է, որ Ուեստի թարգմանությունը բառացի է, բնագրի մթությունները մացնում է թարգմանության մեջ և դարձնում է թարգմանությունը ավելի մութ, քան բնագիրը։ Մենք համբերությամբ համեմատել ենք Ուեստի և Բարթելեմիի թարգմանությունները և գտել, որ մինչդեռ Ուեստի թարգմանությունը դասական թարգմանություն է, որ թերևս որոշ բան կորցնում է բառացիին մնալով, Բարթելեմիի թարգմանությունը փոխադրություն է հավելումներով ու հապավումներով, հաճախ ֆանտաստիկ բովանդակությամբ։ Մենք մեր թարգմանությունը կատարել ենք բնագրից, հազվադյուտ դեպքերում համեմատելով Ուեստի, նույնիսկ Բարթելեմիի թարգմանության հետ, բայց միշտ պահելով մեր ինքնուրույնությունը։

Ձեռքի տակ չենք ունեցել և կարիք չի եղել ունենալու «Արտա Վիրապի» թարգմանությունը, որ արել է պարսկական և գուջարաթի աղբյուրներից Բոպը 1816 թ., որ բոլորովին տարբեր բան է պահլավական «Արտա Վիրապից»։ Մեր թարգմանության մեջ նշված են երկու-երեք մութ կտորներ։

Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդա Վիրազի անգլերեն հրատարակությունը կազմված է երկու հատորից. առաջին հատորը կոչվում է The Book of Arda Viraf. The pahlavi text prepared by Destur Hoshangji Jamaspji Asa, revised and collated With furthur mss., with an English translation and introduction and an appendix containing the texts and translations of the Gosht i Friano and Hadokht-Nask by Martin Haug, assisted by E. W. West. Bombay-London, 1872: Երկրորդ հատորը առաջինի բառարանն է, նույնպես երկար վերտառությամբ, այս անգամ by E. W. West, revised by Maptin Haug, Bombay-London, *1874:*

Ձեռագիրը նախապես պատրաստված է Դաստուր Հոշանգջիի ձեռքով պահլավերեն [B. N. P. ձեռագրերից և մի քանի փազանդ. ձեռագրերից և համեմատվել է Հաուգի H_6 H_{17} H_{18} ձեռագրերի և Կոպենհագենի K_{20} և K_{26} ձեռագրերի հետ: Գործը

կատարված է կատարյալ բարեխղճությամբ և լըր-ջությամբ։

Լավագույնը ձեռագրերի մեջ H_6 է, որ գալիս է 1397 թ. հոկտեմբեր ամսից. ավելի հին է, բայց ոչ լավ պահպանված K_{20}, 1331 թ. նոյեմբերից։

Բացի պահլավերեն ձեռագրերից, հրատարակիչներն օգտվել են նաև փազանդ, սանսկրիտ, գուջարեթի և պարսկերեն թարգմանություններից. սակայն վերջին երկուսը, որոնց վրա կառուցված է Բայլի թարգմանությունը, մեծապես շեղված են բնագրից։

Արտա Վիրազը պահլավիկ գրականության նշանավոր երկերից է, որ միակն է իր տեսակի մեջ։ Գիրքը կարդացվում էր հրապարակական հավաքույթներին և թողնում էր անջնջելի տպավորություն ունկնդիրների՝ գլխավորապես կանանց վրա, որոնք սկսում էին հեկեկալ և հառաչել, համեմատելով իրենց սեփական մեղքերը գրքում նկարագրվածների հետ։

Արտա Վիրազի համառոտ բովանդակությունը հետևյալն է։ Գրքի առաջին երեք գլուխները մի ներածություն են, որի նպատակն է պարզել, թե ինչպես Արտա Վիրազը գնաց մեռելների աշխարհը և այնտեղից տեղեկություններ բերեց։ Այս երեք գլխի բովանդակությունն է, որ տարբեր է պահլավիկ բնագրի և գուջարեթի ու փարսի ձեռագրերի մեջ։

Զարատուշթրայի (Զրադաշտի) կրոնը հա-

տապալելուց հետո 300 տարի երկիրը խաղաղ էր և կրոնական կասկածներ չկային. բայց ահա Չար ոգին (Արհմնը) ղրկում է անիծյալ Ալեքսանդրին[1] գալ Իրան, որ նա կատարում է մեծ վայրագությամբ, ավերելով մայրաքաղաքը, այրելով Ավեստան և ոչնչացնելով հոգևորականությունը և մտավորականությունը: Այդ արշավանքի հետևանքը եղավ, ի միջի այլոց, կրոնի թուլացումը և դանաղան աղանդների առաջանալը մինչև Շապուհ Բ-ի թագավորության օրերը, երբ հռչակավոր Աթուրպատ Մեհրսպանդը հաստատեց Դենի Մազդեզն ճըշմարտությունը Օրդիալի ժամանակ՝ հալած արույր ածելով իր կրծքին առանց վնասվելու:

Այս հրաշքն էլ անզոր եղավ փրկելու դրությունը. և ահա դաստուրները և ժողովրդի առաջնորդները հավաքվում են և որոշում մեկին ուղարկել «մեռելների աշխարհը» տեղեկություններ բերելու: Հավաքվելով հռչակավոր Ատր Ֆարնբագ տաճարի դուռը, նրանք ընտրում են 7 առաքինի անձնավորություններ, որոնք իրենց միջից առանձնացնում են երեքին. և վերջապես սրանք էլ՝ Արտա Վիրապ անունով մեկին, որ կոչվում է նաև Նիշապուր[ցի]: Ընտրությունը հաստատվում է վիճակ գցելով, և Վիրապը հանձն է առնում գնալ:

Վիրապը 7 քույր ուներ, որոնք խնթուկլաւ

---

1 Ալեքսանդր Մակեդոնացին միշտ «անիծյալ» է հորջորջվում պահլավիկ գրականության մեջ:

օրենքով[1] նրա կանայքն էին: Սրանք՝ ողբալով և կական բարձրացնելով, գալիս են և պահանջում վերանայել Վիրաֆին ուղարկելու որոշումը, սակայն նրանց համոզում են, խոստանալով 7 օրից հետո Վիրաֆին ողջ առողջ վերադարձնել քույրերին: Վիրաֆն ընդունում է 3 բաժակ գինի՝ խառնված մանգ կոչված թմրականի հետ և քնում է, իսկ քույրերը դատավորների հետ հսկում են նրա մարմնին, կարդալով Ավեստա ու Զանդ և գաթաներ երգելով: Յոթերորդ օրը Վիրաֆն արթնանում և պահանջում է մի ճարտար դպրագիր, որ գրի առնի այն, ինչ որ նա պիտի պատմեր:

Վիրաֆի պատմությունն սկսվում է չորրորդ գլխից. Սրոշ առաքինին և Ատր յազատը (երկու յազատներ)[2] առաջնորդ են հանդիսանում նրան նրա ամբողջ ճանապարհորդության ընթացքում: Երեք քայլ անելով՝ նա հասնում է Չինվաթ կամուրջը[3], որ բաժանում էր աշխարհը մեռելների աշխարհից: Այստեղ նա տեսնում է մի առաքինի մարդու հոգի, որ հանդիպում է մի չքնաղագեղ աղջկա, որ այլ բան չէր, եթե ոչ նրա առաքինի գործերի մարմնացումը: Վիրաֆն անցնում է Չինվաթ կամուրջը իր հովանավորների և Միհրի[2] ու Ռաշնուի[2] և այլոց օգնությամբ և գալիս է առաջին տեղը, որ կոչվում էր Համեստեգան: Այստեղ

[1] Տե՛ս ծանոթ. 25:
[2] Տե՛ս ծանոթ. 35:
[3] Տե՛ս ծանոթ. 33:

այն հոգիների տեղն է, որոնց բարի և չար գործերը հավասարակշռված են, և նրանք այս դրության մեջ պետք է մնան մինչև հարություն:

Այնուհետև նա անցնում է երեք դրախտները՝ Հումաթ, Հուխթ և Հուվարշտ (բարի միտք, բարի խոսք և բարի գործ), ամեն տեղ տեսնելով երանելի հոգիներ, ապա գալիս է չորրորդ դրախտը՝ Գարոթմանը: Այստեղ Ոհուման Համշասպանդը[1] ընդունում է նրան և տանում Աուհարմազդի համշասպանդների և մի քանի ֆրավաշիների[2] մոտ: Աուհարմազդը հրամայում է ցույց տալ նրան դրախտը ու դժոխքը: Դրախտում նա տեսնում է առատաձեռնների, գաթա երգողների և խեթուկդաս կատարողների հոգիները, ապա առաքինի իշխանավորների և ճշմարտախոսների հոգիները, ապա կանանց հոգիները, որոնք կենդանի ժամանակ հարգել են կրակը, ջուրը, բուսականությունը և այլն: Ապա նա տեսնում է զորականների, խրաֆստարներ[3] կատարողների, երկրագործների, արհեստավորների, հովիվների, քեթխուդաների, դաստավորների, ուսուցիչների և այլ տարբեր մարդկանց հոգիները, որոնք բոլորն էլ երանելի դրության մեջ էին: Առաքինիների վարձի ու պարգևների մանրամասնություններ չկան. այդ մասին նշված է ընդհանուր խոսքերով: Վիրապը տեսնում է այ-

[1] Տե՛ս ծանոթ. 34:

[2] Պահապան ոգիներ:

[3] Տե՛ս ծանոթ. 47:

նուհետև արցունքի գետը, որ գոյացել էր մեռած-ների հետևից լաց ու շիվան անելուց:

Վիրապը կրկին տարվում է Չինվաթ կամուրջը. այստեղ նա տեսնում է մի չարագործի հոգի, որ հանդիպում է մի զազրելի կնոջ, որ նրա չար գործերի մարմնացումն է:

Հետևում է դժոխքի նկարագրությունը. սա մի մութ, խավար, սառն և միևնույն ժամանակ տաք և ժահահոտ փոս է, որտեղ հոգիները իրար չեն տեսնում և կարծում են, թե մենակ են:

Դժոխքի բաժնում նկարագրված են այն տառապալից հատուցումները, որ չարագործներն ստանում են իրենց հանցանքների համար: Այդ հանցանքներն են՝ սոդոմականությունը (գլ. գլ. 19, 71), դաշտանի ժամանակ ջրին և կրակին մոտենալը (20, 72), սուրբերի մարդ սպանելը (21), դաշտանով կնոջ հետ հարաբերություն ունենալը (22), ուտելու ժամանակ խոսելը (23), կնոջ կողմից ամուսնուն թողնելն ու անհնազանդություն անելը (24, 26, 62, 69, 70, 81, 85), մի կոշիկով (առանց կոշիկի) և առանց գոտի մանվելը, կանգնած միզելը (25), կապիճ, գուլակ և այլ չափերի փոքր բանելը (27, 80), իշխանավորների անողորմ վերաբերմունքը (28), զրպարտելը (29, 66), չորքոտանիներին ապօրինաբար (առանց որոշ ծիսակատարության) սպանելը (30, 74), անհոգություն, ագահություն (31), 32-րդ գլխում պատմվում է ծույլ Դավանոսի մասին, որ հանցագործ էր և

միայն աջ ոտով խոտ էր գցել լծկան եզան առաջը, սուտ ու խաբեություն և պարտավանք (40, 90, 97), մազերը և գլխի թեփը կրակի վրա ածելը (34). կանանց կախարդությունը (35), ուխտադրժությունը (36, 47, 52), աղտոտությունները և դիակը կրակի մեջ գցելը (37, 38), մշակների օրավարձը կտրելը (39), բաղնիքում աղտոտությունները և դիակը ջրի մեջ և հողի վրա դնելը (41), անհարազատ զավակներ (42), երեխաներին չճանաչելը (43). մոր կողմից զավակին սպանելը (44), սուտ երդում ուտելը (45), անազնիվ ճանապարհով հարստություն դիզելը (46), շներին չկերակրելը (48), խաբեբայորեն գետին չափելը (49), սահմանագծերի քարերը փոխելը (50), կեղծ պայմաններ կապելը (51), Վռամյան կրակը հանգցնելը և սրընթաց գետի կամուրջ քանդելը (55), խարդավանքներ աստվածների և կրոնի (56), լաց ու շիվան անելը մեռելների հետևից (57), կանգնած ջրում, ավազանում և գետում աղտոտություններ գցելը (58), երեխային կուրծքից և քաղցից լացացնելը (59), ուրիշի կնոջ մոտ գնալը (60), «կնոջ համար սուր լեզու» կամ «շան լեզու» ունենալը (63, 82), ուրիշից հղանալն ու երեխային փչացնելը (64, 78), հորն ու մորը վշտացնելը (65), հանձնըված քաղաքը վատ կառավարելը (67), կանանց դեմքերը գեղեցկացնելը և ուրիշի մազեր գործածելը (73), անասունների բերանը կապելը (75), դաշտանի ժամանակ կանանց կերակուր եփելը

(76), անասուններին վատ պահելը (77), սուտ արդարադատություն և կաշառք (79, 91), կնոջ դաշտանի մեջ ուտելը (83), թույն և աֆիոն պատրաստելը (84), խեթուկցար դրժելը (86), երեխային մոր կաթով չկերակրելը (87, 94, 95), անվայել սեռական հարաբերություններ (88), եսասիրություն (89), ուրիշներին բարիքից զրկելը (92), ճանապարհորդներին ասպնջականությունից զրկելը (93), սերմը չցանելը և ուտելը (96), դիակ ուտելը (98), տերերին անհնազանդ լինելը (99):

Այս հանցանքներից շատերը հանցանք են համարվում և ուրիշ կրոնների բարոյագիտության մեջ. բայց բավական շատ են և ավելի հետաքրքքիր զուտ զրադաշտական հանցանքները, օրինակ՝ դաշտանով հողը, ջուրը, կրակը անպատվելը (20, 72), անասուններին ապօրինի և անտեղի կոտորելը (30, 74), ջուրը, կրակը և հողը կեղտոտելը՝ աղտոտություններ գցելով մեջը (34, 37, 38, 58), կրակը և մանավանդ Վռամյան կրակը գլամամբ հանգցնելը (37, 55), բարի կենդանիներին չարչարելը և մորթելը (48, 75, 77, 98), խեթուկցար դրժելը (86), ուրիշի երեխաներին ծեծ տալը (87, 94) և իր երեխային ծծից զրկելը (59, 95), դիակ ուտելը (98) և այլն:

Պատիժները բազմատեսակ են և նպատակ ունեն գլխավորապես 1) ջնջել մարմնի անդամները կամ մարմինն ամբողջապես ոչնչացնել և 2) վերին աստիճանի անախորժ զգացմունքներ

առաջացնել հանցավորների մեջ: Նրանք ստաց-վում են միացյալ պատիժներ սովորականների զուգորդումից:

Պատիժները հետևյալներն են.

Ա. Գլխի կաշին լպռնացնելը (21), մորուք փետելը և արյուն խմելը (23), ատամներից կախելը (24), խրաֆստրների, մանրավարակե օձերի, կծելը (24, 25, 29, 32, 33, 34. 36, 37, 45, 47, 56, 66,69, 71, 73, 81, 86, 89, 90), մեջքով սուր քաշելը (40), ատամներով լեռ փորելը (44, 78, 87, 95), գլխին ջրաղացի քար դնելը (44), մատ-եղունգով սար փորելը (50), միսը երկաթե պատառաքաղով ուտեցնելը (51, 62), նետի, քարի, կացնի հարվածներ (52, 77), գլուխը մարմնից բաժանելը (57), [գեհի դժոխք] քարշ տալը (58), ատամները ուտելը (59), տաք հնոց լիզելը (63), աչքում բևեռ (67, 69, 92), երկաթե ոզնին մարմնի մեջ (70), դանակը սրտում (74), փորոտիքը պատառոտելը, (76), ատամները տաք արույրի վրա դնելը (76), ատամները կորելը, փորը պատռելը (84), երկաթե պարանով պատելը (85), երեսն ի վայր ընկած՝ ներքևից ծուխ և տոթ, վերևից տաք քամի (93), ատամները շիկացրած տապակների վրա դնելը (94):

Բ. Կղկղանք, դաշտան, դիակ ուտելը (20, 22, 38, 44, 49, 72, 80, 98), հող ու մոխիր ուտելը (27), իր դիակն ուտելը (35, 83) և այլն:

Հանցանքների մեջ սեռական և դասակարգա-

թյուն չկա, շատ ծանր հանցանքին հետևում է մի բոլորովին հասարակ հանցանք: Հանցանքները, ինչպես և պատիժները, կրկնվում են, այսպես՝ անբարոյականությունը (24, 60, 62, 69, 81, 85, 88, 95), որդեսպանությունը (44, 64, 78) և այլն:

Արտա Վիրապը թեև միակն է իր տեսակի մեջ պահլավական գրականության մեջ, բայց ունի բավականաչափ զուգահեռներ համաշխարհային գրականության մի շարք երկերի հետ: Սակայն խոսք չի կարող լինել նրանց փոխադարձ ազդեցության մասին:

Այսպես, կան մի քանի օրինակներ եբրայական գրականության մեջ (Եղիա, Ենոք, Եզեկիել):

Դասական գրականության մեջ Հերոդոտն է, որ բերում է առաջին օրինակը (Արիստեաս): Այնուհետև մենք հանդիպում ենք Պլատոնի մոտ («Հանրապետություն») Էր Հայկազնի պատմվածքին, որ ուրիշներից ավելի նմանություն ունի Արտա Վիրապի հետ:

Ըստ Պլատոնի՝ Էրը զինվոր է և սպանվում է պատերազմում: 10 օր հետո, երբ հավաքում են կռվում չափ նեխած դիակները, Էրը հարություն է առնում և պատմում հետևյալը: Նրա հոգին՝ բաժանվելով մարմնից, գնում է մի հրաշալի տեղ, որտեղ երկինքն ու երկիրը երկու բացվածք ունեին: Այստեղ նստած էին դատավորները և դատում էին հոգիներին, որից հետո արդարները գնում էին աջ մի-մի տախտակ կրծքներին, մեղավորները՝ ձախ,

մի-մի տախտակ մեջքներին։ Երբ հերթը Էրին է հասնում, դատավորը նրան ասում է, որ նա պետք է գնա երկիր և պատմի տեսածները։ Բացվածքների միջով հոգիները բարձրանում և իջնում էին. բարձրացողները մաքուր էին, իսկ իջնողները թաթախված էին ցեխի մեջ։ Ավելի հեռվից գալիս էին երկու խումբ հոգիներ. ոմանք դուրս էին գալիս անդունդից և պատմում այն արկածների մասին, որոնք կատարվել էին մի հազարամյակում, մյուսները ցած էին իջնում երկնքից և պատմում այն երանությունների մասին, որ նրանք վայելել էին։ Էրը պատիժներ չէր տեսել և միակ ծանոթ մարդու հոգին Էրի հայրենիքի՝ Պամֆիլիայի տիրանն էր, որին քարշ էին տալիս փշերի միջով և ինչ-որ գարշելի էակներ չարչարում էին նրան։

Կղեմես Աղեքսանդրացին այս միևնույն տեսիլքը վերագրում է Զրադաշտին, որ մի Էր անունով հայի որդի էր։

Հունական գրականության մեջ կան շատ դեպքեր դժոխք իջնելու, ինչպես Պոլլուքսինը, Օրֆեոսինը և Թեսևսինը։

Քրիստոնեական շրջանում նման պատմվածքներն ավելի են բազմանում. Հիսուսն ինքն իջնում է դժոխք. պատմագիրները հիշում են զանազան այդպիսի պատմվածքներ մինչև 13-րդ դարը. այնուհետև հերթը հասնում է Դանթեին։

Դանթեի «Աստվածային կատակերգությունը» ամենից շատ նմանություններ ունի Արտա Վիրա-

պի հետ, թեպետ գեղարվեստական կողմից անսահման բարձր է նրանից: Այստեղ ազդեցության մասին չի կարող խոսք լինել:

Արտա Վիրազն ունի Համեստեգան, Դրախտ և Դժոխք, իսկ Դանթեն ունի Դժոխք, Քավարան, Դրախտ: Համեստեգանը և Քավարանը ունեն խոշոր նմանություններ: Դրախտն Արտա Վիրազի մոտ բաժանվում է 4 շրջանի, իսկ Դանթեի մոտ 10 շրջանի, երկուսի մոտ էլ բաժանմունքները անվանվում են լուսատուների անուններով: Դանթեն տեսնում է Ադամին, իսկ Արտա Վիրազը Գայոմարտին, որ առաջին մարդն է և համապատասխանում է Ադամին. երկուսն էլ տեսնում են անսահման լույս. դժոխքը երկուսի մոտ էլ մի խոր փոս է 10 շրջանից բաղկացած Դանթեի մոտ և 4 շրջանից՝ Արտա Վիրազի մեջ: Երկուսն էլ լսում են դղրդալից հառաչանքներ դժոխքից, երկուսի մոտ էլ դատավորները դատում են հոգիներին. երկու դժոխքում էլ հանցավորները նույնն են: Դանթեի դժոխքի խորքում նստած է Լյուցիֆերը, Արտա Վիրազի դժոխքի խորքում ինքը Ահրիմանն է բազմած:

Արտա Վիրազի ապրած ժամանակի մասին մենք գրքի մեջ ունենք որոշ ցուցումներ: Ա. գըլխում հիշված է Աթուրպատ Մահրասպանդը: Սա ապրել է Շապուհ Բ-ի ժամանակ (309—379 թթ.), որից հետևում է, որ Արտա Վիրազը կարող է

ապրած լինել միայն 4-րդ դարից հետո: Մյուս կողմից՝ Արտա Վիրապի բովանդակությունը և այն հանգամանքը, որ համազգային ժողով եղավ Աթուր Ֆարնբագի գահը և այլն, ցույց են տալիս, որ Արտա Վիրապը կարող էր ապրել միմիայն Սասանյան շրջանում:

Իսկ թե երբ է գրվել Արտա Վիրապը, այդ մասին ունենք մի ակնարկ. գրքի մեջ հիշվում է Դինքարտը, զրադաշտականների հսկայական կրոնական գիրքը, որի առաջին հրատարակիչը — Աթուր Ֆարնբագը, Ֆարրուխզադի որդին, ապրում էր 9-րդ դարի կեսին. ուրեմն Արտա Վիրապը չէր կարող գրված լինել 9-րդ դարի կեսից առաջ: Իսկ որովհետև Արտա Վիրապի հնագույն ձեռագիրը գալիս է 14-րդ դարի սկզբից, ապա նա չէր կարող գրված լինել ավելի ուշ, քան 14-րդ դարի սկիզբը:

* * *

Յուշտի Ֆրիանը պահլավական գրականության հազվագյուտ աշխարհիկ մատյաններից է, որտեղ պատմվում է, թե ինչպես առաքինի Յուշտի Ֆրիանը լուծեց Կախարդ Ախտի (Ախտի Յաթուկի) առաջարկած 33 հանելուկները: Յուշտի Ֆրիանը իր հերթին առաջարկեց երեք հանելուկ, որոնցից ոչ մեկը Ախտի Յաթուկը չկարողացավ լուծել:

Այս պատմվածքի մասին ակնարկ կա Ավես-

տայում, Աբան յաշտ (V) 81—83, որի թարգմա-նությունը հետևյալն է.

«Յոիշտան, որ Ֆրիաններից էր, Ռանհա կըղ-զու վրա հարյուր հատ արու ձիերից, հազար մա-նըր անասուններից, բյուր նորածին կենդանիներից բաղկացած զոհ էր մատուցանում նրան (Արդվի Սուրա Անահիտային): Նա խնդրում էր նրանից այս ողորմությունը. «Շնորհիր ինձ, ով բարի և ամենա-բարեգութ Արդվի Սուրա Անահիտա, որ ես կա-րողանամ հաղթական լինել չար ու նենգ Ախտիա-յի վրա և որ ես կարողանամ պատասխանել նրա 99 դժվարին, չարամիտ ու վնասակար հարցերին, որ առաջարկում է ինձ չար ու նենգ Ախտիան»:

Նույն գրքույկի թարգմանությունը կատար-ված է Մարտին Հաուգի և Է. Ու. Ուեստի 1872 թ. հրատարակությունից H_6, K_{20} և K_{26} ձեռագրերի համեմատությամբ:

Վերջագրերի թվականները (18 հունիսի 1249 թ. և 20 նոյեմբերի 1397 թ.) ձեռագրերի արտագրության տարիներն են, որոնք չեն կարող որոշել, թե երբ է հորինված Յուշտի Ֆրիանի մատ-յանը: Խնդիրը լուծելու համար արժեք կարող էր ներկայացնել Մահրասպանդ անունը, եթե նա առնչություն ունենար հռչակավոր Ադուրպատ Մահրասպանդի հետ (տես ծանոթ. 9): Նույնպես Փարվիզ համատեղության անունը դժվար թե ժամանակակից արքա Խոսրով Փարվիզի անունն է: Լեզվի առանձնահատկություններն էլ քիչ բան է տա-

լիս այդ նպատակի համար: Սակայն նկատի ունենալով, որ Յուշտի Փրիանը և հանելուկները հիշատակվում են դեռ Ավեստայում, հաստատ կարելի է ասել, որ Յուշտի Փրիանի աղբյուրները թաղված են խորը նախասասանյան շրջանում:

Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Արտա Վիրազ Նամակ

Գլ. 1

ՀԱՆՈՒՆ ԱՍՏԾՈՒ

1) Այսպես են ասում, որ մի անգամ առաքինի Զարթոհեշտը[1] ստացված կրոնը տարածում էր աշխարհի մեջ. 2) և մինչև 300 տարի կրոնը մաքուր գրության մեջ էր և մարդիկ առանց կասկածի էին: 3) Բայց հետո անիծյալ չարագործ Չար Ոգին[2], որպեսզի մարդիկ կասկած ունենան այս կրոնի վրա, 4) հորդորեց այն անիծյալ Ալեքսանդր Հռոմայեցուն[3], որ Եգիպտոսում էր ապրում,[4] ծանր վայրագությամբ և պատերազմով և ավերածով գալ Էրանշահրի[5] վրա: 5) Եվ նա Էրանի դահակալին

սպանեց 6) և Դուռն ու թագավորությունը կործանեց և ավերեց:

7) Եվ այս կրոնը, որ է Ավեստան և Զանդը[6] կովի զարդարուն կաշիների վրա ոսկե թանաքով գրված, դրած էր Ստահր Պապականի[7] դիվանատանը (քաղաքային գրությունների մեջ): 8) Եվ այն հակառակ վատաբախտ Ահրիմանը բերեց չարագործ եղեռնագործ Ալեքսանդր Հռոմայեցուն, որ բնակվում էր Եգիպտոսում, և նա այրեց (այդ բոլորը) 9) և կոտորեց Էրանշահրի շատ դատավորների[8], հերպետների և մովպետների և կրոնի զորավիգների, ատակների և իմաստունների 10) և Էրանշահրի մեծերի և քաղխուդաների մեջ քեն և անհաշտություն ձգեց, 11) և ինքը կործանված փախավ դժոխք:

12) Եվ սրանից հետո Էրանշահրի մարդիկ իրար հետ շփոթության և պայքարի մեջ էին, 13) այնպես որ հայտնի չէր, թե ո՞րն է տերը, ո՞րը թագավորը, ո՞րը կրոնապետը և ո՞րը կրոնական դատավորը. 14) և աստվածների նկատմամբ էլ կասկած ունեին: 15) Եվ շատ այս տեսակ կրոններ և հավատալիքներ, տարբեր սովորույթներ և երկբայություններ և տարբեր դատաստաններ աշխարհում երևան եկան. 16) մինչև այն ժամանակ, երբ ծնվեց օրհնյալ և անմահ հոգի Ատուրպատ Մահրասպանդը[9], որի կրծքի վրա, ինչպես պատմում է Դինքարտը, հալած արույր ածեցին: 17) Նա շատ դատաստան և արդարադատություն արեց

զանազան կրոնների և զանազան հավատալիքների նկատմամբ. 18) և այս կրոնը [կրոնական գրքերը] Շտապխգանում[10] էր և մարդիկ կասկածի մեջ էին:

19) Այնուհետև եկան այլ մոգ մարդիկ և այլ կրոնի դաստուրարներ. 20) այդ թվից շատերը աստվածավախ և ահով լի էին: 21) Եվ նրանք հաղթական Աթուր Ֆորնբագի[11] դանը ժողով հրավիրեցին 22) և այս առիթով այնտեղ զանազան տեսակի խոսքեր և լավ գաղափարներ ասվեցին. 23) «Պետք է մեզ համար մի հնար գտնել, 24) որպեսզի մեզնից մեկը գնա և հոգիներից մի տեղեկություն բերի, 25) որպեսզի մարդիկ, որ այս դարում ապրում են, իմանան 26), թե այս մեր հազումն[12] (յազեշն), դրոնը[13], աֆրինգան[14] ծեսերը, նիրանգի[15] աղոթքները, լվացումն[16] և մաքրումները[17], որ մենք կատարում ենք, աստվածների՞ն են հասնում, թե՞ դևերին, 27) և նրանք մեր հոգու աղաղակին հասնելո՞ւ են, թե ոչ»:

28) Այնուհետև կրոնի դաստուրարների[18] համաձայնությամբ՝ բոլոր մարդիկ կոչվեցին Աթուր Ֆորնբագի դուռը: 29) Եվ նրանք ամենքի միջից զատեցին յոթ մարդ, որ աստվածների ու կրոնի հանդեպ բոլորովին անկասկած էին, 30) և նրանց սեփական մտքերը, խոսքերը և գործերը[19] ավելի կանոնավոր էին և ուղիղ: 31) Եվ ասացին նրանց. «Նստեցեք 32) և ձեզնից մեկին, որ այս գործի համար վեհ և բոլորովին անմեղ և հարգելի է, ընտրեցեք»:

33) Եվ ապա նրանք յոթ հոգի նստեցին 34) և ընտրեցին յոթից երեքին և երեքից մեկին Վիրապ[20] անունով: 35) Ոմանք անվանում են նրան Նիշապուր[21]: 36) Եվ ապա Վիրապը, երբ որ լսեց այս որոշումը, ոտքի ելավ 37) և ձեռքը կրծքին դրեց և ասաց. 38) «Եթե կարելի է մի՛ տաք ինձ անհաճո մանդը[22], 39) մինչև որ դուք՝ մազդեզաններդ[23] և ես վիճակ ձգենք: 40) Եթե վիճակն ինձ ընկնի, հոժարությամբ կերթամ այն սաքինիների և չարագործների տեղը 41) և այս պատգամը շիտակ կերպով կտանեմ և ճշտորեն [պատասխան] կբերեմ»:

42) Եվ հետո նրանք, մազդեզանները և ես վիճակ գցեցինք, 43) առաջին անգամ լավ մըրքով[24], երկրորդ անգամ լավ խոսքով և երրորդ անգամ լավ գործով. ամեն երեք վիճակն էլ Վիրապին ընկավ:

Գլ. 2

1) Եվ այն Վիրապը յոթ քույր ուներ, 2) և նրանք՝ յոթ քույրերն էլ, Վիրապին որպես կին[25] էին: 3) Եվ նրանք կրոնը անգիր գիտեին և յաշտ էին անում[26]: 4) Երբ նրանք [այս լուրը] լսեցին, ապա այնպես դառնագին կերպով եկան նրանց մոտ 5) և գոչեցին և աղաղակ բարձրացրին 6) և առաջ գնացին մազդեզանների ժողովը: 7) Եվ նրանք կանգ առան և ողջունեցին 8) և ասացին. «Մի

անեք դուք, մոգպետներ, այս բանը, 9) քանզի մենք յոթն քույրեր ենք, և նա մեր միակ եղբայրը: 10) Եվ մենք յոթն քույրերս, այդ եղբոր կանայքն ենք, 11) ինչպես մի տան դուռ, որի յոթն բարավորները ցածից մի սյունի վրա են ամրացած, 12) եթե այն սյունը վերցնենք, այն բարավորները կընկնեն, 13) այնպես էլ մեզ յոթն քույրերիս համար այդ մի եղբայրն է, որ մեր կյանքն է և զորավիգը: 14) Ամեն բարիք, որ աստվածներից է, նրա միջոցով է գալիս: 15) Դուք ժամանակից առաջ այս կենդանիների աշխարհից մեռածների աշխարհն եք ուղարկում նրան, 16) և դուք առանց պատճառի անիրավ եք վարվում մեզ հետ»:

17) Այն մոգպետները, երբ լսեցին այդ խոսքերը, յոթն քույրերին բավարարություն տվեցին. 18) ասացին. «Մենք մինչև յոթն օր Վիրաֆին ողջ առողջ ձեզ կվերադարձնենք, 19) և այս բարեխառնությունն ու փառքը այդ մարդու վրա կմնա»:

20) Այն ժամանակ նրանք բավարարվեցին:

21) Ապա Վիրաֆը ձեռքերը կրծքին դրեց մոգպետների դիմաց և ասաց նրանց. 22) «Սովորություն է, որ ես պետք է մեռած հոգիներին զոհ մատուցանեմ, կերակուր ուտեմ և կապ անեմ, ապա դուք կտաք ինձ գինի ու մանգ»:

23) Դաստուրները հրամայեցին. «Այսպես էլ արա»:

24) Այնուհետև կրոնի դասատուները հոգու բնակավայրում ընտրեցին մի տեղ, որ 30 քայլ հեռու էր մաքուր և լավ տեղերից[27]: 25) Եվ Վիրազը գլուխը և մարմինը լվաց և նոր պատմուճան հագավ. 36) անուշաբույր բույսեր հատուկ, պատրաստված մահճակալի վրա նոր և մաքուր անկողին դցին: 27) Մաքուր անկողնի վրա նստեց 28) և դրոն նվիրագործեց, մեռած հոգիներին հիշատակեց և կերակուր ընդունեց: 29) Եվ այդ ժամանակ կրոնի դասատուները երեք ոսկե գավաթ լիքը լցրին գինով և վշտասպյան մանգավ[28]. 30) և նրանք մի գավաթը հանուն բարի մտքի, երկրորդ գավաթը հանուն բարի խոսքի և երրորդ գավաթը հանուն բարի գործի ավեցին Վիրազին: 31) Եվ նա այն գինին և մանգը խմեց և լի գիտակցությամբ վաժ[29] կարդաց և պառկեց անկողնում:

32) Կրոնի դասատուները և յոթն քույրերը, յոթն օր ու գիշեր [զբաղվեցին] հանապազ վառվող կրակով և բույրի ծավալմամբ և կրոնական նիրանգ. Ավեստա և Զանդ էին անում: 33) Եվ նասք[30] էին աղոթում և գաթաներ[31] երգում և մթության մեջ հսկում էին կատարում: 34) Եվ յոթն քույրերը նստած էին Վիրազի անկողնի մոտ 35) և յոթն օր ու գիշեր Ավեստա էին աղոթում: 36) Յոթն քույրերը բոլոր մազդեզյաններին, կրոնի դասատուներին, հերպետներին և մոգպետներին հետ իրենց հավանությունը ոչնչով չէին խնայում:

Գլ. 3

1) Եվ Վիրազի հոգին թողեց մարմինը և գնաց դեպի Չինվաթ Դայթիկի[32] Չինվաթ[33] կամուրջը 2) և յոթներորդ օրը վերադարձավ և մըտավ մարմնի մեջ: 3) Վիրազը վեր կացավ, կարծես թե արթնանում էր հաճելի քնից, 4) ոհուման[34] մտքով ու զվարթ:

5) Եվ քույրերը, երբ կրոնի դաստուրներին և մազդեզաններին հետ Վիրազին տեսան, ուրախացան և զվարթացան: 6) Նրանք ասացին. «Բարով ես եկել դու, Վիրազ, մեր՝ մազդեզանների պատգամաբեր, մեռյալների աշխարհից այս կենդանիների աշխարհն ես եկել»:

7) Հիրպետները և կրոնի դաստուրները երկրպագում էին Վիրազին: 8) Այն ժամանակ Վիրազը՝ տեսնելով նրանց, ընդառաջ եկավ, երկրպագեց և ասաց. «Ողջույն ձեզ Ահուրամազդ աստծուց և համշասպանդներից. 9) և ողջույն ձեզ ասուքինի Զարթուշտ Սպիտամանից 10) և ողջույն ասուքինի Սրոշից և Ատր յազատից[35] և մազդեզանյան հոյակապ կրոնից, 11) և ողջույն մնացյալ ասուքիններից և ողջույն բարօրության և հանգստյան մեջ գտնվող դրախտի մնացյալ հոգիներից»:

12) Ապա կրոնի դաստուրներն ասացին. 13) «Դո՛ւ, Վիրա՛զ, շիտակ ծառա՛ աստուծո, մեր մազ-

դեսպանների պատգամաբեր, քեզ ես ողջույն. 14) ինչ որ տեսել ես, ճշմարտությամբ մեզ պատմիր»:

15) Այն ժամանակ Վիրապն ասաց. «Առաջին խոսքն այն է, որ 16) նախ և առաջ սովածներին ու ծարավներին ուտելիք տալ, 17) ապա հաջողությամբ հաց ու փորձ տալ և աշխատանք հրամայել»:

18) Այն ժամանակ կրոնի դաստուրարներն ասացին. «Շատ լավ»: 19) Բերեցին համադամ կերակուրներ, խորոտիկ, սառը ջուր և գինի: 20) Ապա նրանք դրոն նվիրագործեցին և Վիրապը վաժ կարդաց և կերակուր կերավ, միազդը[36] վերջացրեց, աղոթք կարդաց: 21) Նա փառաբանեց Աուհարմազդային և համշասպանդներին և գոհություն հայտնեց Հորվատատ և Ամերետատ համշասպանդներին և օրհնություն կարդաց:

22) Ապա ասաց. «Բերեք մի իմաստուն և գիտուն դպիր»:

23) Եվ բերեցին մի դպիր հմուտ և գիտուն, որ նստեց նրա հանդիման: 24) Եվ ինչ որ Վիրապն ասաց, նա գրի առավ ուղիղ, պարզ և մեկին:

Գլ. 4

1) Եվ նա այսպես հրամայեց գրել. 2) «Այն առաջին գիշերը ինձ ընդառաջ եկան Սրոշ առաքինին և Ատր յազատը. 3) և նրանք ողջունեցին

ինձ և տեսցին. 4) «Դու բարով ես եկել, Արտա Վիրազ, թեպետև քո գալու ժամանակը չէր»: 5) Ես ասացի, որ պատգամաբեր եմ: 6) Ապա հաղթական Սրոշ առաքինին և Ատր յազատը իմ ձեռքը բռնեցին. 7) առաջին քայլը հանուն բարի մտքի, երկրորդ քայլը հանուն բարի խոսքի և երրորդ քայլը հանուն բարի գործի անելով՝ հասա Չինվաթ կամուրջը, որ խիստ լայն է, հաստահիմն և Աուհարմազդի կառուցածը:

8) Երբ այնտեղ եկա, 9) տեսա մի անցավոր հոգի, մինչև նախորդ երեք գիշերները հոգին նստած էր մարմնի սնարի մոտ: 10) Եվ նա արտասանում էր գաթաների հետևյալ խոսքերը. 11) Ushtî ahmâi, yahmâi ushtâ kahmâichîd, այսինքն՝ «Երջանիկ է նա, որի բարիքը կդառնա որևէ ուրիշի բարիք»: 12) Եվ այն երեք գիշերվա ընթացքում այն հոգին այնքան բարիք և դյուրություն և վայելք տեսավ, 13) որքան այն ամբողջ բարիքը, որ տեսել էր աշխարհում, 14) ինչպես մի մարդ, որ մինչև երկրիս վրա էր, ավելի հանգիստ, ավելի երջանիկ և ավելի զվարթ էր:

15) Երրորդ լուսաբացին այն առաքինի հոգին փայլում էր բուսականության բույրի մեջ, 16) և այդ բույրը ավելի հաճելի էր երևում նրան, քան ամեն հաճելի բույր, որ նրա կենդանի ժամանակ հաճելի էր նրա հոտոտելիքին: 17) Եվ այն բույրի հովը հեռու հարավային կողմից, աստվածների գավառից էր գալիս:

18) Նրա աչքին երևացին նրա սեփական կյանքը և սեփական գործերը գեղեցկատեսիլ կնոջ կերպարանքով, վայելչակազմ, այսինքն՝ աճած առաքինության մեջ: 19) Լիքը կրծքով, ստինքները հետ նստած սրտին և հոգուն սիրելի, 20) որի կերպարն այնքան լուսավոր էր, որքան տեսքը գեղանի, որքան նայվածքը հաճելի:

21) Առաքինի մարդու հոգին հարցրեց այն կնոջից. 22) «Ո՞վ ես դու և ինչ անձն ես, որ ես երբևէ կենդանի ժամանակ երկրի վրա ոչ մի կին չեմ տեսել ավելի շնորհալի և ավելի գեղատեսիլ, քան դու»:

23) Այն ժամանակ պատասխան տվեց այն [կինը, որ նրա] սեփական կյանքը և սեփական գործերը [էին]. 24) «Ես քո գործերն եմ, ո՛վ բարեմիտ, բարեխոս, բարեգործ և բարեկրոն երիտասարդ: 25) Քո կամքի և արարքի համար է, որ ես այսպես մեծ և վեհ և անուշաբույր և հաղթական և անհոգ եմ, ինչպես քեզ թվում է: 26) Որովհետև դու երկրի վրա գաթաներ ես երգել և դու վեհ ջուրն ես նվիրագործել և կրակը խնամել: 27) Եվ դու մեծարեցիր առաքինի մարդուն, հեռվից էր նա գալիս, թե մոտից: 28) Թեպետ ես զորավոր էի, բայց քեզնով ավելի զորավոր դարձա: 29) Եվ թեպետ ես վայելուչ էի, բայց քեզնով ավելի վայելուչ դարձա: 30) Եվ թեպետ արժանի էի, բայց քեզնով ավելի արժանի դարձա: 31) Եվ թեպետ ես նստած էի շողշողուն գահի վրա, քեզնով ա-

վերը փայլուն գահի վրա նստեցի։ 32) Եվ թեպետ ես վսեմ էի, քեզնով ավելի վսեմ դարձա 33) այս բարի մտքի, բարի խոսքի և բարի գործի միջոցով, որ դու գործադրեցիր։ 34) Դու առաքինի մարդ ես, նրանք հարգեցին քեզ և քեզնից հետո առաքինի մարդուն։ 35) Քո երկար պաշտամունքի և հաղորդակցության մեջ Աուհարմազդի հետ, երբ դու երկար ժամանակ Աուհարմազդին նվիրագործում էիր և հաղորդակից էիր լինում. 36) Անգործություն լինի սրանից*։

Գլ. 5

1) Ապա Չինվաթ կամուրջը նորից լայնացավ 9 նիզակի չափ։ 2) Սրոշ առաքինու և Ատր յազատի հովանավորությամբ ես դյուրությամբ, հաջողությամբ, քաջաբար և հաղթական կերպով անցա Չինվաթ կամրջի վրայով։ 3) [Ես ունեցա] ուժեղ հովանավորություն Միթր յազատից, Ռաշն արդարից, Վայու վեհից, Վահրամ հզոր յազատից, աշխարհ առաջացնող Աշտատ յազատից և վեհ մազդեյասնների կրոնի փառքից, 4) և պարկեշտ ֆրավաշիները[37] և այլ ոգիներ ողջունեցին ինձ՝ Արտա Վիրազիս, 5) ապա ես, Արտա Վիրազս, տեսա Ռաշն արդարին, որ դեղին ոսկե կշեռը ձեռքում ուներ և կշռում էր արդարներին և մեղավորներին։

6) Ապա Սրոշ առաքինին և Ատր յազատը բռն-

* Իմաստը պարզ չէ։ Թարգմ.։

նեցին իմ ձեռքը 7) և ասացին. «Արի քեզ ցույց տանք արքայությունն ու դժոխքը, փայլը և անդորրությունը, հեշտությունը, առատությունը, երջանկությունը, զվարթությունը, հանգիստը, ուրախությունը և դրախտի բուրմունքը՝ հատուցումն արդարներին: 8) Եվ քեզ ցույց կտանք խավարը, նեղությունը, դժվարությունը, վատությունը, վիշտը, չարությունը, ցավը, հիվանդությունը, սարսափը, երկյուղը, վնասակարությունը, ժահահոտությունը՝ դժոխքի տեսակ-տեսակ պատիժները այն բաների համար, որ դևերը, կախարդները և մեղավորները գործում են: 9) Եվ քեզ ցույց կտանք ճըշմարիտների և խաբեբաների տեղը: 10) Եվ մենք ցույց կտանք Ահուրամազդի և համշասպանդների հատուցումն լավ հավատացյալներին և արքայության վայելքները և դժոխքի չարիքները 11) և յազատների և համշասպանդների գոյությունը և Ահրիմանի[38] ու դևերի չգոյությունը, հարության և ապագա մարմնի[39] իրականությունը: 12) Ապա ցույց կտանք Ահուրամազդի և համշասպանդների հատուցումը պարկեշտներին արքայության մեջ, 13) և մենք ցույց կտանք չարագործների տեսակ-տեսակ պատիժները և պատուհասները դժոխքում Ահրիմանից և դևերի ճնշումները:

Գլ. 6

1) Ես եկա մի տեղ 2) և տեսա մի քանի մարդկանց հոգիներ, որ միասին կանգնած էին:

3) Եվ ես հարցրի հաղթական Սրոշ առաքինուն և Ատր յազատին, թե նրանք ովքե՞ր են և ինչու՞ են այնտեղ կանգնել:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը ասացին. 5) «Այստեղը կոչվում է Համեստական [միասին կանգնելու տեղ], 6) և այս հոգիները մինչև ապագա մարմնի [ընդունելը] մնում են այստեղ: 7) Եվ հոգիներն այն մարդկանցն են, որոնց բարի գործերը և մեղքերը հավասար են: 8) Երկրայիններին ասեք հետևյալը. «Ժլատությամբ և տառապանքով հետ մի մնացեք ամենահեշտ բարի գործից. 9) որովհետև ում բարի գործը երեք սրոշոչարանամով[40] ավելի է, քան մեղքը, թող նա գնա արքայություն. 10) [իսկ] ում մեղքն ավելի է՝ դժոխք. 11) ումը երկուսն էլ հավասար են, մինչև ապագա մարմնի [ընդունելը՝ պիտի] այս Համեստականում կանգնեն: 12) Եվ նրանց պատիժը ցուրտը կամ տաքն է, որ առաջանում է մթնոլորտի պտույտից և նրանք ուրիշ ձախորդություն չունեն»:

Գլ. 7

1) Եվ հետո ոտքս դրեցի աստղերի կայանը՝ հումաթ [բարի միտք], այնտեղ, որտեղ Հումաթը հյուր է: 2) Եվ տեսա առաքինի հոգիներ, որոնց փայլը շարունակ բոցավառվելով փողփողում էր որպես աստղ: 3) Եվ նրանց գահը և նստելու տեղը

պայծառության տակ էր, հոյակապ էր և փառքով լի:

4) Ապա ես հարցրի Սրոշ առաքինուն և Ատր յազատին. «Այստեղն ի՞նչ տեղ է և այս մարդիկ ո՞վքեր են»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Այստեղը աստղերի կայանն է և սրանք նրանց [այն մարդկանց] հոգիներն են, 7) որոնք երկրի վրա յաշտ չեն արել, գաթա չեն երգել և խնեթուկդաս[41] չեն արել: 8) Եվ նրանք ոչ թագավորություն են արել, ոչ իշխանություն և ոչ սարդարություն, 9) [բայց] ուրիշ բարի գործերով նրանք առաքինի են դարձել»:

Գլ. 8

1) Երբ երկրորդ քայլը արեցի, [հասա] լուսնի կայանը՝ Հուխտ [բարի խոսք], որտեղ Հուխտը հյուրասիրվում է. 2) և տեսա առաքինի հոգիների մի հավաքույթ:

3) Եվ ես հարցրի Սրոշ առաքինուն և Ատր յազատին. «Այստեղն ի՞նչ տեղ է և այս հոգիները ո՞վքեր են»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այստեղը լուսնի կայանն է և սրանք նրանց հոգիներն են, որոնք երկրի վրա յաշտ չեն արել, գաթա չեն երգել և խնեթուկդաս չեն կատա-

րել 6) և այլ բարի գործերով եկել են այստեղ, 7) և նրանց փայլը լուսնի փայլին է նման:

Գլ. 9

1) Երբ երրորդ քայլս արեցի, եկա Հուվարեշտ (բարի գործեր), այնտեղ, որտեղ Հուվարեշտը հյուրընկալվում է: 2) Այնտեղ է այն լուսավորությունը, որ կոչվում է բարձրագույնների բարձրագույնը: 3) Եվ ոսկեհուռ գահերի և անկողինների վրա ես տեսա առաքինիներին, 4) և այդ մարդկանց պայծառությունը նման էր արևի փայլին:

5) Եվ ես հարցրի Սրոշ առաքինուն և Ատր յազատին. «Այստեղն ինչ տեղ է, և այս հոգիներն ովքեր են»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 7) «Այստեղն արևի կայանն է և դրանք այն մարդկանց հոգիներն են, որոնք երկրի վրա լավ թագավորություն, իշխանություն և սարդարություն են արել»:

Գլ. 10

1) Չորրորդ քայլս արեցի և հասա լուսավոր Գարութմանը[42], հեշտությամբ լի. 2) և ինձ ընդառաջ եկան անցավոր հոգիները՝ օրհնություն հայցելով և գովեստ անելով, 3) և այս էին ասում,

«Ինչպէս ես դու, տաւքինիգ, այսպէս եղիր. 4) այն անցավոր և շատ չար աշխարհից առանց նեղութեան այս անանց աշխարհն ես եկել: 5) Ճաշակիր անմահութիւնը, որովհետև այսպէս դու ակնատես ես հավիտենական հաճույքին»:

6) Եվ որանից հետո ընդառաջեց ինձ Աուհարմազդի կրակը՝ Ատր յազատը, ողջունեց ինձ 7) և ասաց. «Փառավոր ծառա ես դու, Արտա Վիրազ, կանաչ փայտ, մազդեյասնների պատգամաբեր»:

8) Այն ժամանակ ես ողջունեցի և ասացի. 9) «Քո ծառադ, Ատր յազատ, որ երկրի վրա յոթ տարի շարունակ փայտ և բույր էր դնում քեզ վրա 10) և դու անվանեցիր ինձ կանաչ փայտ»:

11) Եվ հետո Աուհարմազդի հուրը, Ատր յազատն, ասաց. 12) «Արի քեզ ցույց տամ այն կանաչ փայտի ավազանը, որ ինձ վրա ես դրել»: 13) Մի տեղ տարավ և ցույց տվեց կապույտ ջրի մի մեծ ավազան 14) և ասաց. «Այս այն ջուրն է, որ այն փայտն է արտաթորել, որ դու ինձ վրա ես դրել»:

Գլ. 11

1) Եվ հետո բարձրացավ Ոհուման համշասպանդը իր ոսկեհուռ գահից. 2) և նա իմ ձեռքը բռնեց հանուն Հումաթի, Հուխաթի և Հուվարեշտի, տարավ մեջտեղը Աուհարմազդի, համշասպանդ-

ների և այլ առաքինիների 3) և Զարթոհեշտ Սպիտամանի և Բեյ Վշտասպի[43] և Ջամասպի[44] և Իսատվաստար Զարթոշտյանի և Փրավաշիների և այլ կրոնի զորավիգների և առաջնորդների, 4) որոնցից ավելի լուսավոր և ընտիր երբեք չեմ տեսել:

5) Եվ Ոհումանը* 6) [ասաց]. «Այս է Առհարմազդը»: 7) Եվ ես ցանկացա Ոհումանի առաջ պաշտամունք կատարել:

8) Եվ [նա] ասաց ինձ. «Ողջույն քեզ, Արտա Վիրազ, բարով ես եկել 9) այն անցավոր աշխարհից, այս մաքուր լուսավոր տեղն ես եկել»: 10) Ապա հրամայեց Սրոշ առաքինուն և Ատր յազատին. 11) «Տարեք Արտա Վիրազին, ցույց տվեք առաքինիների տեղը և հատուցումը, 12) նույնպես և մեղավորների պատիժները»:

13) Այն ժամանակ Սրոշ առաքինին և Ատր յազատն իմ ձեռքը բռնեցին 14) և ինձ տեղից տեղ տարան: 15) Եվ ես տեսա Առհարմազդին ու համշապանդներին, և տեսա այլ յազատների, 16) և ես տեսա Գայոմարտի[45], Զարթոհեշտի, Բեյ Վշտասպի, Ֆրաշոշտարի[46], Ջամասպի և բարեգործների և կրոնի առաջնորդների Փրավաշիներին:

ԳԼ. 12

1) Հետո ես եկա մի տեղ և տեսա 2) առատաձեռն մարդկանց հոգիները, որոնք քայլում էին

* Ձեռագրի այս մասում 17—23 տող բացթողում կա: Թարգմ.:

զարդարված 3) և այլ հոգիների վերևում էին ամբողջ շքեղության մեջ: 4) Եվ Աուհարմազդը շարունակ բարձրացնում էր այն առատաձեռն մարդկանց հոգիները, որոնք փայլում էին բարձր և զորավոր: 5) Ես ասացի. «Երանի քեզ, ով առատաձեռնների հոգին ես և այդքան բարձր այլ հոգիներից»: 6) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

7) Եվ ես տեսա նրանց հոգիները, որոնք երկրի վրա գաթա էին երգում և յաշտ անում, 8) և անհողդողդ էին մազդեյասնյան վեհ դենի մեջ, որ Աուհարմազդը ուսույց Զարթուշտին: 9) Երբ ես մոտեցա, [տեսա] ոսկեհուռ և արծաթահուռ պատմուճաններ, բոլոր պատմուճաններից ավելի զարդարուն: 10) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

11) Եվ ես տեսա խեթուկդաս անողների հոգիները զինաձև շքեղության մեջ, 12) երբ նրանցից վերև պայծառությունը շարունակ աճում էր: 13) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

14) Եվ ես տեսա առաքինիների և թագավորների հոգիները, 15) որոնց մեծությունը, վեհությունը, հզորությունը և հաղթականությունը շարունակ աճում էր, 16) երբ նրանք քայլում էին շքեղության մեջ՝ հագած իրենց ոսկե վարտիքը: 17) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

18) Եվ ես տեսա մեծերի և ճշմարտախոսների հոգիները, որոնք քայլում էին բարի պայ-

ծառության մեջ մեծ փառքով: 19) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

Գլ. 13

1) Ապա ես տեսա բարեմիտ, բարեբան և բարեգործ դյուրընթաց կանանց հոգիները, որոնք իրենց ամուսիններին համարում էին տերեր 2) ոսկեհուռ, արծաթահուռ և գոհարահուռ պատմուճանների մեջ:

3) Եվ ես հարցրի. «Դրանք ինչ հոգիներ են»:

4) Եվ Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սրանք այն կանանց հոգիներն են, որոնք երկրի վրա հարգել են ջուրը, կրակը, հողը, բույսերը, կովերին, ոչխարներին և Աուհարմազդի բոլոր լավագույն արարածներին: 6) Եվ նրանք գոհաբերություններ, դրոն, դրվատիք և երկրպագություն էին անում աստվածներին: 7) Եվ պաշտոն և դրվատիք էին մատուցանում երկնավոր և երկրավոր յազատներին, 8) և զվարճություն և ներդաշնակություն և երկյուղածություն և հնազանդություն էին ցույց տալիս իրենց ամուսիններին և տերերին, 9) և մազդեյասնյան դենի հանդեպ անկասկած էին, 10) բարեգործություն անելու մեջ փութաջան էին 11) և հանցանքից ժուժկալ էին»: 12) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

Գլ. 14

1) Եվ ես տեսա զոհ մատուցողների և գիրքը [Ավեստան] անգիր անողների հոգիները բարձր

լուսավորության և մեծ վսեմության մեջ: 2) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

3) Եվ ես տեսա նրանց հոգիները, որոնք հանդիսավորում էին կրոնը և աստվածների զոհաբերությունը անում էին և հրամայում էին անել, 4) որոնք նստած էին մյուս հոգիներից վերև և 5) նրանց բարեգործությունը երկնքից էլ բարձր էր: 6) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

7) Եվ ես տեսա զորականների հոգիները, որոնց երթը բարձրագույն հանգստի և երջանկության մեջ էր և թագավորի հետ միասին: 8) Եվ այն հերոսների լավ պատրաստած զենքերը և հանդերձանքը ոսկուց էին՝ գոհարներով զարդարած, գեղեցիկ պճնված և ամբողջությամբ ասեղնագործած: 9) Նրանց մեջ զարմանալի էին վարտիքները մեծ չափով, զորությամբ և հաղթանակով: 10) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

11) Եվ ես տեսա նրանց հոգիները, որոնք երկրի վրա շատ խրաֆստար[47] էին կոտորել: 12) Եվ ջրերի և հրի և կրակի և բույսերի փառքը, այլև երկրի փառքը նրանցից արծարծվում էր, և նրանք բարձրության և վսեմության մեջ էին: 13) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

14) Եվ ես տեսա երկրագործների հոգիները լուսավոր տեղում և փառավոր և խիտ և վեհաշուք պատմուճան հագած, 15) որոնք կանգնել էին ոգիների, ջրի, հողի, բուսականության և ոչխարների առաջ և օրհնություն էին կարդում:

16) Եվ գովեստ և շարժողություն և օրհնություն էին տալիս. 17) և նրանք մեծ գահ և վեհ տեղ էին գրավում: 18) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

19) Եվ ես տեսա արհեստավորների հոգիները, որոնք երկրի վրա իրենց տերերին և առաջնորդներին ծառայել էին, 20) երբ նրանք նստում էին լավ պատրաստված գահի վրա, որոնք մեծ էին, լուսավոր և փայլուն: 21) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

Գլ. 15

1) Եվ ես տեսա հովիվների հոգիները, որոնք երկրի վրա չորքոտանիներ և ոչխար էին բուծել և սնուցել, 2) և պաշտպանել էին գայլից, գողից և բռնակալ մարդկանցից, 3) և որոշյալ ժամանակին ջուր և խոտ և կեր էին տվել, 4) և պաշտպանել էին սաստիկ ցրտից և տաքից, 5) և արուներին իր ժամանակին մոտ էին թողել [էգերին] և [անպատեհ ժամանակ] արգելել էին, 6) և շատ մեծ օգուտ և շահ, բարերարություն, ուտելիք և հագնելիք էին տվել այն ժամանակվա մարդկանց: 7) Սրանք քայլում էին փայլի մեջ զարդարուն արդասիքով, մեծ անդորրությամբ և ցնծությամբ: 8) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

9) Եվ ես տեսա շատ ոսկե գահեր, լավ անկողիններ՝ բարձր զարդարված թանկագին կերպասներով, 10) որոնց վրա նստած էին քաթխա-

դաների և դատավորների հոգիները, համայնքի պետերը, որոնք միջնորդություն և իշխանություն էին բանեցնում: 11) Եվ ավերված մի տեղ մարգարանակ էին դարձել, 12) և բերել էին շատ ջը-րանցքներ, գետեր և աղբյուրներ մշակության և մարգարանակության և մարդկանց օգտի համար: 13) Երբ նրանք կանգնում էին ջրերի, բույսերի և տաքինիների փրավաշիների առաջ մեծ գո-հությամբ և մեծ հաղթանակով, 14) ողջույն և գովասանք էին տալիս և շնորհակալություն հայտնում: 15) Եվ այդ ինձ թվաց շատ վսեմ:

16) Եվ ես տեսա հավատացյալների, ուսուցիչների և հարցաքննողների հոգիները լուսափայլ գահի վրա և մեծագույն ցնծության մեջ: 17) Եվ այդ ինձ թվաց վսեմ:

18) Եվ ես տեսա դատավորների և հաշտություն որոնողների վեհ սիրող հոգիները, 19) որոնց փայլը աստղերի, լուսնի և արեգակի նման ծավալվում էր. 20) և նրանք հանդարտությամբ անցնում էին մթնոլորտի լույսի մեջ:

21) Եվ ես տեսա տաքինիների գերազանց էակներին, ամբողջը անդորրություն և լիություն մեջ և շատ շահաստղամներ անուշահոտ, ամբողջովին զարդարուն և ամբողջովին հիանալի և լուսավոր և լիափառք, ամբողջը ցնծություն, ամբողջը անդորրություն մեջ, 22) այնպես որ ոչ ոք նրանցից կշտանալ չի կարողանում:

Գլ. 16

1) Այնուհետև Սրոշ առաքինին և Ատր յազատը բռնեցին իմ ձեռքը և ես այնտեղից ավելի առաջ գնացի: 2) Մի տեղ հասա և տեսա մի մեծ գետ՝ խավար, ահռելի դժոխքի պես: 3) Շատ հոգիներ և Ֆրավաշիներ կային այդ գետի մեջ. 4) կային այնպիսիները, որ անցնել չէին կարողանում և կային այնպիսիները, որոնք մեծ նեղությամբ անցնում էին և կային, որ հեշտությամբ անցնում էին:

5) Եվ ես հարցրի. «Այս ո՞ր գետն է, և այս մարդիկ ո՞վքեր են, որ կանգնած են այսպես տագնապի մեջ»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 7) «Այս գետը այն առատ արտասուքներն են, որ մարդիկ անցավորների հետևից թափում են և լաց ու շիվան ու աղաղակ են բարձրացնում. 8) այդ արտասուքը ապօրինաբար են հեղում և այս գետը վարարեցնում: 9) Նրանք, որոնք չեն կարողանում անցնել, նրանք են, որոնց գնալուց հետո շատ լաց, շիվան ու աղաղակ են արել. 10) իսկ հեշտ անցնողները նրանք են, որոնց հետևից քիչ են լացել: 11) Երկրավորներին ասա. «Դուք, որ երկրի վրա եք, լաց; շիվան և աղաղակ մի՛ անեք ապօրինաբար, 12) որովհետև սրանք են այն չարիքը և դժվարությունները, որ ձեր անցավորների հոգուն են հասնում»:

Գլ. 17

1) Այնուհետև ես նորից հետ եկա Չինվաթ կամուրջը: 2) Ես տեսա այն չարագործների հոգիներից [մեկը], որոնց առաջին երեք գիշերներում այնքան չարիք և թշվառություն էին հասցրել, որ նրանք երբեք երկրի վրա այնքան նեղություններ չէին տեսել: 3) Եվ ես հարցրի Սրոշ առաքինուն և Ատր յազատին, թե՝ այդ ո՞ւմ հոգին է:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս չարագործի հոգին այնտեղ թափառում էր, երբ այն չարագործը մեռավ այնտեղ, ուր հոգին ավանդեց: 6) Եվ նա կանգնեց սնարի մոտ և երգեց գաթաների խոսքերը. 7) «Արարիչ Ահուրամազդ, ո՞ր երկիրը գնամ և ո՞ւմ ապավեն վերցնեմ»: 8) Եվ նրան այդ գիշեր այնքան չարիք և թշվառություն հասավ, 9) որքան մի մարդու, որ ապրում է երկրի վրա և ապրում է դժվարությունների և չարիքների մեջ»:

10) Ապա մի ժանտահոտ սառը քամի ընդառաջ եկավ նրան: 11) Հոգուն այնպես թվաց, որպես թե դա գալիս է հյուսիսային օթևանից, դևերի օթևանից. այդ ամենաժանտահոտ քամին, որի նմանը երկրի վրա չէր տեսել: 12) Եվ այն քամու մեջ նա տեսավ իր կրոնը և արարքը, որպես մի լպիրշ կին՝ մերկ, քայքայված, բերանը բաց, հետ ծռված ծնկներով, վախա նստատեղով, անսահման արատավորված, այնպես որ [արատի]

բիծը բծին էր կպչում, ինչպես այն անզգամ գազրելի և ժանտահոտ խրաֆստրները:

13) Եվ այն չարագործ հոգին ասաց. «Դու ով ես, որ Աուհարմազդի և Ահրիմանի արարածներից քեզնից ավելի անճոռնի, գազիր և ժանտահոտ չեմ տեսել»:

14) Կինը նրան պատասխանեց. «Ես քո չար գործերն եմ, ով երիտասարդ չարամիտ, չարախոս և չարագործ, չարակրոն: 15) Քո կամքի և գործերի պատճառով է, որ ես [այսպես] տգեղ եմ և վատ, մեղսապարտ, տանջված, արատավորված, ժանտահոտ, վատաբախտ, տառապյալ, ինչպես երևում եմ քեզ: 16) Երբ դու տեսնում էիր մեկին, որ զոհ էր մատուցանում, օրհնություն, գովեստ, ողջույն կարդում և աստվածներին փառաբանում 17) և պաշտպանում էր ու հովանավորում ջրին, կրակին, ոչխարներին, բույսերին և այլ վեհ արարածներին, 18) [այդ ժամանակ] դու Ահրիմանի դևերի կամքն էիր կատարում և մեղսալից արարքներ ցուցադրում: 19) Երբ դու տեսնում էիր մեկին, որ հայթայթում էր հյուրասեր ընդունելություն և տալիս էր արժանիորեն որևէ տուրք և ողորմություն վեհերի և արժանիների օգտին, որոնք գալիս էին հեռվից կամ մոտից, 20 [այդ ժամանակ] դու ընչաքաղցություն էիր անում և դուռդ փակում էիր: 21) Եվ թեպետ ես պիղծ էի և վատ էի համարվում, քեզնով ավելի պիղծ դարձա: 22) Եվ թեպետ ես սարսափելի էի, բայց քեզնով ավելի

սարսափելի դարձա: 23) Եվ թեպետ դողդոջուն էի, բայց քեզնով ավելի դողդոջուն դարձա: 24) Եվ թեպետ ես նստում էի հյուսիսային վայրում [գեհենի մոտ], քո շնորհիվ ավելի հյուսիս նստեցի 25) այս չարամտությունների, չարախոսությունների և չարագործությունների շնորհիվ, որ դու կատարում էիր: 26) Երկար ժամանակ ես անիծվում էի Զար ոգու երկար անեծքների և չար հաղորդակցության շնորհիվ[45]»:

27) Ապա չարագործների հոգին առաջին քայլն արեց դուշ հումաթի [չար մտքի] վրա, երկրորդ քայլը դուշ հուխտի [չար խոսքի] վրա և երրորդ քայլը դուշ հուվարշտի [չար գործի] վրա 28) և չորրորդ քայլով անցավ դժոխք:

Գլ. 18

1) Այն ժամանակ Սրոշ առաքինին և Ատր յազատը իմ ձեռքը բռնեցին այնպես, 2) որ ես անվնաս անց հասա: 3) Այս ձևով ես զգացի ցուրտ և տաք, չորություն և ժահահոտություն, 4) որ երբեք երկրի վրա այդ աստիճան ոչ տեսել էի, ոչ լսել: 5) Եվ երբ ավելի առաջ գնացի, 6) տեսա դժոխքի ագահ խորքը որպես ամենասահմռկեցուցիչ փոս, որ նեղ էր մի շատ նեղ և սարսափելի տեղ, 7) այնպես մութ ու խավար, որ անհրաժեշտ էր ձեռքը բռնել, 8) և այնպես ժահահոտ, որ ամեն ոք, որի քիթը մտնի այն քա-

մին, ճիգեր կանի, կդողա և վայր կընկնի։ 9) Եվ այսպիսի խիստ անձկության պատճառով ոչ մի մարդու գոյությունը հնարավոր չէ։ 10) Եվ ամեն մարդ մտածում է, որ ինքը մենակ է։ 11) Ամեն տեղ նույնիսկ ամենափոքր խրաֆստարը սարի չափ բարձր է. 12) և չարագործների հոգիները այնպես են պատառոտում, բռնում և բզկտում, ինչպես վայել չէ [անգամ] շանը։ 13 Եվ ես հեշտությամբ ներս անցա գեղապեմ և հայլթական Սրոշ ասաքինու և Ատր յազատի հետ։

Գլ. 19

1) Եկա մի տեղ և տեսա մի մարդու հոգի, 2) որի երաստանքից կարծես օձը գերանի նման ներս էր մտել և բերնից դուրս եկել, 3) և այլ բազմաթիվ օձեր բռնել էին նրա ամբողջ մարմնի անդամները։

4) Եվ ես հարցրի Սրոշ ասաքինուն և Ատր յազատին. 5) «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»։

6) Սրոշ ասաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 7) «Այդ հոգին այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա սոդոմականություն էր անում. 8) և թույլ էր տալիս մարդկանց գալ իր մարմնի վրա. 9) [դրա համար] այժմ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»։

Գլ. 20

1) Եկա մի տեղ և տեսա մի կին, 2) որին դավաճ դավաճի հնաևից շարունակ մարդկանց ապականությունն և կղկղանք էին տալիս, որ ուտի։

3) Եվ ես հարցրի։ «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»։

4) Սրոշ տաաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ դաշտանի ժամանակ իրեն չէր զգուշ և օրինավորապես չէր արգելում իրեն մոտենալ ջրին և կրակին»։

Գլ. 21

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի գլխի կաշին լայնացնում էին և ծանր մահով սպանում նրան։

3) Հետո ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»։

4) Սրոշ տաաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս հոգին այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա մի տաաքինի մարդ էր սպանել»։

Գլ. 22

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի բերանը կղկղանք և կանանց դաշտան էին լցնում,

3) և նա շարունակ եփում էր իր արժանավոր զավակին և ուտում:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս հոգին այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա գաշտանով կնոջ հետ հարաբերություն է ունեցել, 7) և [նրա] ամեն անգամվա հանցանքը 15 և կես թանապուհր[49] էր»:

Գլ. 23

1) Հետո ես տեսա մի մարդու հոգի, 2) որ քաղցից և ծարավից շարունակ աղաղակում էր, թե մեռնում եմ: 3) Եվ նա իր մազերն ու միրուքը փետում էր և արյունը խմում, և փրփուրը բերնից շարունակ թափվում էր ցած:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սա այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա Հորվատատի[50] և Ամերետատի ջուրն ու բույսերը ուտում էր խոսելով և ապօրինաբար, և վաժ [աղոթք] չէր կարդում, 7) և հանցապարտության պատճառով յաշտ չէր անում: 8) Այսպես արհամարհված էին նրա կողմից Հորվատատի ջուրը

և Ամերետատի բուսականությունը: 9) Այժմ այդ հոգին պետք է այդպիսի ծանր պատիժ կրի»:

Գլ. 24

1) Հետո ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ ստինքներից կախված էր դժոխքում. 3) և խրաֆստարները նրա ամբողջ մարմինը բռնել էին:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Սա այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր ամուսնուն թողել էր 7) և մարմինը ուրիշ մարդկանց էր տվել և անբարոյականություն էր անում»:

Գլ. 25

1) Ապա ես տեսա մի քանի տղամարդկանց և մի քանի կանանց հոգիներ, 2) որոնց ոտները և պարանոցը և միջին մասերը մի խրաֆստար շարունակ կրծում էր և բաժանում մեկը մյուսից:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սրանք այն չարագործների հոգիներն են,

որոնք երկրի վրա մի կոշիկով[51] էին ման գալիս, քայլում էին բաց[52] և միզում էին կանգնած[53], և այլ անվայել սպասարկություններ էին կատարում»:

Գլ. 26

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ լեզուն շարունակ քաշում էր դեպի պարանոցը և կախ էր ընկած մթնոլորտից:

3) Եվ ես հարցրի. «Այս ում հոգին է»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր ամուսնուն ու տիրոջը արհամարհում էր, անիծում ու հայհոյում և անարգում էր նրան»:

Գլ. 27

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին կապիճով և գուլարով[54] հող ու մոխիր էին չափում և տալիս, որ ուտի:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա կապիճն ու գուլարը, կշիռն ու չափը ուղիղ չէր պահում. 6) Նա խառնում էր

ջուրը գինու հետ և մոխիրը՝ հացահատիկներին և մարդկանց վաճառում էր թանկ գնով, 7) բարի մարդկանցից բան էր գողանում և հափշտակում»:

Գլ. 28

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, որին բռնել էր մթնոլորտը, 2) և հիսուն դև նետանման օձերով հարվածում էին նրան առջևից և հետևից:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ աշաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա վատ իշխանություն է արել, 6) և մարդկանց հետ անողորմ է եղել և ծեծող, [և նրանց] վերքեր ու բազմազան պատիժներ է հասցրել»:

Գլ. 29

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի լեզուն բերանից դուրս էր եկել և խրաֆստարները շարունակ կրծում էին:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Սա այն մարդու հոգին է, որ երկրի վրա զրպարտություններ է արել և մարդկանց իրար հետ է գցել, 6) և նրա հոգին ի վերջո փախել [մահել] է դժոխք»։

Գլ. 30

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի մարմնի անդամները մեկը մյուսից կտրված բաժանված էին։

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»։

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Սա այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա կովերի, ոչխարների և այլ չորքոտանիների ապօրինի շատ սպանդներ է կատարել»։

Գլ. 31

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ ոտից մինչև գլուխ դրած էր գեղարանի վրա, 3) և հազար դև ոտնահարում էին և մեծ չարությամբ և դաժանությամբ հարվածում էին նրան։

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»։

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին.

6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա մեծ կարողություն է հավաքել, ինքը չի կերել, բարի մարդկանց [վեհերին] չի տվել և բաժին չի հանել, [այլ] մառանումն է պահել»:

Գլ. 32

1) Եվ ես տեսա մի ծույլ մարդու հոգի, որ կոչվում էր Դավանուս[55], 2) որի ամբողջ մարմինը խրաֆստարները կրծում էին, բայց աջ ոտքը չէին կրծել:

3) Եվ ես հարցրի, թե այդ մարմինն ինչ հանցանք է գործել:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին· 5) «Սա ծույլ Դավանուսի հոգին է, որ երկրի վրա երբեք մի լավ բան չի արել. 6) բայց այս աջ ոտքով մի որցակ խոտ է գցել լծի եզան առաջը»:

Գլ. 33

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի լեզուն որդերը կրծում էին:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկ-

րի վրա սուտ և խաբեական բաներ շատ է ասել 6) և արարածներին շատ վնաս և անիրավություն է պատճառել»:

Գլ. 34

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որի ամբողջ մարմինը խրաֆստարները կրծել էին:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա հյուսերից և մազերից գցել է կրակի վրա, 6) գլխի մազերն ու թեփը և մարմնի մազերը գցել է կրակի վրա, 7) և կրակը մարմնի տակ է դրել և իր մարմինը կրակի վրա է պահել»:

Գլ. 35

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ ատամներով ծամում էր իր դիակը և ուտում:

3) Եվ ես հարցրի. «Ո՞վ է այդ հոգին»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա կախարդություն է արել»:

Գլ. 36

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ կանգնած էր դժոխքում ինչ-որ օձի ձևով, սյունի նման. 3) և նրա գլուխը մարդու գլխի նման էր և մնացած մարմինը օձի նման էր։

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»։

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա ուխտադրժություն է արել, 7) և նա փախել [մահել] է դժոխք օձի կերպարանքով»։

Գլ. 37

1) Եվ ես տեսա մի քանի տղամարդկանց և մի քանի կանանց հոգիները, 2) որոնք դժոխքում գլխիվայր կախված էին։ 3) Եվ նրանց ամբողջ մարմինը կրծում էին օձը, կարիճը և այլ խրաֆստարները։

4) Եվ ես հարցրի. «Այդ ինչ մարդկանց հոգիներ են»։

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սրանք այն մարդկանց հոգիներն են, որոնք երկրի վրա չեն հոգացել ջրի և կրակի մասին. 7) աղտոտությունները լցրել են ջրի և կրա-

կի մեջ և իրենց [չար] նայվածքով կրակը հանգցրել»:

Գլ. 38

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին տալիս էին ուտելու մարդկանց միսն ու գլուխը՝ արյունի, կղկղանքի և այլ աղտոտությունների հետ:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա ջրի և կրակի մեջ է գցել աղտոտություններ և գլուխներ և յուր մարմինը և [այլ] մարդկանց մարմինները 6) և գլուխը շարունակ մենակ է քարշ տվել և աղտոտել, 7) և այդ զբաղմունքի ժամանակ չի լվացվել»:

Գլ. 39

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ շարունակ ուտում էր մարդկանց կաշին և միսը:

3) Եվ ես հարցրի. «Այդ ո՞ւմ հոգին է»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա կտրել է վարձկանների օրավարձը և բաժ-

նետաերերի բաժինը. 6) այժմ [նրա] հոգին պետք է ծանր պատիժ կրի»:

Գl. 40

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ մի սար շալակին քաշում էր. 3) և ձյունին ու ցրտին այն սարը մեջքին ուներ:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա խաբեություն և պարսավանք և անարժեք խոսքեր շատ է խոսել մարդկանց վրա. 7) և այժմ նրա հոգին այսպիսի խիստ սառնամանիքի պատիժ է կրում»:

Գl. 41

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին տալիս էին ուտելու կղկղանք, գեխ և աղտոտություն. 3) և դևերը շարունակ հարվածում էին նրան քարերով և տապարով:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին

է, որ մի տաք բաղնիքում է եղել, որտեղ հաճախել են շատ մարդիկ. 7) և նրանց աղտեղությունները ու դիակները նա ջրի մեջ, կրակի և հողի վրա է դրել. 8) և առաքինիները ներս են գնացել և չարագործները դուրս են եկել»:

Գլ. 42

1) Եվ ես տեսա մի քանի մարդկանց հոգիներ, 2) որոնք ողբում էին և ցավալի աղաղակներ էին բարձրացնում:

3) Եվ ես հարցրի. «Դրանք ինչ մարդիկ են»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սրանք [այն մարդկանց] հոգիներն են, որոնք հորը մոր մեջ էին փնտրում*: 6) Եվ երբ ծնվեցին, հայրը նրանց չճանաչեց, 7) և այժմ [նրանք] ողբում են հոր համար»:

Գլ. 43

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի ոտքերի մոտ ընկած էին մի քանի երեխաներ, և նա շարունակ ողբում էր:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

---

* Պարզ չէ: Թարգմ.:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա չի ճանաչել իր սեփական երեխաներին»:

Գլ. 44

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ իր ստինքներով մի սար էր փորում. 3) և նա իր գլխին գլխարկի նման մի ջաղացի քար ուներ:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր սեփական զավակին ոչնչացրել և դիակը դեն է շպրտել»:

Գլ. 45

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի մարմնի բոլոր անդամները որդը կրծել էր:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա սուտ երդում է կերել, 6) բարի մարդկանց ունեցվածքը կողոպտել և անարգներին է տվել»:

Գլ. 46

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ մարդկանց գանգերը ձեռքին բռնած՝ նրանց ուղեղը ուտում էր:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա [իր] ունեցվածքը ոչ թե ազնըվությամբ է ձեռք բերել, այլ մարդկանց ինչքից է գողացել, 6) և [ապա] ինքը այդ [ամենը] թողել է իր թշնամիներին, 7) և նա միայնակ պետք է լինի դժոխքում»:

Գլ. 47

1) Եվ ես տեսա շատ մարդկանց, 2) որոնց գլուխը և միրուքն ածիլած էր, գույնը դեղին և ամբողջ մարմինը ապականված, և խրաֆստարները սողում էին վրան:

3) Եվ ես հարցրի. «Սրանք ո՞վքեր են»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Սրանք այն մարդկանց հոգիներն են, որոնք երկրի վրա ուխտադրուժ և խաբեբա են եղել, 6) բոլոր մարդկանց կործանել են և վեհ օրենքից անարգ օրենքին են տարել, 7) և շատ կրոններ ու հավատներ աշխարհում ընթացիկ դարձրել»:

124—6

Գլ. 48

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին դևերը, ինչպես շներ, պատառոտում էին: 3) Այս մարդը միս էր տալիս շներին, նրանք չէին ուտում 4) և շարունակ լափում էին նրա կուրծքը, ոտները, փորը և գլուխը:

5) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի պատիժ է կրում»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 7) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա հովվի և տանտիրոջ շների կերակուրը հետ է պահել, կամ նրանց հարվածել է և սպանել»:

Գլ. 49

1) Եվ ես տեսա մի քանի մարդկանց հոգիները, 2) որոնք շարունակ ուտում էին մարդկանց կղկղանքը, աղտոտությունները, դիակները և ապականությունները. 3) և դևերը փորում հանում էին քարերը և հետևից շարունակ շպրտում էին: 4) Մինչև անգամ նրանք մի լեռ էին կրում իրենց մեջքին և չէին կարողանում տանել:

5) Եվ ես հարցրի. «Այդ մարմիններն ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիները այդպիսի պատիժ են կրում»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին.

7) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա գետին են չափել և չափել են խաբեբայորեն. 8) և շատ մարդկանց անտառն ու անպտուղ են դարձրել, և նրանք կարիքի ու չքավորության մեջ են ընկել. 9) և միշտ պետք է ծանր հարկ վճարեն»:

Գլ. 50

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ մազ ու եղունգով փորում էր մի սար. 3) և դևերը [նրա] հետևից [ընկած] նետի նման օձերով հարվածում և սարսափեցնում էին նրան:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա մարդկանց սահմանագծի քարերը շարժել և իրեն է սեփականացրել»:

Գլ. 51

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի մարմնի միսը երկաթի պատառաքաղով քաշում էին և տալիս էին նրան ուտելու:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա մարդկանց հետ կեղծ պայմաններ է կապել»:

Գլ. 52

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին գործ էին ածում որպես նետանման խթան, նետ, քար և կացին:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա ուխտադրժություն շատ է արել. 6) և ուխտը դրժել է առաքինիների և չարագործների հետ, 7) որովհետև երկուսն էլ ուխտ է՝ թե առաքինիների և թե չարագործների հետ»:

Գլ. 53

1) Հետո Սրոշ առաքինին և Ատր յազատն իմ ձեռքը բռնեցին 2) և ինձ տարան Չակաթ Դայիտի, Չինվաթ կամրջի տակը մի անապատ տեղ 3) և այն անապատի մեջ, Չինվաթ կամրջի տակ, գետնի մեջ երևաց դժոխքը:

4) Այնտեղից Ահրիմանի, դևերի, դրուջների և ուրիշ շատ չարագործների հոգիների հառաչան-

քը և աղաղակն էր լսվում: 5) Ինձ այնպես թվաց, թե չոթ պետությունների գետինը ցնցվեց և այդ աղաղակը և հառաչը լսվեցին, և ես վախեցա. 6) Եվ ես խնդրեցի Սրոշ առաքինուն և Ատր յազատին, 7) որ ինձ այնտեղ չտանեն, այլ հետ դարձնեն:

8) Այն ժամանակ Սրոշ առաքինին և Ատր յազատն ինձ ասացին. 9) «Մի վախենար, որովհետև այստեղից քեզ ոչ մի երկյուղ չկա»: 10) Եվ Սրոշ առաքինին և Ատր յազատը առջևից գնացին, 11) և հետևից ես, Արտա Վիրազս, ներս գնացի խավար դժոխքը:

Գլ. 54

1) Եվ ես տեսա կործանիչ, սարսափելի, սոսկալի, վշտալի, չարությամբ լի և ժահահոտ ամենախավար դժոխքը: 2) Հետո մտածեցի և ինձ այնպես թվաց, 3) որ դա մի փոս է, որ հազար կանգուն չի հասնի նրա հատակին: 4) Եվ եթե աշխարհի բոլոր փայտը ժահահոտ խավար դժոխքում կրակի վրա դնեն, երբեք հոտ չի տա: 5) Եվ նույնպես որքան ականջը մոտ է աչքին և որքան ձիու բաշը մազ ունի, 6) այնքան մոտիկ և բազմաթիվ են չարագործների հոգիները, 7) բայց իրար չեն տեսնում և աղմուկը չեն լսում. 8) յուրաքանչյուրը մտածում է, թե նա մենակ է: 9) Եվ նրանց առաջն է դժոխքի մթության խավարը և գարշահոտությունը, վերքերի սարսափը և տեսակ

տեսակ պատիժները, 10) այնպես որ ով մի օր անց է կացնում դժոխքում, աղաղակում է. 11) Միթե բոլորովին ինը հազար տարին չի անցել, երբ ինձ այս դժոխքից պետք է ազատեն»։

Գլ. 55

1) Այնուհետև ես տեսա չարագործների հոգիները, որոնք մեռնում էին այդ սարսափելի խավար տեղում՝ կրելով զանազան վերքեր և տեսակ-տեսակ պատիժներ, ինչպես են՝ ձյունի սարսափը, ուժեղ սառնամանիքը, թեժ վառվող կրակի տոթը, ժահահոտությունը, քարը, մոխիրը, կարկուտը, անձրևը և շատ այլ չարիքներ։

2) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի ծանր պատիժ է կրում»։

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն չարագործ մարդկանց հոգիներն են, որոնք երկրի վրա մահու արժանի շատ հանցանքներ են գործել. 5) Վառմյան[56] կրակը հանգցրել և որընթաց գետի կամուրջը քանդել են, 6) խաբեություն և անարդարություն են արել և շատ կեղծ վկայություն են տվել, 7) և նրանց ցանկությունն է եղել անիշխանությունը, և շնորհիվ իրենց ժլատության, ագահության, տափանքի, դայ-րույթի և մախանքի, մի անմեղ առաքինի մարդ

են սպանել 8) և շատ խաբէութիւններ արել:
9) Այժմ նրանց հոգիները այսպիսի ծանր վիրավորանքներ և պատիժներ պէտք է կրեն»:

Գլ. 56

1) Այնուհետև ես տեսա այն մարդկանց հոգիները, որոնց օձերը կծում և շարունակ կրծում էին:

2) Եվ ես հարցրի. «Սրանք ո՞ւմ հոգիներն են»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա խարդավանել են աստվածներին և կրոնին»:

Գլ. 57

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, որոնց գլուխները կտրված և մարմնից բաժանված էին, և լեզուները շարունակ աղաղակ էին բարձրացնում:

2) Եվ ես հարցրի. «Սրանք ո՞ւմ հոգիներն են»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն կանանց հոգիներն են, որոնք երկրի վրա շատ լաց ու շիվան են արել և գլխին ու երեսին խփել»:

Գլ. 58

1) Այնուհետև ես տեսա մի մարդու հոգի, 2) որին քաշ տվողները քաշ էին տալիս դժոխք և շարունակ հարվածում էին։

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել»։

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա գլուխը, երեսը, կեղտոտ ձեռքերը և այլ անդամների աղտոտությունը լվացել է կանգնած մեծ ջրում, ավազանում և գնայուն ջրում. 6) և նեղացրել է Հորվատատ համշասպանդին»։

Գլ. 59

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ շարունակ ողբում էր և ստինքների միսն ու կաշին շարունակ պոկում էր և ուտում։

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի ծանր պատիժ է կրում»։

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ սեփական զավակին թողնում էր, որ կարիքից և սովից լաց լինի»։

Գլ. 60

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որի մարմինը դրել էին արույրյա կաթսայի մեջ և շա-

բունակ եփում էին, 3) նրա աջ ոտը կաթսայից դուրս էր մնացել:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ կենդանության ժամանակ վավաշոտությամբ և անվայելչությամբ հաճախ եկել է ամուսնացած մի կնոջ մոտ: 7) Եվ նրա ամբողջ մարմինը մեղալից է. 8) և այն աջ ոտով նա հարվածել, սպանել և ոչնչացրել է շատ գորտեր, մրջյուններ, օձեր և կարիճներ և այլ խրաֆստարներ»:

Գլ. 61

1) Եվ ես տեսա այն չարագործների հոգիները, 2) որոնք լափում էին և փսխում և նորից լափում ու փսխում:

3) Եվ ես հարցրի. «Սրանք ի՞նչ հոգիներ են»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որո՛նք երկրի վրա ոգիներին չեն հավատացել. 6) նրանք ապերախտ են եղել արարիչ Ահուրամազդի կրոնի հանդեպ, 7) և նրանք կասկած են ունեցել արքայության վայելքների, դժոխքի չարիքների, հարության և ապագա մարմնի գոյության նկատմամբ»:

Գլ. 62

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ երկաթի սանրով իր գոգն ու կուրծքն էր կտրատում:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի պատիժ է կրում»:

4) Սրոշ ասաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 5) «Սա այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր ամուսնուն և տիրոջը արհամարհել է, վատաբար է եղել և այդպես էլ մնացել է 6) և, միանալով մի ուրիշ մարդու հետ, անվայել գործ է կատարել»։

Գլ. 63

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ լեզվով լիզում էր մի տաք հնոց 3) և իր ձեռքն այրում էր այն հնոցի տակ:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի պատիժ է կրում»:

5) Սրոշ ասաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սա այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր ամուսնուն ու տիրոջը պատասխաններ է տվել և շատ լեզու է գործածել. 7) և նա անհնազանդություն է արել և նրա կամքով չի կե-

նակցել նրա հետ, 8) և նա գողացել է իր ամուսնու ունեցվածքը և ծածկաբար իր համար մթերանոց շինել»:

Գլ. 64

1) Եվ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ հետ ու առաջ էր գնում գոռում-գոչումով, 3) և նրա գլխին թափվում էր ձյունախառն կարկուտ. 4) և ոտների տակ հոսում էր տաք, հալված արույր. 5) և իր գլուխն ու երեսը դանակով շարունակ խոցոտում էր:

6) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ինչ հանցանք է գործել, որ հոգին այսպիսի ծանր պատիժ է կրում»:

7) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 8) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ անզգամաբար ուրիշ մարդկանցից հղիացավ 9) և իր երեխային փչացրեց: 10) Ցավից և պատուհասից նրան թվում է, թե լսում է երեխայի աղաղակը, և նա վազում է, 11) վազելն այնքան ուժեղ է թվում, որ կարծես թե քայլում է տաք արույրի վրա: 12) Եվ նա շարունակ լսում է երեխայի ձայնը և իր գլուխն ու երեսը դանակով կտրատում է և պահանջում երեխային: 13) Եվ նա չի տեսնի նրան մինչև հրաշակերտ հարությունը և այս պատիժը պետք է կրի»:

Գլ. 65

1) Եվ ես տեսա մի քանի հոգիներ, 2) որոնց կուրծքը լցվել էր ցեխի և ժանտահոտության մեջ. 3) և մի սուր մանգաղ շարունակ շարժվում էր նրանց ոտների և այլ անդամների միջով. 4) և նրանք շարունակ կանչում էին իրենց հորն ու մորը:

5) Եվ ես հարցրի. «Այդ հոգիներն ո՞վքեր են, 6) և նրանք ի՞նչ հանցանք են գործել, որ [նրանց] հոգին այսպիսի ծանր պատժի է ենթարկվել»:

7) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 8) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա իրենց հորն ու մորը վշտացրել են 9) և երկրի վրա հոր ու մորից ներողամտություն և թողություն չեն հայցել»:

Գլ. 66

1) Եվ ես տեսա մի մարդու և մի կնոջ հոգիները, 2) որոնք լեզուները հանել էին և օձերը կրծում էին [նրանց] բերանները:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմինները ի՞նչ հանցանք են գործել. 4) այդ հոգիներն ո՞վքեր են»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սրանք այն մարդկանց հոգիներն են, որոնք երկրի վրա գրպարտությամբ են զբաղվել և մարդկանց իրար դեմ լարել»:

Գլ. 67

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որ կախված էր մի ոտքից դժոխքի խավարում: 3) Եվ նա ձեռքին ուներ մի երկաթե մանգաղ և շարունակ կտրատում էր իր լանջը և անութները. 4) և նա [իր] աչքի մեջ մի երկաթե բևեռ էր խփում:

5) Եվ ես հարցրի. «Սա ո՞ւմ հոգին է և ի՞նչ հանցանք է գործել»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 7) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որի խնամակալությունը մի քաղաք է հանձնված եղել 8) և այն, ինչ արժանի էր անել և հրամայել, նա չի արել և չի հրամայել, 9) և թերի կապիճ և երկայնության չափեր է գործածել 10) և չի լսել աղքատների և աշխատավորների աղաղակները»:

Գլ. 68

1) Եվ ես տեսա մի մարդու և մի կնոջ հոգիները, 2) որոնց շարունակ քաշ էին տալիս՝ մարդուն դեպի դրախտ, իսկ կնոջը դեպի դժոխք: 3) Եվ կինը ձեռքը դցում էր մարդու կապին և քուստիկին 4) և ասում էր. «Այդ ինչպե՞ս է, որ երբ մենք կենդանի էինք, ամեն բարիք մեզ համար ընդհանուր էր, 5) իսկ այժմ քեզ դեպի դրախտ են քաշում, ինձ՝ դեպի դժոխք»:

6) Մարդն ասաց. «Նրա համար, որ այն, ինչ որ բարի մարդկանց, արժանավորների և չքավորների համար ստացել եմ, տվել եմ [նրանց]: 7) Եվ ես գործադրում էի բարեմտությունը, բարեխոսությունը և բարեգործությունը: 8) Ես անսացի աստվածներին և արհամարհեցի դևերին, 9) և ես հավատարիմ մնացի մազդեյասնյան վեհ կրոնին. 10) բայց դու անտեսեցիր բարի մարդկանց, չքավորներին, արժանավորներին և կարավանի մարդկանց. 11) դու արհամարհեցիր աստվածներին և կուռքերին պաշտեցիր. 12) դու գործադրեցիր չարամտությունը, չարախոսությունը և չարագործությունը. 13) դու հավատարիմ մնացիր Ահրիմանի և դևերի կրոնին»:

14) Այն ժամանակ կինն ասաց մարդուն. 15) «Մեր կենդանության ժամանակ քո մարմինն ինձ վրա կատարյալ տեր և թագավոր էր, 16) և իմ մարմինը, կյանքն ու հոգին քոնն էին. 17) և իմ կերակուրը և այլ կարիքները և հագուստը քեզնից էին: 18) Ապա ինչո՞ւ դրա համար չպատժեցիր ու չպատասխանեցիր ինձ, 19) և [քո] վեհությունն ու ազնվությունն ինչո՞ւ համար էր, երբ դու չսովորեցրիր [ինձ], 20) որ ես հետո վեհություն և ազնվություն անեի, 21) և հիմա այժմ կարիք չէր լինի այդ չարիքը կրելու»:

22) Եվ հետո այդ մարդը դրախտ գնաց և այդ կինը՝ դժոխք. 23) և այն կինը այն զղջումից հետո դժոխքում բացի խավարից ու

ժանտահոտությունից ուրիշ տառապանքներ չու-նեցավ: 24) Եվ այն մարդը դրախտում առաքինի-ների մեջ ամոթալի կերպով նստած էր, որովհետև նա չփոխեց և չսովորեցրեց այն կնոջը, որ նրա հետ եղած ժամանակ ազնվության հանդի:

Գլ. 69

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, 2) որոնց ամեն մի աչքի մեջ փայտե բևեռ էր ցցված, 3) մի ոտից գլխիվայր կախած, 4) և բազմաթիվ գոր-տեր, կարիճներ, օձեր, մրջյուններ, ճանճեր, որ-դեր և այլ խրաֆստարներ մտնում և դուրս էին գալիս նրանց բերնից, քթից, ականջից, հետույ-քից և սեռական մասերից:

5) Եվ ես հարցրի. «Այս ո՞ւմ հոգիներն են, 6) և նրանք ի՞նչ հանցանք են գործել, որ հոգի-ներն այսպիսի պատիժ են կրում»:

7) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատաս-խանեցին. 8) «Սրանք այն չարագործ կանանց հո-գիներն են, որոնք մի ամուսին են ունեցել երկրի վրա և ուրիշ մարդու հետ են քնել և կենակցել, 9) և ամուսնու անկողնու տեղը կործանել են, և նրա մարմինը անարգել»:

Գլ. 70

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, որոնք գլխիվայր կախված էին 2) և ոտնու նման մի բան

երկաթե փշերով, բռնած նրանցից, մտնում էր մարմնի մեջ և շատ էր դաղում. 3) և մի մաս, որ կաթեցնում էր դևերի և դրուջների ժանտահոտ և աղտոտ սերմը, շարժվում էր շարունակ դեպի նրանց բերանը և քիթը:

4) Եվ ես հարցրի. «Սրանք ո՞ւմ հոգիներն են, որ այսպիսի պատիժ են կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սրանք այն չարագործ կանանց հոգիներն են, որոնք երկրի վրա իրենց ամուսինների նկատմամբ ուխտադանց են գտնվել 7) և ամուսիններից հեռացել են և երբեք գոհ չեն եղել, չեն կենակցել նրանց հետ»:

Գլ. 71

1) Եվ ես տեսա մի մարդու հոգի, 2) որին օձերը խայթում էին և կրծում, 3) և որի երկու աչքերից շարունակ օձեր և որդեր էին թափվում: 4) Եվ նա մի երկաթե բևեռ էր բռնել լեզվի վրա:

5) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդպիսի ծանր պատիժ է կրում»:

6) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 7) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որը սոդոմականությամբ շատ է զբաղվել 8) և, անվայել տռփանքի ցանկություն ունենալով, ուրիշների կնոջ հետ է կենակցել. 9) Նրա սահուն լե-

դուն գայթակղեցրել է օտարների կանանց, մոլորեցրել և ամուսիններից բաժանել»:

Գլ. 72

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, որոնք իրենց դաշտանը շարունակ ուտում էին:

2) Եվ ես հարցրի. «Այս մարմինները ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդպիսի ծանր պատիժ են կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն չարագործ կանանց հոգիներն են, որոնք ուշադիր չեն եղել իրենց դաշտանին. 5) և նրանք անպատվել են ջուրը, կրակը, Սպանդարմատ երկիրը, Հորվատատին և Ամերետատին: 6) Եվ նայել են երկինք, արևի և լուսնի վրա, 7) և անպատվել են անտառներին և ոչխարներին դաշտանով, 8) և առաքինի տղամարդկանց պիղծ են համարել»:

Գլ. 73

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, 2) որոնց տասը մատներից արյուն և կեղտոտություն էր հոսում և միզում էին և խմում, 3) և երկու աչքերից էլ շարունակ որդեր էին թափվում»:

4) Եվ ես հարցրի. «Այդ հոգիներն ովքե՞ր են,

5) և նրանք ի՞նչ հանցանք են գործել, որ այսպիսի ծանր պատիժ են կրում»։

6) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 7) «Սրանք այն չարագործ կանանց հոգիներն են, որոնք գեղեցկացրել են դեմքերը և ուրիշների մազերով զարդարել իրենց։ 8) Եվ նրանք կապել են աստվածների և մարդկանց աչքերը»։

Գլ. 74

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, որոնք գլխիվայր մի ոտքից կախված էին 2) և մի-մի դանակ էր խրված նրանց սրտերի մեջ։

3) Եվ ես հարցրի. «Այդ հոգիներն ո՞վքեր են»։

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա անասուններին, կովերին և ոչխարներին սպանել և մորթոտել են»։

Գլ. 75

1) Եվ ես տեսա հոգիներ, որոնք եզների ոտքերի տակ էին ընկած։ 2) Սրանք եղջյուրահարում էին, որովայնները պատռում, ոսկորները ջարդոտում, և նրանք ողբում էին։

3) Եվ ես հարցրի. «Այդ մարդիկ ովքե՞ր են»։

4) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատաս-

խանեցին. 5) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա անասուններին և լծի եզներին բեռանները կապել են, 6) և շոգ ժամանակ նրանց ջուր չեն տվել և աշխատեցրել են սոված ու ծարավ»:

Գլ. 76

1) Եվ ես տեսա կանանց հոգիներ, որոնք սեփական ձեռքով և ատամներով բզկտում էին իրենց ստինքները. 2) և շները պատառոտում և ուտում էին նրանց փորոտիքը, 3) և [նրանց] երկու ոտքերն էլ տաք արույրի վրա էին:

4) Եվ ես հարցրի. «Ովքե՞ր են այդ հոգիները, և նրանք ի՞նչ հանցանք են գործել»:

5) Սրոշ տաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սրանք այն չարագործ կանանց հոգիներն են, որոնք երկրի վրա դաշտանի ժամանակ կերակուր են եփել, 7) դրել տաքինի մարդու առաջ և առաջարկել, որ ուտի: 8) Եվ նրանք զրկվել են կախարդությամբ 9) և անպատվել Սպանդարմատ երկիրը և տաքինի մարդուն»:

Գլ. 77

1) Այն ժամանակ ես տեսա հոգիներ, որոնց միջքը, ձեռքերը և ոտքերը պատած էին վերքերով, 2) և հետևից գլխիվայր կախված էին և 3) ծանր քարեր էին տեղում նրանց միջքին:

4) Եվ ես հարցրի. «Սրանք ովքե՞ր են և ի՞նչ հանցանք են գործել»։

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա անասուններ են ունեցել, 7) և հրամայել են դժվար գործ անել և բեռները հակառակ օրենքի ծանրացրել են, 8) կուշտ ուտել չեն թողել և նրանց նիհարեցրել են. 9) և [երբ] վերքեր են առաջացել, նրանց գործից հետ չեն կանգնեցրել և դեղորայք չեն տվել, 10) [ուստի և] այժմ պետք է այսպիսի ծանր պատժի ենթարկվեն»։

Գլ. 78

1) Այն ժամանակ ես տեսա մի կնոջ հոգի, 2) որն ստինքներով մի երկաթե լեռ էր փորում. 3) և մի երեխա լեռան մյուս կողմից աղաղակում էր. և նրա ողբի ձայնը շարունակ լսվում էր։ 4) Բայց ոչ երեխան էր մորը հասնում և ոչ մայրը՝ երեխային։

5) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այնքան ծանր պատիժ է կրում»։

6) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 7) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա հղիացել էր ոչ թե իր ամուսնուց, այլ օտար մարդուց, 8) և ասում էր, որ չի հղիացել, 9) [մինչդեռ] նա ոչնչացրել էր իր երեխային»։

Գլ. 79

1) Հետո ես տեսա մի մարդու հոգի, 2) որի երկու աչքերը փորված էին և լեզուն կտրված. 3) և մի ոտքից կախված էր դժոխքում. 4) և մի եղջերու երկու արույրե եղջյուրներով [նրա] մարմինը քերթում էր. 5) և նա երկաթե բևեռը մխում էր իր կառափի [կամ սրտի] մեջ:

6) Եվ ես հարցրի. «Այս ի՞նչ մարդ է և ի՞նչ հանցանք է գործել»:

7) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 8) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որի արդարադատությունը երկրի վրա խարեբայական է եղել. 9) և նա կաշառք է վերցրել և կեղծ դատաստան է տեսել»:

Գլ. 80

1) Հետո ես տեսա մի քանի հոգիներ, որոնք գլխիվայր կախված էին դժոխքում, 2) և արյունը և աղտոտությունը և ուղեղը այդ մարդկանց բերանն էին թափվում, և կղկղանքը քթերով ներս էր մտնում, 3) և [նրանք] շարունակ աղաղակում էին՝ «Զափն ուղիղ է»:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինները ովքե՞ր են և ի՞նչ հանցանք են գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Սրանք այն չարագործների հոգիներն են,

որոնք երկրի վրա քարը, կապիճը և այլ չափեր փոքր են բռնել 7) և մարդկանց ապրանք ծախել»:

Գլ. 81

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, որի լեզուն կտրված էր և աչքերը դուրս փորված, 2) և օձերը, կարիճները, որդերը և այլ խրաֆըստարներ գլխի ուղեղն ուտում էին: 3) Ժամանակ առ ժամանակ նա յուր մարմինը ատամներով բըռնում էր ու միսը կրծոտում:

4) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ կենդանի ժամանակ անբարոյական է եղել. 7) և շատ կախարդություն է արել, և շատ չարագործություններ նրանից են ծայր առել»:

Գլ. 82

1) Այնուհետև ես տեսա մի ինչ-որ կնոջ հոգի, որի լեզուն փրցված էր:

2) Եվ ես հարցրի. «Այդ կինն ի՞նչ հանցանք է գործել»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի

վրա սուր լեզու է ունեցել. 5) և նա իր լեզվով շատ է վշտացրել իր ամուսնուն և տիրոջը»:

Գլ. 83

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, որ իր սեփական գլուխը շարունակ ուտում էր:

2) Ես հարցրի. «Այս կինն ի՞նչ հանցանք է գործել»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 4) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա իր ամուսնուց գաղտնի շատ միս է կերել 5) և տվել օտար մարդու»:

Գլ. 84

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, 2) որի ստինքները կտրել էին, փորը պատռել և աղիքները տալիս էին շներին:

3) Եվ ես հարցրի. «Այս կինն ի՞նչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա թույն և աֆիոնի հյութ է պատրաստել 6) և տվել մարդկանց խմելու»:

Գլ. 85

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, 2) որի մարմինը պատել էին երկաթե պատյանով. 3) բե-

բանը դեպի նա էին շուռ տվել և տաք թոնրի վրա դրել:

4) Եվ ես հարցրի. «Այդ կինը ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Այդ այն չարագործ կնոջ հոգին է, որ կենդանի ժամանակ մի բարեպաշտ, իմաստուն մարդու կին է եղել. 7) և նա դրժել է իր սերը դեպի ամուսինը և քնել է հանցավոր, չարաբարո մարդու հետ»:

Գլ. 86

1) Հետո ես տեսա մի կնոջ հոգի, 2) որի մարմնով մի փշոտ օձ վեր էր բարձրանում և բերանից դուրս էր գալիս:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարմինը ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին՝ այդքան ծանր պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ դրժել է խվեթուկդասը»:

Գլ. 87

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, 2) որ իր մարմինն ու երեսը քերթում էր երկաթե սանրով 3) և ատինքներով փորում էր երկաթե սարը:

4) Եվ ես հարցրի. «Այդ կինն ի՞նչ հանցանք է գործել»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 6) «Այս այն չարագործ կնոջ հոգին է, որ երկրի վրա հանցանք է գործել. 7) և հարստության ձգտելով՝ յուր երեխային ծիծ չի տվել 8) և այժմ շարունակ աղաղակում է՝ «Թող այստեղ այս սարը քանդեմ, հետո երեխային ծիծ տամ»: 9) Արդ, մինչև հրաշակերտ հարությունը այն երեխան չի հասնի նրա մոտ»:

Գլ. 88

1) Հետո ես տեսա մի մարդու հոգի, 2) որ գլխիվայր կախված էր կախաղանից և սեռական հարաբերություն ուներ. 3) և սերմը կաթում էր նրա բերանի, ականջների և քթի մեջ:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 6) «Այս այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա անխայել սեռական հարաբերություններ է ունեցել. 7) ուրիշների կանանց մոլորեցրել է և հրապուրել»:

Գլ. 89

1) Հետո ես տեսա [այն մարդկանց] հոգիները, որ թուլության պատճառով դժոխքում նետվում էին այս անկյունից այն անկյունը, 2) և ծարավից ու քաղցից, սառնամանիքից ու տոթից շարունակ աղաղակում էին. 3) և խրաֆաստրները կրծոտում էին նրանց ոտքերի հետևը և այլ անդամները:

4) Եվ ես հարցրի. «Այդ մարմինները ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

5) Սրոշ առաքինին և Ատր յազատան ասացին. 6) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որ երկրի վրա իրենց կերակուրն ու հագուստը իրենք են ուտել, 7) և նրանք ոչինչ չեն տվել բարի մարդկանց և արժանավորներին և ոչ մի առատաձեռնություն չեն արել, 8) և իրենց մարմինը և մարդկանց, որոնք նրանց հովանավորության տակ են եղել, սոված, ծարավ և մերկ են պահել 9) և նրանք ենթարկվել են ցրտի և տոթի և քաղցի և ծարավի: 10) Այժմ նրանք մեռել են և նրանց կարողությունն օտար մարդկանց է մնացել: 11) Այժմ նրանց հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում նրանց արարքի պատճառով»:

Գլ. 90

1) Այնուհետև ես տեսա այն [մարդկանց] հոգիները, որոնց օձերը կծում էին և ուտում նրանց լեզուները:

2) Եվ ես հարցրի. «Սրանք ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 4) «Սրանք այն չարագործների և պարսավանք անողների հոգիներն են, որոնք երկրի վրա շատ սուտ և խաբեական բաներ և պարսավանք են ասել»:

Գլ. 91

1) Այնուհետև ես տեսա մի մարդու հոգի, որ իր զավակին սպանել էր և շարունակ ուտում էր նրա ուղեղը:

2) Եվ ես հարցրի. «Այս մարմինն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Այս այն վճռահատ դատավորի հոգին է, որ խնդրարկուների մեջ կեղծ վճիռ է տվել. 5) և նա ուղիղ աչքով և արդարամտորեն չի նայել պահանջատիրոջ և ամբաստանյալի վրա, 6) այլ հարըստության ձգտելով և ագահությունից դրդված՝ խնդրարկուների վրա դատել է զայրույթով և խստությամբ»:

Գլ. 92

1) Հետո ես տեսա [այն մարդկանց] հոգիները, որոնց աչքերին փայտի բևեռ էր խփված:

2) Եվ ես հարցրի. «Այդ մարմիններն ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն չարամիտ մարդկանց հոգիներն են, որոնք բարիքը մարդկանցից հետ են պահել»:

Գլ. 93

1) Հետո ես տեսա այն [մարդկանց] հոգիները, որոնք երեսնիվայր ընկած էին դժոխքում. 2) և ներքևից ծուխ ու տոթ և վերևից սառը քամի էին [բաց] թողել նրանց վրա:

3) Եվ ես հարցրի. «Այս մարմիններն ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սրանք այն [մարդկանց] հոգիներն են, որ երկրի վրա ճանապարհորդներին տեղ ու տուն, օթևան, թոնիր ու հնոց չեն տվել, 6) [իսկ] ով որ էլ տվել է, վարձ է ստացել նրանցից»:

Գլ. 94

1) Այնուհետև ես տեսա այն [մարդկանց] հոգիները, որոնք իրենց ձեռքով իրենց ստինքները դնում էին շիկացած տապակի վրա 2) և մի կողքից մյուս կողքի վրա էին շուռ գալիս:

3) Եվ ես հարցրի. «Այդ կանայք ի՞նչ հան-

ցանք են գործել, որ հոգիներն այնքան ծանր պա-
տիժ են կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասա-
ցին. 5) «Սրանք այն կանանց հոգիներն են, որոնք իրենց երեխային կաթ չեն տվել, նիհարացրել են և ոչնչացրել 6) և աշխարհային օգտի համար կա-
թը տվել են օտար երեխաներին»:

Գլ. 95

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ հոգի, որ ատինքներով փորում էր մի սար. 2) նա ծարավ ու քաղցած էր:

3) Եվ ես հարցրի. «Այդ կինը ի՞նչ հանցանք է գործել»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Սա այն չարագործ կնոջ հոգին է, որ յուր երեխային կաթ չի տվել, 6) և քաղցած ու ծարավ է թողել 7) և ինքը՝ ագահությունից դրդված և ապօրինի հարաբերության ցանկությամբ, գնացել է մի օտար մարդու մոտ»:

Գլ. 96

1) Հետո ես տեսա մի մարդու հոգի, որի լե-
զուն կտրված էր. 2) մազերից քաշում էին և գլխա-
կի մնացորդներ էին շաղ տալիս վրան և կացինով չափում էին:

3) Եվ ես հարցրի. «Այդ մարդն ի՞նչ հանցանք է գործել, որ հոգին այդքան ծանր պատիժ է կրում»:

4) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 5) «Այդ այն չարագործ մարդու հոգին է, որ երկրի վրա սերմ է վերցրել 6) և ասել է, թե կցանի, բայց չի ցանել, 7) և կերել է և խարդավանել Սպանդարմատ[57] երկիրը»:

Գլ. 97

1) Հետո ես տեսա մի մարդու և մի կնոջ հոգիները, որոնց լեզուները կտրված էին:

2) Եվ ես հարցրի. «Այդ մարմինները ի՞նչ հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 4) «Սրանք այն չարագործ մարդու ու կնոջ հոգիներն են, որ կենդանի ժամանակ շատ սուտ և անճիշտ բաներ են ասել. 5) և խաբել են իրենց սեփական հոգիներին»:

Գլ. 98

1) Այնուհետև ես տեսա մի կնոջ և մի մարդու հոգիները, որ դուրս էին գնում և ուտում էին [կղկղանքը]:

2) Եվ ես հարցրի. «Այդ մարմինները ի՞նչ

հանցանք են գործել, որ հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

3) Սրոշ առաքինին և Ատր յազատը պատասխանեցին. 4) «Այս այն չարագործ մարդու և կնոջ հոգիներն են, որոնք երկրի վրա հանցավորությամբ գինի են կերել, 5) և ջրի կղբին Ջրի մեջ սպանել են 6) և պարկել սպանել են Սուհարմազդի այլ արարածներին»:

Գլ. 99

1) Եվ ես տեսա, որքան կարելի է, շատ մարդկանց և կանանց հոգիներ, 2) և նրանք կրում էին սարսափելի, ահավոր, տաժանելի, չարչելով լի, վշտալի խավար դժոխքի մեջ վերքեր և տեսակ-տեսակ պատիժներ:

3) Հետո ես տեսա [այն մարդկանց] հոգիները, որոնց լեզուները ճեղքված էին փայտե բևեռով 4) և գլխիվայր դժոխք էին գնում: 5) Եվ դևերը երկաթե սանրով քանդում էին նրանց մարմինը:

6) Եվ ես հարցրի. «Այդ ո՞ւմ հոգիներն են, և նրանք ի՞նչ հանցանք են գործել, որ նրանց հոգիներն այդքան ծանր պատիժ են կրում»:

7) Սրոշ առաքինին և Ատր յազատն ասացին. 8) «Սրանք այն չարագործների հոգիներն են, որոնք երկրի վրա անհնազանդ են եղել իրենց տերերին. 9) և զորքի մեջ թշնամի են եղել

սպահագնդլին. 10) այժմ այստեղ այնքան ծանր ցավ ու վերքեր և պատուհաս պետք է կրեն»:

Գլ. 100

1) Այնուհետև ես տեսա մահաբեր, աշխարհավեր, չարակրոն Գաննակ Մենոկին[58], 2) որ չարագործներին ծաղրում էր ու հեգնում դժոխքում և ասում էր. 3) «Ինչի՞ համար եք դուք ուտում Աուհարմազդի հացն և իմ գործն եք անում. 4) ձեր ստեղծողին չեք հիշում և իմ կամքն եք կատարում»:

5) Այսպիսի բազում ծաղրանքներ էր նա զռալով ասում չարագործներին:

Գլ. 101

1) Հետո Սրոշ առաքինին և Ատր յազատը բռնեցին իմ ձեռքը 2) և այս խավար, ահելի և սարսափելի տեղից ինձ դուրս բերին, 3) և տարան ինձ հավիտենական լույսը և Աուհարմազդի և համշասպանդների խորհուրդը:

4) Երբ ես կամեցա պաշտամունքս կատարել Աուհարմազդին, 5) նա ողորմած էր, ասաց. «Կատարյալ սպասավոր ես դու, առաքինի Արտա Վիրազ, մազդեզանյան պատգամաբեր, գնա՛ նյութեղեն աշխարհը 6) և ինչպես տեսել ես և հասկացել, ճշմարիտ ասա՛ երկրայիններին, 7) քանզի ես, որ Աուհարմազդն եմ, քեզ հետ եմ. 8) ով

ուղիղ և ճշմարիտ է խոսում, ես ճանաչում և իմանում եմ: 9) Այսպես ասա գիտուններին»:

10) Երբ Ահուրամազդն այսպես խոսեց, ես ապշած մնացի. 11) քանզի ես լույս տեսա, բայց մարմին չտեսա. և ես մի ձայն լսեցի, 12) և ես հասկացա, որ նա Ահուրամազդն էր:

13) Եվ ասաց արարիչ Ահուրամազդը, երկնայիններից բարձրագույնը. 14) «Դու, Արտա Վիրազ, ասա աշխարհի մազդեյասնյաններին. 15), «Մի ապաքինի ուղի կա՝ նախնական կրոնի ուղին, և այլես ուրիշ ուղի չկա: 16) Այդ միակ ուղին բռնեցեք և ոչ բարօրության մեջ, ոչ ձախորդության մեջ և ոչ մի այլ ճանապարհից մի՛ շեղվեք. 17) և կիրառեք բարեմտություն, բարեխոսություն և բարեգործություն. 18) և միևնույն համոզմունքին մնացեք, որ ինձնից ընդունեց Սպիտաման Զարթուշտը և որ աշխարհում տարածեց Վշտասպը: 19) Պահեցեք պատշաճ օրենքը, անվայելից հրաժարվեցեք: 20) Այս ես թող հայտնի լինի ձեզ, որ փոշի է դառնալու եզը և փոշի է դառնալու ձին, և փոշի է դառնալու ոսկին ու արծաթը, և փոշի է դառնալու մարդկանց մարմինը: 21) Նա՛ միայն չի խառնվի փոշու հետ, որ աշխարհում գովաբանում է ապաքինությունը և իր պարտքն ու բարեգործությունն է կատարում: 22) Կատարյալ ես դու, Արտա Վիրազ, գնա՛ և բարգավաճիր, 23) քանզի ամեն մաքրություն և մաքրագործում, որ դուք անում և պահում եք, 24) և ամեն ինչ, որ օրինա-

վոր կերպով պահում եք, 25) և մաքրագործումը և զոհաբերությունը, որ դուք կատարում եք, նմանապես հիշատակելով աստվածներին, բոլորը ես գիտեմ»:

26) Եվ երբ ես այդ խոսքերը լսեցի, խորը երկրպագություն տվի արարիչ Ահուրամազդին:

27) Հետո Սրոշ առաքինին հաղթականորեն և քաջաբար փոխադրեց ինձ այս անկողնի տեղը:

28) Հաղթական լինի մազդեզն դենի վեհ փառքը:

29) Վերջացավ ողջությամբ, ուրախությամբ և ցնծությամբ:

Յաղուի Թրիան

Գլ. Ա

1) Յուշտի Ֆրիանի այս մատյանը[59] օրհնյալ լինի աստվածների օգնականությամբ։

2) Այսպես են ասում, որ այն ժամանակ, երբ Ախտի Յատուկը [կախարդ Ախտը] յոթն բյուր զորքով գնաց հանելուկ[60] լուծողների[61] քաղաքը[62], 3) նա հոխորտաց, թե հանելուկ լուծողների քաղաքը փղի ոտքերի տակ կնեռեմ։ 4) Եվ երբ նա այնտեղ եկավ, հրավիրեց մարդկանց, որոնք տասնհինգ տարեկանից և վեր աստծուց օրինապանց չէին եղել[63]։ 5) Ապա նա նրանց հանելուկ առաջար-

կեց*: 6) Ով անկարող էր լինում լուծել, բռնում էր և սպանում:

7) Այդ հանելուկ լուծողների քաղաքում մի մարդ կար Մահրասպանդ[64] անունով: 8) Նա Ախտի Յատուկին ասաց. «Հանելուկ լուծողների քաղաքը փղի ոտքի տակ մի՛ գցիր և այս անմեղ մարդկանց մի՛ սպանիր, 9) որովհետև հանելուկ լուծողների այս քաղաքում մի մարդ կա Յուշտի Ֆրիան անունով, որ տասնհինգ տարեկանից ի վեր աստծուց օրինազանց չի եղել, 10) և ինչ հանելուկ, որ դու նրան առաջարկես, նա կլուծի»:

11) Եվ ապա Ախտի Յատուկը Յուշտի Ֆրիանին պատգամ ուղարկեց.

12) «Արի՛ իմ դուռը, որպեսզի ես երեսուն և երեք հանելուկ առաջարկեմ քեզ[65], 13) և եթե պատասխան չտաս, կամ ասես, թե չեմ իմանում, անմիջապես կսպանեմ քեզ»:

14) Յուշտի Ֆրիանը եկավ Ախտի Յատուկի դուռը. 15) և շնորհիվ այն բանի, որ Ախտի Յատուկը մարդկանց գլուխներ[66] ուներ անկողնի տակ, ներս չմտավ: 16) Եվ նա Ախտի Յատուկին պատգամ ուղարկեց՝ 17) «Դուք անկողնի տակ մարդկանց գլուխներ ունեք, 18) ինձ հետ համշասպանդներ[67] կան. և եթե ես գնամ այնտեղ, որտեղ մարդկանց գլուխներ կան, 19) համշասպանդները ինձ ապավեն լինելուց կհրաժարվեն: 20) Ուրեմն և

* Բնագրում այստեղ և հետագայում՝ հարցրեց=pursid:

այն հանելուկները, որ դու ինձ պետք է առաջարկես, լուծել չեմ կարող»:

21) Ուստի Ախտի Յատուկը հրամայեց անկողինը և ծածկոցը վերցնել և նոր անկողին բերել ու փռել:

22) Ապա ներս հրավիրեց Յուշտի Փրիանին և ասաց, 23) «Արի այս ծածկոցի և բարձերի վրա նստիր և ուղիղ լուծիր այն հանելուկները, որ քեզ կառաջարկեմ»:

24) Յուշտի Փրիանն ասաց. «Անօրէն, չարագո՛րծ, բանակյա՛լ, այդ բարձի վրա չեմ նստի, որովհետև այդ բարձի տակ մարդկանց գլուխներ կան: 25) Եվ ինձ հետ յազատներ[68] ու համշասպանդներ կան, որոնք իմ ապավենն են. 26) և եթե ես այդ բարձի վրա նստեմ, ապա երկնայիններն իմ պաշտպանությունից երես կթեքեն, 27) ապա և հանելուկները, որ դու ինձ պիտի առաջարկես, ես ի վիճակի չեմ լինի լուծել»:

28) Ապա Ախտի Յատուկը հրամայեց այն բարձը վերցնել և նորը բերել: 29) Յուշտի Փրիանը այդ նոր բարձի վրա նստեց:

Գլ. Բ

1) Առաջին հանելուկը, որ Ախտի Յատուկը Յուշտի Փրիանին առաջարկեց, հետևյալն էր. 2) «Երկրային դրա՞խտն է լավ, թե երկնայինը»:

3) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրէն, չարագո՛րծ, բանակյա՛լ. և

երբ մեռնեն՝ դժոխքն ընկնեն: 4) Աստղերն երկրային դրախտն ավելի լավ է, քան երկնայինը: 5) Եվ նշանակն այս է. ով այստեղ երկրի վրա աստվածահաճ գործեր չանի, այնտեղ նրան օգնություն չեն գա: 6) Ապա երկրորդ նշանակն այն է, որ եթե երկրիս վրա մի բան ընտիր ձևով չեք անի, ապա ընտիր դրախտը չեք ընկնի»:

7) Ախտի Յառուկը, երբ այս խոսքը լսեց, զարմանքից քար կտրեց, 8) ինչպես մեկը, որ լուշարը[69] գործադրում և ապշած է մնում: 9) Եվ նա այսպես ասաց. «Իմ՝ Ախտի Յառուկիս, դժբախտությունը քո՝ Յուշտի Ֆրյանից երեսից [է գալու], այն է՝ դու իմ վերաբերմամբ հաղթական ես, 10) ինչպես հզոր մարդը հզորագույն մարդու նկատմամբ և հզոր ձին հզորագույն ձիու նկատմամբ, և հզոր ցուլը հզորագույն ցուլի նկատմամբ, ինչպես երկինքը երկրի նկատմամբ գերազոր են[70]: 11) Բանդի ես այս հանելուկով ինը հարյուր տասքինի մարդ եմ սպանել, 12) որոնք այնքան զոհ էին մատուցել յազատներին, այնքան պարահոմ[71] էին խմել, որ ամբողջ մարմինները դեղնել էին: 13) Այլև Սպիտամանի[72] ինը դուստրներին ե՛ս սպանեցի, որոնք կրոնը ներբողելու պատճառով ոսկե մարգարտահուռ թագ ստացան արքաներից:

14) Երբ ես նրանցից հարցրի և նրանք պատասխանեցին, որ երկնայինն դրախտն ավելի լավ է, 15) ես ասացի, [քանի] որ դուք այսպես եք լավ համարում, [ապա] այսպես ավելի լավ է, որ

դուք գնաք այն լավ դրախտը: 16) Եվ ես բռնեցի նրանց ու սպանեցի»:

17) Երկրորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Աուհարմազդի արարածներից ո՞րն է, որ հետևի վրա նստած ավելի բարձր է, քան եթե ոտների վրա կանգնի»:

18) Յուշտի Ֆրիանն ասաց, «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես, 19) քանզի դա շունն է»:

20) Երրորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Աուհարմազդի արարածներից այն ո՞րն է, որ քայլում է և հետք չի թողնում»:

21) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 22) ապաքեն այն ճնճղուկն է, որ քայլում է և հետք չի թողնում»:

23) Չորրորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Աուհարմազդի արարածներից այն ո՞րն է, որի ատամը եղջյուրից է, իսկ եղջյուրը՝ մսից»:

24) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 25) քանզի դա աքաղաղ է կոչվում՝ Սրոշ առաքինու թռչնակը[73]: 26) Երբ նա ձայն է արձակում, Աուհարմազդի արարածների կյանքից դժբախտությունը հետ է վանում»:

27) Հինգերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Կարճ դանակն է լավ, թե սակավ խորտիկը»:

28) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 29) արդարեն կարճ դանակը [ավելի] լավ է սակավ խորտիկից, 30) որովհետև կարճ դանակով կարելի է բարսմ[74] կտրել, քաղել, 31) իսկ սակավ խորտիկը փորին չի հասնի և եթե հասնի քամի կառաջացնի»:

32) Վեցերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ի՞նչն է լիքը, և ի՞նչն է կիսով չափ լիքը, և ի՞նչն է, որ երբեք լիքը չի լինում»:

33) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 34) քանզի լիքն է այն, որ բարեհամբավ է և կարող այստեղ [այս աշխարհում], և երբ նա այստեղից գնա, հոգին առաքինի է: 35) Այն, որ կիսով չափ լիքն է, կարիքավոր աղքատությունն է, չքավոր կյանքը, որ մեռնելիս հոգին առաքինի է. 36) իսկ այն դատարկը, որ երբեք լիքը չի լինում, կարիքն է, չքավոր կյանքը, որ մեռնելիս հոգին չարագործ է»:

37) Յոթերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Այն ի՞նչ բան է, որ մարդիկ աշխատում են թաքցնել, բայց թաքցնել չեն կարողանում»:

38) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և

երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 39) ապաքեն տարիքն է այն, որ ոչ ոք թաքցնել չի կարող, 40) որովհետև տարիքն ինքն իրեն հայտնվում է»:

41) Ութերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞րն է այն կենդանի մարդը, որ երբ տեսնում է Աստովիհատին[75], մեռնում է, բայց նա ցանկություն է հայտնում, որ կրկին վերադառնա կյանք. 42) և երբ կրկին Աստովիհատին տեսնում է, մեռնում է. և այդ հեշտ է թվում նրան»:

43) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բռնակալ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 44) քանզի այս ա՛յն մարդն է, որ յաշտ չի կատարել, որ պարահոմ չի խմել. 45) և երկրորդ ա՛յն մարդն է, որ հասել է ամուսնության ժամանակին, բայց չի ամուսնացել. 46) և երրորդ ա՛յն մարդն է, որ կենդանի ժամանակ հոգի չի պաշտել, բարեպաշտներին տուրք չի տվել, յազատներին զոհ չի մատուցել, ասել է, թե ընտիր մարդկանց բարեպաշտության տուրք կտամ և չի տվել: 47) Եվ նա մեռնելիս ցանկություն է ունեցել, որ նորից կենդանանա, 48) և երբ կրկին մեռել է և Աստովիհատին տեսել է, մահը հեշտ է թվացել նրան»:

49) Իններորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Փիղը, ձին, ուղտը, էշը, կովը, ոչխարը, կինը, շունը, խոզը և կատուն քա՞նի ամսից են ծնում»:

50) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 51) ապաքեն փիղը երեք տարում է ծնում, և ձին, և ուղտը, և էշը տասներկու ամսում են ծնում, և կովն ու կինը ինն ամսում են ծնում, և ոչխարը հինգ ամսում է ծնում, և շունն ու խոզը չորս ամսում են ծնում, կատուն քառասուն օրում է ծնում»:

52) Տասներորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞ր մարդը ավելի հաճելի և գյուրին ապրուստ ունի»:

53) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 54) ապաքեն այն մարդն է ապրում ավելի հաճելի և գյուրին, որն ավելի անահ է, ավելի բավական և ավելի ունեվոր»:

55) Տասնմեկերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Այն ի՞նչն է աշխարհի երեսին, որ նման է Աուհարմազդին և համշասպանդներին»:

56) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 57) ապաքեն երկրիս վրա արքան է նման Աուհարմազդին և համշասպանդներին: 58) Եվ արքաների բնակության տեղը նման է լուսավոր Գարութմանին[76]: 59) Եվ արքաների ատրապատյալները նման են համշասպանդներին: 60) Արքան իր գահը |պալատում|

նման է այն ատամին, որ Փարմիզ[77] է կոչվում: 61): Մնացյալ մարդիկ, որ ժրաջան են և կորովի, նման են մնացյալ փոքր ատամներին, որ երկնքում են»:

62) Տասներկուերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞ր խորտիկն է ավելի հաճելի և համեղ»:

63) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքում կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանակյալ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 64) ապաքեն այն խորտիկն է ավելի համեղ և հաճելի, որ արդար վաստակով է ձեռք բերվում, և նա բարի գործերով է կերակրվում և գործում»:

65) Տասներեքերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Մեկն ի՞նչ է, երկուսն ի՞նչ է, երեքն ի՞նչ է, չորսն ի՞նչ է, հինգն ի՞նչ է, վեցն ի՞նչ է, յոթն ի՞նչ է, ութն ի՞նչ է, ինն ի՞նչ է, տասն ի՞նչ է»:

66) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքում կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանակյալ. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 67) ապաքեն մեկը վեհ Արեգակն է, որ ամբողջ աշխարհին լույս է տալիս. 68) երկուսն օդի ներշնչումն ու արտաշնչումն է. 69) երեքը բարի մտքերը, բարի խոսքերը և բարի գործերն են[78]. 70) չորսը ջուրը, երկիրը, բույսերն ու կենդանիներն են. 71) հինգը հինգ վեհ Քիանիներն[79] են. 72) վեցը գահամբարները[80] վեց ժամանակներն են. 73) յոթը յոթ համշասպանդներն են. 74) ութը ութ վեհ անվանիներն[81] են.

75) ինը ինը բացվածքներն են մարդուս մարմնի մեջ[81a]. 76) և տասը մարդկանց ձեռքերի մատներն են»:

Գլ. Գ

1) Տասներեքերորդ[82] հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ի՞նչն է ամենասառը»:

2) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանսարկու. և երբ մեռնես՝ դժոխքն ընկնես. 3) ապաքեն այնպես չէ, ինչպես դու ես կարծում, այլ այնպես, ինչպես ես գիտեմ: 4) Եվ դու այնպես ես կարծում, որ ձյունն է ամենասառը, որ նստած է սարի վրա և արևը երբեք չի տաքացնում նրան. 5) բայց այդպես չէ, ինչպես դու ես մտածում, քանզի չարագործ մարդու բնությունն է ամենից սառը: 6) Եվ նշանակն այն է, որ դու, Ախտի Յատուկդ, մի չարագործ եղբայր ունես, 7) և նա իր սրտում մի քանի բուռ ժահր ունի: Դու այն չես կարող հալել ոչ արևով, ոչ կրակով, 8) իսկ երբ ես բուռս ածեմ՝ կհալվի»:

9) Ապա Ախտի Յատուկը հրամայեց բերել իր եղբորը, սպանել և ժահրը սրտից հանել: 10) Ո՛չ արևով և ոչ կրակով հալել հնարավոր չեղավ. 11) Յուշտի Ֆրիանը բուռն առավ և [իսկույն] հալվեց:

12) Տասնչորսերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ի՞նչն է ամենատաքը»:

13) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրեն, չարագործ, բանսարկու. և

երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 14) քանզի տաս-քննի մարդու բուռն է ամենատաքը: 15) Եվ դրա նշանակն այն է, որ այն քո եղբոր ժահրը հնարավոր չեղավ հալել ոչ արևով և ոչ կրակով, 16) բայց երբ ես բուռս առա, [իսկույն] հալվեց»:

17) Քսանհինգերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ի՞նչն է լավագույնը, որ ցած է գնում, ի՞նչն է լավագույնը, երբ սառչում է, և ի՞նչն է լավագույնը, որ պիտի մեռնի»:

18) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բռնակա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 19) ապաքեն ջուրն է լավագույնը, որ ցած է գնում, և կրակն է լավագույնը, երբ սառչում է. և անօրեն, չարագործ բռնակալը, ինչպես դու ես, լավագույնն է, երբ մեռնում է: 20) Քանզի, երբ ջուրը ցած չգնա և կրակը չսառչի և անօրեն, չարագործ բռնակալը, ինչպիսին դու ես, չմեռնի, 21) այն ժամանակ ամբողջ աշխարհը լիքը կլինի ջրով, կրակով և անօրեն, չարագործ բռնակալներով, ինչպիսին դո՛ւ ես, և անհնարին կլինի պահպանել աշխարհը»:

22) Քսանվեցերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ի՞նչն է ավելի ծանր սարից. 23) և ի՞նչն է ավելի սուր, քան պողպատե դանակը, 24) և ի՞նչն է ավելի քաղցր, քան մեղրը, 25) և ինչն է ավելի ճարպոտ, քան ոչխարի դմակը,

26) և ո՞վ է ավելի առատաձեռն, քան առատաձեռնը, 27) և ո՞վ է ավելի արդար, քան արդարը»:

28) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բանսարկո՛ւ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 29) քանզի ուժը և անակնածությունը ավելի ծանր են, քան սուրը. 30) և պողպատե դանակից ավելի սուր է մարդկային լեզուն. 31) և հոր ու մոր համար երջանիկ որդին ավելի քաղցր է մեղրից. 32) և աշխարհի դմակից ավելի ճարպոտ է Սպանդարմատի[83] երկիրն ու անձրևը. 33) և առատաձեռններից ավելի առատաձեռն է Տիշթար (կամ՝ Տիշթրիա) աստղը[84]. 34) և արդարներից արդարն է Վեհ Վայուն[85], որ ոչ ոքի շնորհ չի անում և կաշառք չի վերցնում, և արդարությունը տարածում է տերերի և ստրուկների վրա հավասարապես:

35) Քսանյոթերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞ր ոտքերն են ամենաընտիր և գեղեցիկ. 36) քանզի բազմաթիվ ոտքերից, որ ես տեսել եմ, ամենաընտիր և գեղեցիկ ոտքերը Հուփարիին են՝ քո քույրը և իմ կինը»:

37) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բանսարկո՛ւ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 38) ապաքեն ջրի ոտքն է ամենագեղեցիկը և ընտիրը: 39) Եվ դրա նշանակն այն է, որ այնտեղ, ուր ջուրը ոտք է դնում, բուսականություն է աճում: 40) Եվ այնտեղ, ուր ոտք է դնում Հուփարին, չորանում է»:

41) Թանութերոյդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Կանանց մեծ հաճույքը ինչի՞ց է»:

42) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքում կարիքի մեջ լինել, անօրեն, չարագործ, բռնակալ. և երբ մեռնես՝ դժո՞խքն ընկնես. 43) ապաքեն այնպես չէ, ինչպես դու ես մտածում, այլ այնպես, ինչպես ես եմ իմանում: 44) Բանդի դու այնպես ես մտածում, որ կանանց մեծ բավականությունը տեսակ-տեսակ պատմուճաններից և պատշաճ տանտիկնությունից է, որ նրանք ունեն: 45) Բայց այդպես չէ. կանանց մեծ հաճույքը իրենց ամուսնու հետ լինելուց է»:

46) Ախտի Յասուկն ասաց. «Սուտ ես ասում, և այս հանելուկով քեզ կսպանեմ: 47) Հիմա արի գնանք Հուփարիի մոտ, որ քո քույրն է և իմ կինը: 48) Նա երբեք սուտ չի ասել և չի ասի. և նրա ասածը ես կընդունեմ»:

49) Յուշտի Ֆրիանը համաձայն է. և Ախտի Յասուկը Յուշտի Ֆրիանի հետ գնաց Հուփարիի մոտ: 50) Եվ նրանք ասացին. «Նստիր և այս հանելուկը ճշմարտորեն լուծիր»:

51) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կանանց մեծ հաճույքը տեսակ-տեսակ պատմուճաններից և պատշաճ տանտիկնությունի՞ց է, որ նրանք ունեն, 52) թե՞ մեծ հաճույքը ամուսնու հետ լինելուց է»:

53) Այն ժամանակ Հուփարին մտածեց. «Հիրավի դժվար դրություն է ստեղծվել ինձ համար. այդ անօրեն, չարագործ, բռնակալ կախարդը ինձ

բաց չի թողնի, մինչև չսպանի: 54) Եթե սուտ խոսեմ, ապա եղբայրս կսպանի, և ես չարագործ կդառնամ. լավ կլինի, որ ճիշտ խոսեմ. 55) իսկ եթե սուտ խոսեմ, ես ինքս չարագործ կդառնամ, և նա կխորտակի օրենքը, կրոնը և ծեսը: Եվ ընդհակառակը, եթե նա ինձ սպանի ճշմարտության համար, ավելի առաքինի կլինեմ»:

56) Եվ նա քողով ծածկեց գլուխը[86] և ասաց. 57) Կանայք մեծ հաճույք են զգում տեսակ-տեսակ պատմություններից և պատշաճ տանտիկնությունից, 58) բայց երբ [ամուսնու] հետ չեն կենակցում, նրանք ցավի և դժվարության մեջ են և այն հաճույքը այլ բան չէ, եթե ոչ ցավ և դժվարություն: 59) Բայց երբ նրանք [ամուսնու] հետ կենակցում են, ապա ավելի մեծ հաճույք են վայելում»:

60) Ախտի Յադուկի զայրույթը բռնկվեց, երբ լսեց այդ խոսքերը, և նա անմիջապես սպանեց Հուփարիին: 61) Եվ Հուփարիի հոգին անմիջապես գնաց Գարութման: 62) Եվ նա աղաղակեց. «Ի՛նչ լավ եմ ես. մինչև հիմա առաքինի էի, իսկ այժմ ավելի առաքինի եմ. 63) ընդհակառակը, ի՛նչ դժբախտ ես դու, Ախտի Յադուկ. մինչև այժմ չարագործ էիր, իսկ այժմ ավելի չարագործ դարձար»:

64) Քսանիններորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ա՞յն ի՞նչն է, որ ունի տասը ոտք, երեք գլուխ, վեց աչք, վեց ականջ, երկու պոչ

երկու ամորձիք, երկու ձեռք, երեք քիթ, չորս եղջյուր, երեք միջք և համակ աշխարհի կյանքը և ապրուստը նրանից է»։

65) Յուշտի Ֆրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրե՛ն, չարագո՛րծ, բանակա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 66) ապաքեն կրոնից այնպես է հայտնի, որ [եթե] մեզը գալիս հանելուկ առաջարկեն, օրենք չէ լուծել»։

67) Ախտի Յատուկն ասաց. «Գնա՛ մոտիկ տեղ նստիր միզիր[87] և շուտ արի և հանելուկը ճիշտ լուծիր, 68) քանզի եթե սուտ ասես, կամ ասես, թե չեմ իմանում, ապա անմիջապես կըսպանեմ քեզ»։

69) Եվ Յուշտի Ֆրիանը գնաց ու նստեց մի մաղի[88] վրա, 70) և նա մտածեց. «Հիրավի դժվարություն է ստեղծվել ինձ համար. այդ անօրեն, չարագործ բանակալը ինձ բաց չի թողնի, մինչև չսպանի. 71) որովհետև եթե մեկը կենդանի է կամ մեկը մեռած և նորից կենդանացած, [ապա] նա չի կարող այս հանելուկը լուծել»։

72) Այն ժամանակ Աուհարմազդ աստվածը Ներյոսանգ[89] յազատին Յուշտի Ֆրիանին պատգամաբեր ուղարկեց. 73) և նա ասաց, թե հանելուկին պատասխան տուր, որ այդ մի զույգ եզն է մի մարդու հետ, որ վարուցանք է անում։ 74) Եվ Յուշտի Ֆրիանը ինչ-որ աղաղակ լսեց և սակայն մարդ չտեսավ, և տարակուսեց։ 75) Ապա նա իր մտքում խորհեց. չլինի՞ Ահրիմանը և

դևերը[90] մտադրվել են ինձ սպանել: 76) Եվ եթե ես այդ հանելուկին այդ ձևով պատասխան տամ, ապա այն անօրեն, չարագործ բանակալն ինձ կսպանի:

77) Այն ժամանակ Ներյոսանգ յազատը եկավ Յուշտի Փրիանի մոտ: 78) Եվ նա ասաց. «Մի վախենար, որովհետև ես Ներյոսանգ յազատն եմ, որ քեզ մոտ եմ եկել: 79) Եվ Աուհարմազդ աստվածն ասել է, թե այս հանելուկին պատասխան տուր, որովհետև հանելուկը մի զույգ եզն է մի մարդու հետ, որ վարուցանք է անում»:

80) Եվ երբ Յուշտի Փրիանն այդ խոսքը լսեց, նա միանգամայն հանգստացավ: 81) Անմիջապես գնաց Ախտի Յատուկի մոտ և ասաց. 82) «Ահա, անօրէ՛ն, չարագո՛րծ, բանակա՛լ, այս հանելուկի պատասխանը, քանզի այն մի զույգ եզն է մի մարդու հետ միասին, որ վարուցանք է անում»:

83) Երբ Ախտի Յատուկն այդ խոսքը լսեց, անմիջապես շփոթվեց և երեք օր ու գիշեր շփոթված մնաց: 84) Եվ երեք օր ու գիշերից հետո նորից ուշքի եկավ և Յուշտի Փրիանին ասաց. 85) «Հանելուկները քանն են, Յուշտի Փրիան, որ հույսդ դրել էիր Աուհարմազդ աստծու վրա, որ անմիջապես եկավ քեզ օգնության և զորավիգ եղավ»:

86) Երեսուներորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞ր ձին է լավագույնը»:

87) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրէն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 88) ապաքէն լավ է արու ձին, մարզված, լավ սերնդից, որ խնամվում է շահի ձիերի հետ»:

89) Երեսունմեկերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞րն է այն ջուրը, որ չի այրվում, և ո՞րն է այն թացը, որ այրվում է»:

90) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրէն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 91) ապաքէն այն հողն է, որ ջուր է և չի այրվում, և այն ճարպն է, որ թաց է և այրվում է»:

92) Երեսուներկուերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Ո՞ր թագավորն է լավագույնը»:

93) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես, անօրէն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 94) ապաքէն լավագույն թագավորը նա է, որ շատ բարեգութ է և ընտիր է իմաստության և գիտության մեջ և նա միաժամանակ ողորմած է և օգնող»:

95) Երեսուներեքերորդ հանելուկը, որ առաջարկեց, այս էր. «Դու, Յուշտի Փրիանդ, ի՞նչքան կյանք ունես»:

96) Յուշտի Փրիանն ասաց. «Կյանքումդ կարիքի մեջ լինես. անօրէն, չարագործ, բանակյա՛լ. և երբ մեռնես՝ դժո՛խքն ընկնես. 97) քանզի ես երեք կյանք ունեմ. մեկն այն է, որ ես ուտում

եմ. մեկն այն է, որ ես հաղթում եմ և մեկն էլ այն է, որ ես չքավորներին և արժանիներին եմ տալիս»:

Գլ. Դ

1) Այն ժամանակ Յուշտի Ֆրյանն ասաց. «Երեսուներեք հանելուկը, որ դու ինձ առաջարկեցիր, ճշգրիտ կերպով լուծեցի. 2) այժմ ես քեզ երեք հանելուկ կառաջարկեմ. եթե պատասխան չտաս, անմիջապես կսպանեմ»:

3) Ախտի Յատուկն ասաց. «Առաջարկի՛ր, կլուծեմ»:

4) Յուշտի Ֆրյանն ասաց. «Մի կանգուն հողի վերցրած սերմի արժեքն ի՞նչ է. 5) և երկրորդ [հանելուկը] առաջարկեց. «Մեկ լավ եզան արժեքն ի՞նչ է». 6) և երրորդ [հանելուկը] առաջարկեց. «Մեկ խեթուկդասի[91] բարեգործական արժեքն ի՞նչ է»:

7) Ախտի Յատուկը չիմացավ: Ապա նա ասաց. «Մեղս գալիս է. եթե հանելուկ առաջարկեն, օրենք չէ լուծել»:

8) Յուշտի Ֆրյանն ասաց, «Գնա՛ մահիկ տեղ նստիր, մտքիր և շուտ արի ու այս երեք հանելուկը ճիշտ լուծիր, 9) որովհետև, եթե ասես, թե չեմ իմանում, անմիջապես կսպանեմ»:

10) Ախտի Յատուկն իր կախարդությամբ իրեն գցեց դժոխքը. 11) և նա գոչեց Ահրիմա-

նին. «Անիծյա՛լ[92], մի կանգուն հողի վերցրած սերմի արժեքն ի՞նչ է, 12) երկրորդ՝ մեկ լուծ եզան արժեքն ի՞նչ է, 13) երրորդ՝ մեկ խնկթուկգաոի բարեգործական արժեքն ի՞նչ է»:

14) Անիծյալ Ահրիմանը գոչեց[93] Ախտի Յատուկին. «Չեմ կարող պատասխան տալ քո այդ հանելուկներին, 15) որովհետև, եթե տամ, իմ արարածներս դուրս կնեթան դևերի[94], դրուջների[95] և պարիկների[96] հետ, 16) և ես քեզ ավելի չեմ սիրում, քան իմ արարածներին: 17) Եթե ես լուծեմ այդ հանելուկները, որ դու առաջարկում ես ինձ, 18) բոլոր իմ արարածները անզոր կդառնան և ոչ մի հակադիր ուժ չի մնա, 19) որ ներգործի Աուհարմազդի արարածների վրա և անմիջապես տեղի կունենան հարություն և ապագա մարմին[97] [կընդունեն]: 20) Գնա և պարանոցդ դեմ արա. ուխտադրժությունը չէ, որ հանելուկ է լուծում: 21) Եվ երբ ժամանակը եկել է, փախչել չի կարելի, 22) քանզի քո տեղը դժոխքն է և քո հատուցումը ավելի խիստ, քան բոլոր չարագործներինը»:

23) Եվ Ախտի Յատուկը դուրս վազեց դժոխքից և իր կործանման համար տարվեց Յուշտի Ֆրիանի առաջ: 24) Ախտի Յատուկը Յուշտի Ֆրիանին ասաց. 25) «Հանելուկները քոնն են, Յուշտի Ֆրիան: Աուհարմազդը և համշասպանդները քեզ հետ էին և ինչ որ չգիտեիր, ասացին քեզ. 26) իսկ ես, որ հույս դրել էի Ահրիմանի

և դևերի վրա, երեք հանելուկն էլ առաջարկեցի Ահրիմանին և դևերին, ինձ պատասխան չտվին»:

27) Այն ժամանակ նա՝ Յուշտի Ֆրիանը, Ախտի Յատուկին անմիջապես բարսամ կտրելու դանակով կրոնական նիրանգով[98] *անզոր դարձրեց և նրա մարմնի միջի դրուջին ոչնչացրեց:*

ԳԼ. Ե. ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

1) Ով որ կարդա այս մատյանն իր ծառայողների հետ և մինչև վերջը տա մի yathâ ahû-vairyô[99], *2) նրա հոգում առաքինությունը այնպես կլինի, ինչպես Ավեստայի նիրանգով մի օձի սպանելը. 3) հոգևոր կյանքը նրա հոգում այնպես կլինի, ինչպես որ եթե նա գաթաների*[100] *աղոթքները մատուցանի երեք տարի: 4) Մի դաստուբար*[101] *կար, որ ասում էր, թե հոգևոր կյանքը անզոհ մի տարվա հանցանքից հետո ի բնե չի լինի:*

5) Վերջացավ ողջությամբ, ցնծությամբ և հաճույքով: 6) Թող խորտակվի Ախտի Յատուկը բոլոր դևերի, դրուջների, կախարդների և պարիկների հետ:

ԳԼ. Զ. ՎԵՐՋԱԳԻՐ (=ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ)

1) Վերջացավ և վախճան գտավ այս Յուշտի Ֆրիան մատյանը այս Արտա Վիրաֆի հետ, շաթ-

րեվար ամսի ամորտատ օրը, փարսիկ 618 թվին[102]: 2) Գրեցի ես, կրոնի ծառա Ռուստամս, որդի Մեհրբանի, որդի Մարզբանի, որդի Դանիշյար հիրպետի[103], հիրպետ Միհր Փանահի որդի հիրպետ Սրոշյար Նիշապուրցու ձեռագրից:

3) Աստծու կա՞մքը լինի:

4) Վերջացավ և վախճան գտավ այս Արտա Վիրազ և այս Յուշտի Ֆրիան մատյանը ոհուման ամսի ֆարվարտին օրը Հազկերտ[104] շահնշահի 766 թվին: 5) Գրեցի ես, կրոնի ծառա հիրպետորդի վարպետ Փեշոթանս, որդի Ռամի, որդի Քամդինի, որդի Շահրիյարի, որդի Ներյոսանգ Գայոմարտի, որդի Շահրիյարի, որդի Բահրամի, որդի մոգպետ Հորմզդյարի, որդի հիրպետ Ռամյարի՝ հիրպետ Ռոստամ Մեհրբանի ձեռագրից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պահլավերեն Զարթուշտ, այլ կերպ Զարաթուհաշտ, Զարաթուհաշտար, ավեստերեն Զարաթուշտրա, նոր պարսկերեն Զարդուշտ և Զարտուշտ, եվրոպական լեզուներով Զորոաստր, հայերեն Զրադաշտ, որդի Պուրուշասպայի, որ ապրում էր Վշտասպ թագավորի ժամանակ (թերևս Դարեհի հոր).—Մեծ հիմնադիր զրադաշտական կրոնի: Նա կոչվում էր Սպիտաման՝ Սպիտամայից ծագող:

* Հանգուցյալ պրոֆ. Ռ. Աբրահամյանը ծանոթագրությունները կազմելիս մեծապես օգտվել է Ջեքսոնի Իրանի կրոնին նվիրված հայտնի աշխատությունից. տե՛ս. A. V. Williams Jackson. Die Iranische Religion, որը լույս է տեսել „Grundriss der Iranischen Philologie", Band II, Strassburg 1896—1904: Վ. Մ.-Օ.

2. Զար ոգի, *պահլ. Գաննակ Մենոկ.—Ահրիմանը:*

3. Հռոմայեցի.—*Ալեքսանդրը կոչված է Հռոմայեցի, դա գալիս է բյուզանդական շրջանից, երբ Բյուզանդիոնը Արևելքում անվանվում էր Ռում, մինչդեռ* յունան (հույն) *անունը տրվում էր հին հույներին կամ փոքրասիական գաղութներին: Ալեքսանդրի սովորական մակդիրն է պահլավերենում՝ «անիծյալ»:*

4. Եգիպտոսում էր ապրում.—*Արաբ պատմագիրները Ալեքսանդր Մակեդոնացուն համարում են եգիպտացի անշուշտ այն բանի համար, որ նա Եգիպտոսում հիմնեց Ալեքսանդրիա քաղաքը:*

5. Էրանշահր.—*Բառացի նշանակում է Իրան աշխարհ:* «Շահր» *ծագում է հին պարսկերեն* խշաթրա *բառից (որ նշանակում է «աշխարհ»), ինչպես և հայերեն* աշխարհ *բառը. պատմական հոլովույթի հետևանքով* շաթր շահր *է դարձել, ինչպես մեզնում «աշխարհ» (հին պահլավական* խշահր *ձևից՝ առաջից* ա *ավելացնելով և* հր րհ-*ի փոխելով): Իսկ Էրան Իրանի պահլավական ձևն է:*

6. Ավեստա և Զանդ.—*Ավեստան զրադաշտական կրոնի սրբազան մատյանն է, որ Ալեքսանդր Մակեդոնացու ձեռքով այրվելուց առաջ բաղկացած էր 21 մեծահատոր նասքերից: Սասանյան շրջանում Ավեստայի վերականգնած մասերը, որոնք արդեն անհասկանալի էին դարձել, ուսումնասիրության ենթարկվեցին և նրանց վրա պահլավերեն մեկնություններ (կոմենտարներ) գրվեցին, որոնք կոչվեցին Զանդ. այստեղից ծագում առավ Զանդ բառի (զենդ) սխալ առումը, որպես համառոտագիր Ավեստայի. այնպես զենդերեն գործ էր ածվում ավեստերենի մտքով, մինչդեռ զանդ միայն մեկնություն է նշանակում և վերաբերում է Ավեստայի պահլավերեն մեկնությանը:*

7. Պապական.—*Արտաշիր Ա. Սասանյանի հայրանունն է: Ստահր կամ Ստախր քաղաքը, որ Պերսեպոլիսի մոտ է*

գանվում, կոչվել է Գապական, որովհետև Արտաշիրն այդտեղ է մեռել:

8. Դաստուրները կամ դաստուրբարները մեծ հոգևորականներ էին, իսկ մովպետները կամ մոգպետները սովորական հոգևորական էին և ենթարկվում էին դաստուրներին: Հիրպետները նորավարտ կրոնավորներ էին:

9. Ատուրպատ Մահրասպանդ կամ Մեհրեսպանդ.— Շապուհ Բ-ի հռչակավոր նախարարապետը, որ իրեն պատժափորձի (ordalie, ordeal) ենթարկեց: Դինքարտի (պահլավական կրոնական մեծահատոր գիրք, ժողովածու ավանդությունների, զրույցների, սովորությունների և այլն) մեջ պատմվում է, որ նրա կրծքի վրա հալած արույր ածեցին և նա անվնաս մնաց:

10. Տասպիգան, այլ կերպ Տասպեկան և Տապեկան.— Գանձարան, որտեղ գրված էր Զենդ-Ավեստայի մի պատճենը:

11. Ատուր Ֆարնբագ.—Մեկը այն երեք մեծ կրակարաններից (մյուսներն էին Աթուր Գուշնասպ և Աթուր Բուրզինմեհր), որոնք մեծ հարգանք էին վայելում Իրանում: Այդ կրակարանը Վշտասպ թագավորը Խորազմի Ֆարրոմանդ սարից, որտեղ Ջիմը (Ջմշիդը) զետեղել էր այդ կրակարանը, փոխադրեց Քաբուլստանի Ռոշան սարը, իսկ Սասանյանների ժամանակ փոխադրվեց Իստախր: Սա կրոնավորների կրակարանն էր, ինչպես զինվորականներինը Աթուր Գուշնասպն էր, և արհեստավորներինը՝ Աթուր Բուրզինմեհրը:

12. Հազուսն (հին ուղղագրությամբ յազուսն, պահլավերեն յազեշն).—Նվիրագործում աղոթքներով, մանավորապես հոմի (հմմտ. հնդկական Սոման) հյութի մատուցումը և խմելը: Սա զրադաշտական ամենասրբազան ծիսակատարությունն է:

13. Դրոն.— *Մի փոքրիկ (ձեռքի չափ) հարթ կլոր հաց, որ նվիրագործվում էր և ուտվում զանազան ծեսերի ժամանակ:*

14. Աֆրինգան.— *Ծես, որ նպատակ ուներ փառաբանելու աստվածներին և անցավոր հոգիներին, որի ժամանակ պտուղները և գինին նվիրագործում էր մոգպետը և ուտում էին ծեսի մասնակիցները:*

15. Նիրանգ.— *Աղոթքի ֆորմուլա, որ գործ էր ածվում որպես հմայք չարից պաշտպանվելու համար:*

16. Լվացումները.— *Աղոթքի պատրաստվելիս՝ լվանում էին ձեռքերը, բազուկները, ոտքերը և երեսները:*

17. Մաքրումները.— *Բարշնումով մաքրվելու ծես 9 գիշեր տևողությամբ, որի ժամանակ մեծ դեր էր կատարում կովի մեզը:*

18. Դաստուբար.— *Տե՛ս ծանոթ. 8:*

19. Մտքերը, խոսքերը և գործերը.— *Տե՛ս ծանոթ. 24:*

20. Արտա Վիրազ.— *Արտ գտնվում է Արտաշիր, Արտավան և այլ անունների մեջ և նշանակում է «սուրբ»․ Վիրազ միր արմատից, որ նշանակում է «հոգի, իմացականություն»: Այսպիսով Արտա Վիրազ նշանակում է «սուրբ իմացականություն ունեցող»:*

21. Նիշապուր.— *Խոսրով Անուշիրվանի (531–579) օրով հիշվում է մի Նիշապուր որպես Ավեստայի մեկնաբան: Հայտնի չէ, թե որևէ կապ կա այս Նիշապուրի և Արտա Վիրազի մեջ:*

22. Մանգ կամ բանգ.— *Աֆիոնի մի տեսակը, որ պատրաստվում է կանեփի տերևներից և մողեխինդից:*

23. Մազդեյան.— *Մազդայի (Ահուրամազդայի) կրոնին պատկանող, հետևող:*

24. Լավ կամ բարի միտք, բարի խոսք և բարի գործ.— *Զրադաշտական կրոնի ահուրամազդայան բարոյականության սկզբունքն է, ինչպես որ «չար միտք, չար խոսք և չար գործ»՝ ահրիմանյան բարոյականության:*

25. **Որպես կին էին.**—*Հին Իրանում ընդունված էր ամուսնությունը ոչ միայն եղբոր որդոց միջև, այլև քրոջ և եղբոր, հոր և աղջկա, մոր և որդու. և այդ շատ հարգի և սուրբ էր համարվում որպես առաքինության նշան: Այդ խնամխառնումը կոչվում է* խեթուկդաս: *Այդ հաստատված է զրադաշտական և դասական հեղինակներով Հերոդոտից մինչև Պլուտարքոս, Ստրաբոն, Փիլոն և այլն: Խեթուկդաս գործադրողների հոգիները վայելում էին ամենաբարձր երանություն (տե՛ս գլ. 12, §§ 11—12), իսկ խեթուկդասը դրժողների հոգիները ծանր պատիժներ էին կրում (հմմտ. գլ. 86): Հետագայում այս սկզբունքի հակ կողմերը երևան եկան. այժմ զրադաշտականների մեջ ամուսնություն թույլատրվում է միայն եղբայրների կամ քույրերի զավակների, և ոչ ավելի մոտ բարեկամների միջև: Եթե ի նկատի ունենանք, որ հետին փազանդ և պարսկերեն ձեռագրերը բաց են թողնում վերոհիշյալ նախադասությունը և պահլավական ձեռագրերից էլ մի քանիսը «քույրերը» փոխարինում են «կանայքը» և «եղբայրը»՝ «ամուսին» բառով, կարող ենք եզրակացնել, որ Արտա Վիրազը գրվել է Սասանյան շրջանում, երբ խեթուկդասը հարգի էր:*

26. **Յաշտ անել.**—*Նվիրագործել ծիսակատարությամբ և աղոթքներով, աղոթք մատուցանել, պաշտել:*

27. *Արտա Վիրազի մարմինը որպես դիակ էր համարվում և որպես այդպիսին՝ պիղծ էր և պետք է հեռու գտնվեր սուրբ տեղերից:*

28. **Վշտասպյան մանգ.**—*Մանգի մի տեսակն է:*

29. **Վամ, վաչ.**—*Համառոտ աղոթք ճաշից առաջ և հետո:*

30. **Նասք.**—*Քսան և մեկ գրքերից մեկը, որոնցից կազմված էր նախնական ամբողջական Ավեստան:*

31. **Գաթաներ.**—*Հինգ սրբազան պսալմներ, որոնք կազմում են Յասնայի հնագույն մասը և վերագրվում են Զրադաշտին:*

32. **Չիկար Դայիտիկ.**—*Արդարադատական բլուր. մի լեռ աշխարհի կենտրոնում հարյուր մարդու հասակի բարձրությամբ, որի վրա ամրացած է Չինվաթ կամուրջը:*

33. **Չինվար կամուրջ.**— *Այստեղ հավաքվում են մեռածների հոգիները մեռնելու երրորդ օրը, որտեղ և նրանց գործերը կշռվում են: Կամուրջը միայն առաքինիների համար էր լայն բացվում և նրանք անցնում էին երկինք: Մինչդեռ չարագործները կամուրջի անչափ նեղությունից գլորվում էին դժոխք:*

34. **Ոհուման.** — *Համշասպանդներից մեկը, այստեղ «մաքուր» իմաստով:*

Համշասպանդները (Ameshas spentas=*անմահ բարեբարներ*).— *Բարձրագույն աստվածությունները էին զրադաշտական կրոնում, թվով յոթ: Նրանց կենտրոնը կազմում էր.*

1) **Ահուրամազդան** *կամ պահլավական ձևով* **Աուհարմազդը**, *որ գլխավոր աստվածն էր և, որպես արարիչ, առանձին է հիշվում համշասպանդներից: Նա բարի էակների արարիչ-ստեղծողն է և Չար ոգու – Արհմնի հակառակորդն ու հաղթական թշնամին: Նրա անունը տրված է Յուպիտեր մոլորակին և փարսի ամեն ամսի առաջին օրին: Ամսի 8-ը, 15-ը և 23-ը նվիրված են նրան որպես արարչի:*

2) **Ոհուման**, *ավ.* **Ոհու Մանահ** *«բարի միտք», հետագայում՝* **Բահման.**—*Սրան էր հանձնված խոշոր և մանր անասունների խնամքը: Նա բազմում էր Աուհարմազդի աջ կողմում: Նրա անունը գործադրվում էր տարվա 11-րդ ամսում՝ հունվարի 21—փետրվ. 19 և ամեն ամսվա երկրորդ օրում:*

3) Արտավահիշտ (Օրդիբեհեշտ, ավ. Աշա Վահիշտա) *«կատարյալ արդարադատություն».—Նա առաքինության կատարելատիպն է, և բոլորը պետք է աշխատեն ապրել որպես «աշա»: Խնամատարն է կրակի. Նրան նվիրված են երկրորդ ամիսը (ապրիլ—մայիս) և ամսի 3-րդ օրը:*

4) Շարրիվար *կամ* Շահրիվար *(ավ.* Խշաթրա Վայրիա) *«լավ թագավորություն».—Նա խնամակալն էր մետաղների. Նրա անունով էին հիշվում 6-րդ ամիսը (օգոստ. 23—սեպտեմբ. 22) և ամեն ամսվա չորրորդ օրը:*

5) Սպանդարմատ *(ավ.* Սպենտա Արմայտի) *«Բարեբար առաքինություն». մեզնում՝ Ս(պ)անդարամետ. Նոր պարսկերեն* Իսֆանդ.*—Առաքինի կանանց հովանավորը. անունը կապված էր 12-րդ ամսվա (փետր. 20—մարտ 20-ը) և ամսվա հինգերորդ օրվա հետ:*

6) Հորվատատ *(ավ.* Հաուրվատատ) *«փրկության կատարելություն». նոր պարսկ.* Խորդադ.*—Ջրի հովանավորը, նրա անունով էին հիշվում 3-րդ ամիսը (մայիս 22—հունիս 21-ը) և ամսվա 6-րդ օրը:*

7) Ամերետատ *«անմահություն». նոր պարսկ.* Մորդադ.*—Նա բուսականության հովանավորն էր: Նրա անունը իրենց վրա էին ընդունել հինգերորդ ամիսը (հուլիս 23—օգոստ. 22) և ամսվա 7-րդ օրը:*

Սրանք այսպես են զետեղվում Ահուրամազդայի երկու կողքին:

	Ահուրամազդա	
Ոհու Մանահ	/ \	*Սպենտա Արմայտի*
Աշա Վահիշտա	/ \	*Հաուրվատատ*
Խշաթրա Վայրիա	*Սրաոշա*	*Ամերետատ*

Վեց համշասպանդները բաժանվում էին երկու խմբի ըստ սեռի և նստում էին արական սեռին պատկանողները Ահուրամազդայի աջ կողմը, իսկ իգականները՝ ձախ կողմը:

Համշասպանդների թիվն երբեմն ավելացնում էին Սրաոշային կամ Սրոշին։

35. Յազատներ, եզ. Յազատա, ն. պ. իզեդ «պաշտելի էակներ».—Սրանք հրեշտակներ են, թվով լեգեոն. ըստ Դիոգենես Լայերտացու ամբողջ օդը բնակեցված է ոգիներով, բայց հականե հանվանե հայտնի են քչերը և Պլուտարքոսը դրանց թիվը ընդունում է 24։ Մեծագույն յազատան Ահուրամազդան ինքն է, ապա գալիս են՝

1) Ատր կամ Ատուր (ն. պ. ատաշ «կրակ»)... Ահուրամազդայի որդին. 9-րդ ամիսը և ամիսներից 9-րդ օրը նվիրված են Աթուրին։

2) Ապա (Աբան) «ջուր».—Նրան նվիրված են 8-րդ ամիսը և 10-րդ օրը։ Հինգերորդ յաշտը, որ նվիրված է Արդվի Սուրա Անահիտային, վերաբերում է ջրին։ (Անահիտն, ինչպես հայտնի է, մեծ դեր էր կատարում հայկական պանթեոնում)։ Ջրի արական աստվածությունն է և համապատասխան Արդվի Սուրա Անահիտային։

3) Աբամ Նապատ «ջրի երեխա»։

4) Հվարր Խշաետրա (ն. պ. խուրշիդ) «արև».—Ահուրամազդայի աչքը։

5) Մահ «լուսին»։

6) Տիշթրիա աստղը (Սիրիուսը)։

7) Դրվասպա։

8), 9), 10) Միթրա (Միհր), Սրաոշա և Ռաշնու.—Սրանք կարևոր աստվածություններ էին և դատավորներ էին մեռելների։ Միթրան լույսի, ճշմարտության և անկեղծության աստվածն էր. համաձայն 10-րդ յաշտի՝ զորությամբ նա համարյա հավասար էր Ահուրամազդային. Նա հայկական նշանավոր աստվածներից մեկն էր։ Մանուշակը նվիրված էր Միհրին։ Սրաոշան կամ Սրոշը, «առաքինի» կոչված (նշ. «հնազանդություն»), աստվածների պատգամաբերն է և մարդկանց պաշտպանը դևերից։ Նրան

նվիրված էր աքաղաղը: Թաշնուն կամ Թաշնը մեռածների հոգիներն էր կշռում Չինվաթ կամուրջում:

11) **Աշտատ.**—*Կանացի յազատը, որ գաղութներ էր հիմնում և խնամում:*

12) **Վայու վեհ.**—*Բարի հողմ, որ հակադրվում էր չար հողմին:*

13) **Վըրըրրագնեա-Վարահրան—Վահրամ-Վռամ, ն. պ. Բահրամ.**—*Ծագում է հնդկա-իրանյան շրջանից. մեզանում հայտնի է Վահագն անունով, որ մեր նշանավոր աստվածներից մեկն էր: Նույնացվում է հունական Հերակլեսի և Արեսի հետ. պատերազմի հանճարն էր. 14-րդ յաշտը նվիրված էր նրան, ինչպես և ամսվա 12-րդ օրը:*

36. **Միազդ կամ մյազդ.**—*Սրբազան ճաշ, որին մասնակցում են բոլոր զոհակարգերի փարսիները ընդհանուր աղոթք կատարելուց հետո՝ հացի, գինու և պտուղների նվիրագործմամբ:*

37. **Ֆրավաշիներ.**—*Պահապան ոգիներ:*

38. **Ահրիման և դևերի լեգեոնը.**—*Ահրիմանը «դևերի դևը», ինչպես հայտնի է, Ահուրամազդայի հակառակորդն է և չարության մարմնացումը: Ինչ բարի գործ, որ անում է Ահուրամազդան, Ահրիմանը պատասխանում է նրան համապատասխան չար գործով: Ահրիմանի այս գործունեությունը լավ արտացոլված է Եղիշեի մեջ՝ հայերին ուղղված Միհրներսեհի թղթում: Ահրիմանն իր աջ կողմում ունի կին դև Դրուջին, ինչպես Ահուրամազդան Աշա Վահիշտային և Դրուջը Աշայի կատաղի թշնամին է: Ահրիմանի անվան նախնական ձևն է Անրա Մայնյու, որ որոշ ենթադրություններով կարելի է թարգմանել «թշնամի ոգի»:*

Դիվական աշխարհը բաղկացած է դևաններից (դևերից), դրուջներից, դրվանդներից, պայրիկաներից (փերիներից), դրոզոններից և այլն, որոնցից դևանները արական սեռին են պատկանում, դրուջները և պայրիկաները՝ իգական:

Վեց արխիդեմոններ (դևապետներ) — Ահրիմանով յոթ: Այս խմբակը ձևավորված է համշասպանդների նմանությամբ և առանձին անուն էլ չունի (երբեմն կոչվում է կամարիկան, այսինքն կամարիկներ)․ սրանց անուններն են․ Ակա Մանահ, Ինդրա, Սաուրու, Նաոնհայիթյա, Տաուրվի, Զայրիկ և իբրև յոթերորդ, որ համապատասխանում է Սրոշին, Աեշմա: Սրանցից երեք հոգի (Ինդրա, Սարվա, Նասատյա) վերցրած են հնդկական պանթեոնից: Կամարիկները բազմում են Ահրիմանի կողքերին հետևյալ կերպ:

Սաուրու　　Աեշմա　　Զայրիկ
Ինդրա　　　　　　　Տաուրվի
Ակա Մանահ　　　　　Նաոնհայիթյա
Անրա Մայնյու.

1) Ակա Մանահ (ն. պ. Ակուման). — Ամենից ավելի հիշատակվող արխիդեմոնն է. սա Ոհու Մանահի մահացու հակառակորդն է:

2) Ինդրա, պահլ. Ինդար. — Աշա Վահիշտայի հակառակորդը, որոշ տեղեկության համաձայն նա պատժում է հոգիներին դժոխքում:

3) Սաուրու. — Անիշխանության և արբեցության արխիդեմոնը. Խշաթրա Վայրիայի հակառակորդը:

4) Նաոնհայիթյա, որը համապատասխանում է հընդկական Նասատյային․

5) Տաուրվի 6) Զայրիկ. — Այս անունները հանդիպում են միասին, ինչպես Հաուրվատատ և Ամերետատը, որոնց երդվյալ հակառակորդներն են․ նրանք թույն են խառնում բույսերին, թունավորում են կենդանիներին:

Այս վեցին, ինչպես հիշվեց, ավելանում է Աեշմա (պահլ. Աեշմ, ն. պ. խեշմ), զայրույթի արխիդեմոնը, ամենասարսափելին բոլոր դևերից: Նրա դրոշակի տակ դևերը գրոհ են տալիս խորտակելու մարդկային կյանքը և

ունեցվածքը: Ըստ Բունդահեշնի՝ նա է, որ ծրագրում է ամեն տեսակ չարիք Ահուրամազդայի արարածների դեմ: Սրա հակառակորդն է Սրաոշա յազատան, որ կհաղթահարի Աեշմային, երբ որ աշխարհի վախճանը հասնի:

Այլ դևեր.

Այլ դևերն անթիվ են, բայց նրանց մասին տեղեկություններ չկան: Հիշենք մի քանի գլխավորները:

1) Թարոմայիտի, *պահլ.* Թարոմար.—*Հաճախ հիշվում է արխիդեմոնների շարքում:*

2) Միթոխտ.—*Ահրիմանի առաջին արարածներից մեկը:*

3) Արասկա, *պահլ.* Արաշկ. - *Զուգորդվում է* Աեշմայի *հետ:*

4) Վիզարեշա, *պահլ.* Վիզարեշ.—*Մեղավոր հոգիներին տանջողը. մեռնելուց հետո երեք օրվա ընթացքում նրանց կապում է, քաշ է տալիս և այլն:*

5) Բուշիաստա, *պահլ.* Բուշասպ.—*Ժամանակից ավել քնեցնում է մարդկանց և այդպիսով թերացնում նրանց իրենց պարտականություններից:*

6) Աստովիճատու, *պահլ.* Աստովիճատ.—*Մահվան կարմիր դևը, որ կապում է հոգուն և բաժանում մարմնից. հիշվում է հարակից Աեշմային և Վայուին:*

7) Վայու վատ *կամ չար, անգութ կոչված.—Պատմըվում է բարի և չար վայուների մասին, երբ արդարի հոգին գալիս է Չինվաթ կամուրջի մոտ:*

8) Ապաոշա.—*Երաշտի հզոր դևն է, որ պատերազմում է անձրևի աստվածուհու՝ Տիշթրիայի հետ, բայց վերջապես պարտություն է մատնվում:*

9) Զրմակա *(հայերեն համազոր՝* ձմակ).—*Ձմեռվա դևը:*

10) Պայրիկիշա *«ամենադիվային դևերից». - Հակառակություն և հակամարտություն դևը, որ մարմնացնում է Ահրիմանի ուժը՝ ավերել աշխարհը և այլն:*

Բացի դևերից հիշվում են և այլ դժոխային ուժեր, որոնք են.

1) Դրուջ կամ դրուջներ, հ. պ. drauga, ն. պ. դրուղ «սուտ» իգական սեռի.—Աշայի հակառակորդները. այս բառից կազմվել է դրըգվանտ (պահլ. դրվանդ) ածականը, «անհավատ, չարագործ» նշանակությամբ:

2) Դրուջ Նասու.—Ապականության, եղծման, վարակման և կեղտոտության դևը, որ մի սարսափելի ճանճի նման տիրանում է գիակին և վարակ է սփռում չորս կողմը: Դիակներից նրան կարելի է վախեցնել շան հայացքով (sagdid), իսկ կենդանի մարմնից քաշվում է ծիսակատարությամբ՝ 9 գիշեր տևող լվացումով:

3) Աժիդահակա (պահլ. Աժիդահակ Բևարասպ, հայ. Աժդահակ Բյուրասպ).—Մի հրեշ, որ ունի 3 գլուխ, 6 աչք, 3 ծնոտ. այս բացատրվում է, ըստ Շահնամեի, նրանով, որ նրա ուսերին երկու օձեր էին դուրս եկել: Նա իր մոր՝ Աութակի կամ Ուդայի հետ հանցավոր հարաբերության մեջ էր գտնվում: Նրա աթոռանիստը Բաբելոնն է. նա գահընկեց արեց և սպանեց Յիմային կամ Ջամշիդին և թագավորեց 1000 տարի, բայց ի վերջո հերոս Թրաետաոնան (վերջի Ֆերեյդունը, հայ. Հրուդենը) շղթայեց նրան և գամեց Դըմավանդ սարի ճակատին:

4) Յատուներ (պահլ. յատուկ, ն. պ. ջատու).—Կախարդ կանայք, ավելի շուտ մարդկային, քան դիվային արարածներ: Նրանց գլխավորն է Ախտիա վհուկը (տե՛ս Ներածություն, էջ 36):

5) Պայրիկաներ (պահլ. պարիկ, հայ. պարիկ, հուշկապարիկ, ն. պ. փերի): Սրանք նազելի արարածներ են, բայց ոճրագործ. նրանց ապականության և ավերին ենթակա են գետինը, ջուրը, կրակը, անասունները և բուսականությունը:

6) Չար աստղերը և մոլորակները.—Ըստ Բունդահեշնի՝ մոլորակները բազմաթիվ դևերի հետ հարձակվում

են երկնային ափյուռքի վրա. սրանք թվով յոթն են և Ահրիմանի արարածներն են:

7) Բացի սրանցից կային և չար հրեշտակներ. դրանցից մեկն էր Աժիդահակն, *երկսին սպանեց հերոս Քերեսասպան և այլն:*

39. Ապագա մարմին *(թան ի փասին). — Մարմնի ապագա գոյությունը, երբ հարությունից հետո հոգին կկենդանացնի մարմինը:*

40. Սրոշոխարանամ. — *Շատ փոքրիկ ծանրություն, որի կշիռը հայտնի չէ:*

41. Խերուկդաս. — *Տե՛ս ծանոթ. 25:*

42. Գարուրման. — *Չորրորդ բարձրագույն երկինքը և Ահուրամազդայի և համշասպանդների գահույքը:*

43. Քեյ Վ(ի)շտասպ. — *Քեյանի թագավորներից հինգերորդը, որի ժամանակ Զրադաշտը քարոզեց մազդեյանյան կրոնը: Ոմանք նույնացնում են նրան Դարեհի հոր՝ Վշտասպ թագավորի հետ:*

44. Ջամասպ. — *Գլխավոր բարձր հոգևորականը, որ Վշտասպի ժամանակ հաջորդել էր Զրադաշտին:*

45. Գայոմարտ. — *Առաջին մարդը, մարդկային ցեղի նախահայրը:*

46. Ֆրաշոշտար. — *Քեյ Վշտասպի պալատում ապրող մի նշանավոր անձնավորություն, հավանաբար հոգևորական և Ջամասպի եղբայրը:*

47. Խրաֆստարներ. — *Վնասակար արարածներ, սողուններ և միջատներ (օձեր, մողեսներ, կարիճներ, գորտեր, մրջյուններ, որդեր և այլն), որոնք ստեղծված են Ահրիմանի ձեռքով՝ վիրավորելու Ահուրամազդի արարածներին: Մեծ առաքինություն էր համարվում խրաֆստարներին ոչնչացնելը (գլ. 14, §§ 11—12):*

48. Հմմտ. գլ. 4, §§ 32—35, որի հակադրություններն են այս՝ գլ. 17-ի §§ 24—26:

49. Թանապուհր.—Մահացու մեղք, որի դրամական արժեքն է 300 ստիր, յուրաքանչյուրը 4 դրախմ, այսինքն 129 ֆունտ ստեռլինգ:

50. Տե՛ս ծանոթ. 34. Համշասպանդներ:

51. Մի կոշիկով.—Այլ ընթերցումով՝ առանց կոշիկի, որ ավելի հավանական է:

52. Բաց.—Առանց սադրահ (շապիկ) և քուստի (սրբազան գոտի):

53. Կանգնած.—Մինչև այժմ էլ պարսիկները միզում են կկզած: Վերջին կարգի հանցանքները համարվում են դիվային սպասարկություններ:

54. Կապին և դուլար.—Ընդեղենի չափեր են:

55. Դափանոս կամ դանավոս.—Այս պատմվածքը հայտնի է և 13-րդ Նասքից. հավանական է, որ սա հունական անուն է—Δαναός.

56. Վռամյան կրակ.—Սրբազան կրակ:

57. Սպանդարմատ.—Տե՛ս ծանոթ. 34:

58. Գանձակ Մենոկ.— Տե՛ս ծանոթ. 2 և 38:

59. Մադիկան կամ մադիան (madikān).—Թարգմանվում է սովորաբար որպես «զրույց, հեքիաթ». մենք թարգմանեցինք «մատյան», ի նկատի ունենալով հայերեն և պահլավերեն բառերի նույնարմատ լինելը:

60. Բնագրի ունի ֆրաշն (Frašn), որ մեր «հարց» բառն է հնդեվրոպական ընդհանուր արմատից. հմմտ. սանսկր. praçná, ավեստ. frashna, լատ. procor «խնդրում եմ», գոթ. fraihna «հարց», սլավ. prositi «խնդրել» և այլն:

61. Լուծողներ.— Կարելի էր թարգմանել «վճարողներ». վճռողներ. պահլ. վճարթան բայից (Frašn vičarān):

62. Կարելի է թարգմանել և «աշխարհ». շահր կամ շաթր մեր աշխարհ բառի հետ ծագում է հին պարսկ. (աքեմեն.) խշաթրա բառից և նշանակում է «քաղաք» կամ «աշխարհ». հմմտ. Էրանշահր. ծանոթ. 5:

63. Տասնհինգ տարեկանից ի վեր.—Երկու սեռի պատկանող երեխաները տասնհինգ տարեկան արբունքի էին հասնում և նրանց տրվում էր սրբազան գոտին՝ «քուստիկը», որը հյուսվում էր 72 բրդե թելերից: Այդ «քուստիկը» երեք անգամ պատեցնում էին մեջքի շուրջը և չորս հանգույց տալիս:

64. Մահրասպանդ.—Տե՛ս ծանոթ. 9:

65. Արան յաշտում եռակի է ասված. տե՛ս Ներածութ. էջ 37:

66. Դիակներ.—Մարդկանց և շների դիակները անմաքուր էին համարվում և արգելվում էր նրանց ձեռք տալ: Ախտի Յատուկը դիակները թաքցրել էր անկողնու տակ, որպեսզի Յուշտի Ֆրյանի հետ եղած ոգիները խորշեն և հեռանան և Յուշտի Ֆրյանը չկարողանա լուծել հանելուկները:

67. Համշասպանդներ.—Տե՛ս ծանոթ. 34:

68. Յազատներ, ավ. յազատաներ.—Տե՛ս ծանոթ. 35:

69. Յաշտ.—Դիմումի և գովաբանության ձև համշասպանդների և յազատների նկատմամբ, որոնց անունները կիրառվում են ամսի օրերին: Յաշտ կոչվում են նույնպես Յասնաները կամ ընդհանուր ծիսական աղոթքները:

70. Այսինքն՝ երբ համեմատաբար թույլն ուժեղից ավելի ուժեղ է հանդիսանում զինվածով:

71. Պարահոմ.—Հոմ դեղին ծաղկի հյութը, որ քամում, հանում էին հոգևորականները և ըմպում:

72. Սպիտամա.—Զարաթուշտի կամ Զրադաշտի նախահայրն է: Սպիտաման նշանակում է Սպիտամայան: Զրադաշտն ուներ միայն երեք դուստր:

73. Սրաոշա կամ Սրոշ.—Տե՛ս ծանոթ. 34:

74. Բարսոմ.—Նռնենու, մոշենու կամ արմավենու ճյուղերի մի կապոց, որ մեծ տեղ է բռնում փարսիների ծիսակատարության մեջ: Հնում գործ էին ածվում բարակ ճյուղեր՝ 1—2 թիզ երկայնությամբ և մի գարեհատի հաս-

տությամբ՝ կտրած առողջ ծառից. Ներկայումս դրանք պղնձե ձողիկներ են, կապած և ամրացված մահիկաձև մագիլների վրա:

75. Աստովինատռ կամ Աստովինատ.—*Տե՛ս ծանոթ. 38:*

76. Գարուրման.—*Տե՛ս ծանոթ. 42:*

77. Փարվից կամ Փարվին.—*Յոթնաստեղունք (պլեյադներ):*

78. Բարի մտքեր, բարի խոսքեր և բարի գործեր—*հումատ, հուխտ և հուվարեշտ.—Առաքինության ֆորմուլան էր, որ պահանջվում էր մարդկանցից:*

79. Հինգ Քիանի թագավորները.—*Քիանի հարստության պատկանող հետևյալ առասպելական թագավորներն են՝ Քեյ Ղոբադ, Քեյ Քաուս, Քեյ Խոսրով, Քեյ Լոհրասպ և Քեյ Վշտասպ կամ Քեյ Գուշտասպ:*

80. Գահանբարներ.— *Սեզոնական խրախճանքներ, որոնցից վեցը ընկնում էին փարսի տարվա 45-րդ, 105-րդ, 180-րդ, 210-րդ, 290-րդ և 365-րդ օրերին:*

81. Անվանիներ.—*Անհայտ է, թե ինչ անվանիներ են ակնարկվում այստեղ:*

[81a. *Մարդու մարմնի մեջ եղած «բացվածքների»—ծակոտիկների հարցով զբաղվել են նաև մեր հին գրականության մեջ: Այսպես պահլավ գրական հուշարձանի ժամանակակից Անանիա Շիրակացին նույնպես քննության է առնում այդ խնդիրը, սակայն մեր հեղինակը ծակոտիկների թիվը յոթն է համարում ինի փոխարեն: Շիրակացին գրում է. «Ըստ Է. թուոյ զամենայն եղեալ և օրինակեալ ծանեաք»... Մարդու մարմինը բացառություն չէ, որովհետև «Եւ Է. ելք ծակուեալ է՝ Բ. աչօք և ականջիւք զուգեալ, Բ. ռնգամբք (այլ. ռնգամբք). և Է. երորդն բերանաւն» (Անանիա Շիրակացի՝ Տիեզերագիտություն և տոմար, աշխ. Աշ. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 61—62):*

Ան. Շիրակացու և պահլավ հուշարձանի մտածողության տարբերությունը, հավանորեն, առաջացել է քրիստոնեական հոգևոր աշխարհում գերիշխող աստղա-բա-

բելական-եբրայական «յոթնյակի» տեսաբանությունից, մինչդեռ Յուշտի Ֆրիանը վերարտադրում է կրոնական-դրադաշտական թվերի զուգադրությունը: Ծանոթ. խըմ-բագիր Կ. Մելիք-Օհանջանյանի]:

82. Պակասում են 14—22 հանելուկները:

83. Սպանդարմատ.—Տե՛ս ծանոթ. 34:

84. Տիշրար կամ Տիշրրիա յազատ.—Տե՛ս ծանոթ. 35:

85. Վայու կամ Վեհ Վայու.—Թամ յազատի երկրորդ անունը, դրա հակառակորդն էր Զոր Վայուն:

86. Թերևս հետագա ժամանակներում ավելացված է գրիչների կողմից. գլուխը քողով ծածկելը մահմեդականության ազդեցությունն է:

87. Տե՛ս ծանոթ. 53:

88. Մող.—Քարեր, որոնք կանոնավոր հեռավորությամբ աստիճանաբար դասավորված են մաքրվելու ժամանակ նստելու համար:

89. Ներյոսանգ.—Յազատներից մեկը: Տե՛ս. ծանոթ. 35:

90. Անրիման և դևերի լեգեոնը.—Տե՛ս ծանոթ. 38:

91. Խերուկդաս.—Տե՛ս ծանոթ. 35:

92. Անիծյալ (gajestak).—Անվանում էին Ահրիմանին. մարդկանցից այդ մակդիրը կրում էր Աղեքսանդր Մակեդոնացին ո՛չ միայն Իրանն ավերելու, այլև Ավեստան այրելու համար:

93. Գոչեց.—Դևերի խոսելու ձևն էր այս:

94. Դևեր.—Տե՛ս ծանոթ. 38:

95. Դրուջներ.—Տե՛ս ծանոթ. 38:

96. Պարիկներ.—Տե՛ս ծանոթ. 38:

97. Ապագա մարմին.—Տե՛ս ծանոթ. 39:

98. Նիրանգ.—Տե՛ս ծանոթ. 15:

99. Yathâ ahû-vairyô.—Ամենասրբազան կրոնական ֆորմուլաներից մեկը, որ արտասանվում էր որևէ նշանավոր միջոցառումից առաջ ու հետո, որոշ դեպքերում՝ մի քանի անգամ:

100. Գաթաներ (gâthas).—*Ավեստայի հնագույն մասերը, որբազան հիմներ: Տե՛ս ծանոթ. 31:*

101. Դաստուրար. *կամ* դաստուր.—*Տե՛ս ծանոթ. 8:*

102. Համապատասխանում է 1249 թ. հուլիսի 18-ին:

103. Հիրպետ.—*Տե՛ս ծանոթ. 8:*

101. Հազկերտ *կամ* Յազդգերդ Գ.—*Սասանյան հարստության վերջին թագավորը (632—651): Սրա գահակալության օրից (16 հունիսի 632 թ.) սկսվում է փարսի թվականը: Ոմանք, սակայն, հաշվում են նրա գահակալության 20-րդ տարուց: Հիշյալ թվականը համապատասխանում է 1397 թ. նոյեմբերի 20-ին, երբ ձեռագիրը գրվել է:*

ՊՐՈՖ. ՌՈՒԲԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Համառոտ կենսագրական)

Դոկտոր-պրոֆեսոր Ռուբեն Թադևոսի Աբրահամյանը ծնվել է Վայոց ձորի (ներկայումս Ազիզբեկովի շրջան) Գնիշիկ գյուղում 1881 թվականին:

Նախնական կրթությունը Ռ. Աբրահամյանը ստացել է հայրենի Գնիշիկ գյուղում իր հոր նախաձեռնությամբ բացված դպրոցում: Այնուհետև նա սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասարանական բաժնում, որը ավարտել է 1899 թվականին: Երկու տարի հետո՝ Բաքվում ձեռք բերելով ուսուցչական ցենզ, Ռ. Աբրահամյանը 1901 թվականից լծվել է մանկավարժական աշխատանքի և մոտ 45 տարի շարունակ անխոնջ կերպով ծառայել այդ հանրօգուտ բնագավառում:

Բարձրագույն կրթություն ստանալու նպատակով 1906 թ. նա Երևանում ավարտական քննություններ է տալիս գիմնազիայում և ստանում

հասունության վկայական, որը նրան իրավունք է տալիս մտնելու ռուսական համալսարան:

1907 թ. Ռ. Աբրահամյանն արդեն ուսանում է Կիևի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում ու մասնագիտանում լեզվաբանության գծով:

1909 թվականին ուղևորվում է Գերմանիա և, Լայպցիգում վեց ամիս մնալով՝ ունկնդրում է ժամանակի մի քանի ականավոր լեզվաբաններին:

Ռուսաստան վերադառնալուց հետո նա փոխադրվում է Պետերբուրգի (Լենինգրադի) համալսարանը, որտեղ ունկնդրում է պրոֆ. Բոդուեն-դե-Կուրտենեի, ակադեմիկոս Շախմատովի, Ն. Մառի և այլոց դասախոսությունները:

1911 թվականին Ռ. Աբրահամյանը ավարտում է Պետերբուրգի համալսարանը. Նրա դիպլոմային աշխատանքը կրում է «Սասնեմանի Ավետարանի հետազոտությունը» վերնագիրը:

Դեռ համալսարանը չավարտած նա հրավիրվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում դասախոսելու: Այնտեղ նա մնում է միայն մեկ տարի, որից հետո մինչև 1920 թ. ապրում է Թիֆլիսում՝ սկզբում դասավանդելով երրորդ գիմնազիայում և ապա Թիֆլիսի ռուսական համալսարանում: Թիֆլիսում գտնված տարիներին Ռ. Աբրահամյանը Յուրի Նիկոլաևիչ Մառից սովորում է ժամանակակից պարսկերեն լեզուն:

1921 թվականից մինչև 1946 թ. Ռ. Աբրա-

համյանը ապրում է Իրանում։ Այդ տարիներին նա դասավանդում է Թավրիզի, Նոր Ջուղայի և Թեհրանի հայկական դպրոցներում։ Երկար տարիներ վարում է Թեհրանի հայկական դպրոցի տեսչի պաշտոնը։

Իրանում ապրած ժամանակ Ռ. Աբրահամյանը անդուլ ու ժրաջան կերպով հարստացնում և խորացնում է իր գիտելիքները հին իրանական լեզուների բնագավառում, միաժամանակ ուսումնասիրում ժամանակակից տեղական մի շարք բարբառներ։

1935 թ. մեկնում է Փարիզ և դոկտորի կոչում ձեռք բերելու նպատակով որպես դիսերտացիա ներկայացնում Իսպահանի ու Համադանի հրեաների պարսկերեն բարբառների ուսումնասիրությունը։

Վերադառնալով Իրան՝ դոկտ. Ռ. Աբրահամյանը հրավիրվում է կազմակերպելու և հիմնադրելու Թեհրանի համալսարանի հին իրաներենի և պահլավերենի ամբիոնը, որտեղ և տասը տարի անընդմեջ մնում է որպես ամբիոնի վարիչ։

1946 թ. Իրանում մեծ շուքով տոնվում է անխոնջ մանկավարժ-գիտնականի գործունեության 45-ամյա հոբելյանը։

Պրոֆեսոր-դոկտոր Ռուբեն Աբրահամյանը՝ երկար տարիներ ապրելով օտար հորիզոնների տակ, իր հոգեկան կապը չի խզում մայր հայրենիքի հետ և ամեն ձևով աշխատում է սատարել

նրա վերելքին։ Թեհրանում նա եղել է «Սովետական Հայաստանի հետ կապ պահպանող մշակութային միության» պատվավոր նախագահ։

1946 թ. պրոֆ. Ռ. Աբրահամյանը հազարավոր հայրենադարձների հետ վերադառնում է Սովետական Հայաստան և անմիջապես աշխատանքի ընդունվում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող, որտեղ և աշխատում է մինչև իր մահը՝ 1952 թ.։

Պրոֆ.-դոկտոր Ռ. Աբրահամյանը դեռևս իր երիտասարդական տարիներից մանկավարժական աշխատանքին զուգընթաց զբաղվում էր և գիտական աշխատանքով։ Բաց տիրապետելով մի շարք դասական լեզուների՝ սանսկրիտերենի, հին իրաներենի, պահլավերենի, հին հունարենի, լատիներենի, ինչպես և ժամանակակից լեզուների, նա 1911 թվականից սկսում է «Արարատ» ամսագրում մի շարք հոդվածներ հրապարակել պատմա-համեմատական լեզվաբանության և հնդեվրոպական լեզուների վերաբերյալ։ Իրանում գտնված տարիներին նա թարգմանություններ է կատարում ինչպես պահլավերենից, այնպես էլ պարսիկ դասական գրողներից։ Նրա գիտական հոդվածները լույս են տեսնում հայկական, ինչպես և պարսկական լրագրերում ու ամսագրերում։ Սակայն տատանդական ու տնտեսական անապահով կյանքը արտասահմանում հնարավորություններ չեն տվել

ժրաջան գիտնականին զբաղվելու միայն գիտությամբ և հրապարակելու իր աշխատությունները, որի հետևանքով էլ հաճախ թերի են մնացել նրա գիտական ուսումնասիրությունները:

Սովետական Հայաստանում, չնայած պրոֆ. Ռ. Աբրահամյանի պատկառելի հասակին ու հիվանդ վիճակին, մեծ հնարավորություններ են բացվում նրա համար: Նա այդ տարիներին ավարտում է պահլավերենից հայերեն, ռուսերեն, պարսկերեն և անգլերեն հնգլեզվյան բառարանը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի հանձնարարությամբ կազմում է պարսկերենից հայերեն ու ռուսերեն բառարան: Ներկայումս լեզվի ինստիտուտում են գտնվում պրոֆ. Ռ. Աբրահամյանի այս աշխատությունները:

Հանգուցյալ պրոֆեսոր Աբրահամյանի գործերի հրատարակումը և գիտական հասարակայնության սեփականություն դարձնելը մեծ պատիվ կբերի հայ մշակույթին և խոշոր ավանդ կհանդիսանա արևելագիտության բնագավառում:

Ստորև բերվում է պրոֆ. Ռ. Աբրահամյանի հրապարակված թարգմանությունների, մենագրությունների և անտիպ աշխատությունների ցանկը: Պետք է նշել, որ հանգուցյալ պրոֆեսորի թղթերի մեջ դժբախտաբար չհաջողվեց հայտնաբերել նրա մի քանի անտիպ աշխատությունների ձեռա-

գրերը, որոնք ցանկում ցույց են տրված տառանիշով:

1. Բաբա Թահեր Օրիան Համադանի, Քառյակներ և գազալներ: Թարգմ. պարսկերենից: Թեհրան, 1930:

2. Ֆիրդուսի, Հատվածներ Շահնամեից. Ա. Բահրամ Գուր և Ազադե: Թարգմ. պարսկերենից, Թեհրան, 1934:

3. Ֆերդովսին և իր Շահնամեն: Ա. հատ.: Բանասիրական ուսումնասիրություն: Թեհրան, 1934:

4. Dialectes des Israélites de Hamadan et d'Ispahan et dialecte de Baba Tahir, 1936.

5. رهنمای زبان پهلوی, Ուղեցույց պահլավերեն լեզվի (պարսկերեն լեզվով), Թեհրան, 1937:

6. Սայաթ-Նովայի տաղերը: Ներածությամբ, լեզվի ուսումնասիրությամբ, բառարանով և այլ հավելվածներով ու դիտողություններով: Թեհրան, 1943:

7. Գիտական-հասարակական հոդվածներ հայ և օտար պարբերականներում:

Անտիպ

*1. Պահլավերենի դասագիրք (պարսկերեն) Բ. մաս:

2. Բառարան պահլավերենից հայերեն, ռուսերեն, պարսկերեն, անգլերեն:

3. Բառարան պարսկերենից հայերեն և ռու-
սերեն։

*4. Ձեռնարկ հին իրաներենի։

*5. Օմար Խայամ։ Բանասիրական ուսումնա-
սիրություն։

*6. Ֆերդովսին և իր Շահնամեն։ Բ. Մաս։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ
Առաջաբան Կ. Մելիք-Օհանջանյանի 5
Թարգմանչի կողմից 21
Ներածություն 24
Արտա Վիրազ Նամակ 39
Յուշտի Ֆրիան 115
Ծանոթագրություններ 139
Պրոֆ. Ռ. Աբրահամյան (կենսագրական) 159

Հրատ. խմբագիր Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Նկարիչ Ռ. ՆԱՆՈՒՇՅԱՆ
Տեխն. խմբագիր Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ Ռ. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

ՎՖ 05050, ԽՀԽ 464, պատվեր 124, Հրատ. 1537
տիրաժ 3000։
Հանձնված է արտադրության 14/III 1958 թ.։
Ստորագրված է տպագրության 24/VI 1958 թ.։
Թուղթ 84×108 1/32, տպագր. 10 1/2 մամուլ, հրատարակչական 4.7 մամուլ։ Գինը կազմով 4 ռ.։

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան,
Երևան, Աբովյան 124

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0022478

Գինը 4 ռ.

ЦЕНА
5-767